

ՆԻԿ. ՇՊԱՆՈՎ

ՄԻ ՄԵԾ
ՅԵՎ, ԶԱԽՈՂՎԱԾ
ՄԱՐԴՈՒ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏԱԿԱՆ

087 . 1

Շ - 93

23 JUN 2009






087.1
C-93

ԿՐ
ԶՊՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՆԻԿ. ՇՊԱՆՈՎ

ՄԻ ՄԵԾ ՅԵՎ ԶԱԽՈՂՎԱԾ
ՄԱՐԴՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմ. ուստերենից
Ս. ՍՈՏՆԻԿՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939



9772
39

Н. ШПАНОВ
**История одного великого
неудачника**
Гиз. Арм. ССР. Ереван, 1939 г.

Մ Ս Ս I

1. ՎՈՐՏԵՂ ՅԵՎ ԻՆՉ ԵՐ ՍՈՎՈՐՈՒՄ ՀԵՐՈՍԸ

1669 թվի ոգոստոսն էր: Որը վերջանում էր: Արևը շտապում էր դեպի արևմուտք: Համալսարանի այգու շուրջ ուժասպառ ծառերը զուր եյին զովություն սպասում: Սալորներով ծանրացած ճյուղերը խոնարհվել էին ցած, կարծես խնդրում եյին ազատել իրենց այդ ուժից վեր ծանրությունից: Վաղուց չհնձված խիտ ու բարձր խոտը գերել էր ամբողջ այգին:

Անդորրությունը միայն ճյուղից ճյուղ թռչող ճնճղուկների անհանգիստ ճովողյունն էր խանգարում: Վերջապես ճնճղուկները կարծես գտան այն, ինչ իրենց պետք էր: Յերամն իջավ մի բարձր ճյուղատարած ծառի վրա:

Ծառի տակի բարձր խոտի միջից մի ուսանող բարձրացավ: Տերևների միջից դիտելով նա թափով մի քար նետեց: Ծնճղուկներից մեկը խոտի մեջ ընկավ, իսկ յերամը մեծ աղմուկով թռավ:

Ուսանողը մի մեծ չաղ ճնճղուկ բարձրացրեց գետնից:

— Այ դու խղճուկ, — ասաց ուսանողն ու նրան խնամքով մի շորի մեջ փաթաթեց:

Հազիվ էր թռչունը գրպանը դրել, հանկարծ հետևից լերկու աժդահա մարդիկ բռնեցին նրան: Դրանք այգու պահապաններն էին:

— Ի՞նչ, միթե դուք չգիտեք, վոր սալորներ թափելն արգելվում է, — ասաց պահապաններից մեկը:

— Ստիպված կլինենք ձեզ տանել² պարոն տեսչի մոտ, — ավելացրեց մյուսը:

Ուսանողը կանգնած էր շմած՝ պահապանների անսպասելի հայտնվելուց:

Նա գիտեր, վոր ղեմադրելն իզուր է, և վորոշեց այլ միջոցով ազատվել նրանցից:

— Յերկու սու, — ասաց նա կարճ:

— Քիչ կլինի, պարոն Պապեն, — տատանվելով նկատեց պահապանը:

— Լավ, յերկուական սու յուրաքանչյուրիդ, — վորոշեց գերին:

— Այդ ավելի մոտ է գործին, տվեք դրամը:

— Յեվ թափեցեք ձեր գրպանում յեղած սալորները, — պնդեց յերկրորդը:

Պահապանները զարմացան, յերբ իրենց գերու գրպանից հենց նոր սպանված ճնճղուկն ընկավ միայն:

— Այ խենթ, — ասաց կրտսերը, հեռացող ուսանողի հետևից. — պաշտօն եր ուզում պատրաստել նրանից, թե՞ ինչ: Այդպիսի նախաճաշով դժվար է կշտանալ:

— Դու վոչինչ չես հասկանում, — պատասխանեց մեծը: — Ուսանող պարոնների մեջ կախարդներ շատ կան: Թռչունի փորոտիքների վրա նա կախարդություններ է անելու:

— Հիսուս Քրիստոսը մեզ պահապան:

— Ապա դու ի՞նչ ելիր կարծում: Դրանք բոլորն այդպես են:

Առաջ նման բաների համար խարուչիկ վրա ելին այրում, իսկ այժմ վոչ մի սաստում չկա և ահա շատացել են այդ կախարդները:

Պապենն այդ միջոցին կարողացավ թազցնել իր ճրնճղուկը: Նա ուզում էր հերձել այն, վոր ստուգի թռչունի

ներքին գործարանների նկարագրությունը, վորի մասին հենց նոր էր կարդացել:

Աշխատելով հեռու մնալ վերակացուների աչքից, Պապենն այժմ անցնում էր համալսարանի մուծ և դղրդացող միջանցքներով:

Քարե հաստ պատերի միջով դրսի ձայնն այդտեղ դժվար էր անցնում: Անժերի հին համալսարանի շենքում մեռելային լուծթյուն էր տիրում: Ցուրտ ու խոնավ եր աջնտեղ: Պղտոր ու գունազարդ ապակիներից լույսը հազիվ էր թափանցում:

Համալսարանում վերջանում էին ավարտական քննությունները: Վերջին ուսանողները պաշտպանում էին իրենց ղիսերտացիաները¹: Արդեն մոտ յերկու ամիս է, ինչ շարունակվում են քննությունները և յերիտասարդները յելույթ են ունենում պրոֆեսորական խորհրդի առաջ: Նրանց պատասխանները պիտի ապացուցեն, վոր իրենք միանգամայն յուրացրել են համալսարանական գիտությունները:

Բարձր տեղում նստած են պրոֆեսորները, վորոնք իրենց սև պատմուճանների մեջ փետուրները ցցած ագռավների յեն նմանում: Գլխներին դրված ահագին պարիկները կարծես դարավոր փոշով՝ ծածկված են պուդրայի հաստ շերտով: Ամենակրտսերն այդ գիտնական մարդկանցից հասուն տարուց բավականին անց է: Նրանցից մի քանիսն անկարող են հաղթահարել ծերության քնկոտությունը: Ձեռքերով ծածկել են աչքերն ու հանգիստ քնած են: Մյուսները ձեռնափն ականջին դրած ուշադրությամբ լսում են լատիներեն լեզվով արտասանվող ճառերը... Գիտական շարադրությունների նյութերը վաղուց հայտնի չեն պրոֆեսորներին: Տարիներ շարունակ այդ նյութերը

¹ Դիսերտացիա — շարադրություն, վոր գրվում էր գիտական աստիճան ստանալու համար:

նույնն են: Նրանք կապ չունեն ուսանողի ընտրած մասնագիտութեան հետ: Գիտական շարադրությունների նյութերի մեծ մասն աստվածաբանական բնագրի կամ Արիստոտելի¹ աշխատությունների վորևե նրբությունների ուշադիր ուսումնասիրութունից են կազմված: Արիստոտելի ուսմունքը յերկրագնդի մասին, չնայած իր յերկու հազար տարվա վաղեմությանը, համարվում էր իսկական գիտութեան միակ հիմունքը, և վոչ վոքի չէր թույլատրվում նրա սահմաններից դուրս նայել, առավել յեվս քնննադատել այն:

Բժշկութեան ուսանողները ստիպված էյին մարդու կազմվածքը և առհասարակ ամբողջ բնագիտությունն ուսումնասիրել վոչ թե գործնական հետազոտությունների հիման վրա, այլ խստով հենվելով այդ հին հունական մտածողի բնագրերին: Այն ինչ նրա դատողությունները հեռու էյին իրականութունից: Որինակ, նա պնդում էր, վոր սիրտը մարդու կազմվածքի ներվային գործողութեան կենտրոնն է, վոր լյարդը մարմինը սնող գործարանն է և նման շատ անհեթեթ բաներ:

Բժշկական ֆակուլտետի ուսանող Դենի Պապենն ամբողջ յոթ տարի ստիպված էր անգիր անել այդ հնացած գերիմաստությունը: Համալսարանական գիտություններին Դենին հավատ չէր բնծայում և առաջին իսկ տարիներից դադարեց նրանցով հետաքրքրվել: Բայց հնազանդվեց հոր կամքին, վորն ուղարկել էր նրան Անժեր բժշկի կոչում ստանալու համար:

Այն որը, վորով սկսվեց մեր պատմությունը, Դենին հաջող պաշտպանեց իր ավարտական գիտական շարադրությունը: Մոտ որերում նա պիտի թողներ Անժերը և վերադառնար հայրենի Բլուան, վոր ցույց տար հորն իր բժշկ-

¹ Արիստոտել — հին հունական մեծ փիլիսոփա, ծնվել է 384 թ. մեր թվականությունից առաջ:

կական դիպումը: Դենին սարսափով էր մտածում իրեն սպասող բժշկական ասպարեզի մասին: Նա ավելի ու ավելի համառորեն միջոցներ էր վորոնում նրանից ազատվելու համար, վորպեսզի կարողանա նվիրվել իր սիրած ֆիզիկային: Սակայն ամեն անգամ, յերբ նրան թվում էր, թե գտել է արդեն յեղքը, Դենին հիշում էր Անժեր մեկնելուց առաջ հոր ասած բարի յերթի վերջին խոսքերը:

Ահա թե ինչ ասաց ծեր համբարակը¹:

— Իր ժամանակին գիտություններն ինձ մեծ հոգս չեն պատճառել, բայց դուք ստիպված կլինեք գլուխ կոտրել նրանց վրա: Նոր ժամանակներ են մոտենում: Փարիզում ազդեցիկ բարեկամներ չեն մնացել, վորոնց կարողանայի հանձնել ձեզ: Վախենում եմ, թե այնտեղ յեղած ծանոթների յերաշխավորությունները բավական չեն լինի արքունիքը մտնելու համար: Յես չեմ կարող ձեզ տալ վոչ տիտղոսս, վոչ էլ ժառանգական զինվորական փառքը: Խորհուրդ կտալի ձեզ գիտություններով զբաղվել: Նրանք սկսում են մոդա դառնալ: Արքաները սիրում են ցույց տալ, վոր հովանավորում են գիտությունները: Բայց վորովհետև վոչ միապետները, վոչ էլ նրանց մերձավորները չեն հասկանում, թե ինչ են անում պարոն գիտնականները, ուստի և միշտ կարելի յե նրանց ձեռքը դնել մի ձեռագիր, վորը գրոշի արժեք չունի, բայց զուտ վոսկով է վարձատրվում: Սակայն այստեղ էլ անհրաժեշտ է ուղղում մտցնել. արքաները միայն այն ժամանակ հնարավորություն ունեն հովանավորելու գիտությունները, յերբ նրանք դրամ ունեն, իսկ այդ հաճախ չի լինում: Այդ պատճառով էլ գիտություններից իբրև ամենահաստատունը՝ յես կգերադասեյի բժշկությունը: Վոչ թե այն պատճառով, վոր մարդկությունը կարիք է զգում ձեր մատուցած բժշկական ծառայութեանը: Ո՛, վոչ, այլ վորովհետև բոլոր

¹ Ինտենդանտ:

գիտնականներից բժիշկներն ու աստղագետներն են կա-
րողանում հասնել արքայի ննջարանին: Իսկ այնտեղ Ֆրան-
սիայի բախտն է վորոշվում: Հոգնան¹ ճարպիկ գործածելը
սովորելով, դուք անհրաժեշտ մարդ կդառնաք և այն ժա-
մանակ ձեր բախտն ապահովված կլինի: Դուք հարուստ կլի-
նեք և կկարողանաք նույն իսկ ազդել Ֆրանսիայի բախտի
վրա: Միթե արքայի ստամոքսի վիճակից կախված չե պե-
տության բախտը:

Այժմ բժշկական դիպլոմը գրպանում, համալսարանից
մեկնելով, Դենին հիշեց հայրական այդ խրատը:

Բլուայից հոր կառեան եր յեկել Դենին տուն տանելու
համար: Յերբ դռնակը փակվեց և դղրդոցով բարձրացավ
վտանառողը, Դենին թվաց, թե ընդմիջտ փակվեց նրա
հետևից դեպի ազատ կյանքը տանող դուռը: Անճոռնի
կառքը յերկաթապատ անիվներով անցավ Անժերի փողոց-
ներով: Դենին վերջին անգամ ազահուլթյամբ նայում եր
տներին ու հին յեկեղեցու մոայլ պատերին:

Շուտով արդեն հին դղյակի տասնութ աշտարակներն
եյին միայն յերեվում, վորոնք արծվաբնի նման կախվել
եյին քաղաքի կղմինդրե կտուրների վրա: Բլրին գտնվող
այդ դղյակը գերիշխում եր Անժերի վրա: Ամրոցի աշտա-
րակները յերեվում են հեռվից. սև մատերի նման բարձ-
րանում են նրանք դեպի կապուտակ յերկինքը և հիշեց-
նում են այն մոտիկ անցյալը, յերբ անժուլյան² դուքսերն
իրենց պատկանող գավառը կառավարում եյին այդտե-
ղից:

Անիվներն ավազի վրա խշխշացին: Սալերի միջից
կկլաց ջուրը: Կառեան անցավ Ոտին գետակը: Այստեղ

¹ Կլիզմա:

² Անժու — Ֆրանսիայի մարզերից մեկը, վորի գլխավոր
քաղաքն եր Անժերը:

կամուրջ գոյություն չուներ: Գարնանը, յերբ գետակը
վարարում եր, ճամբորդները շաբաթներով ապրում եյին
պանդուկում ու համբերությամբ սպասում եյին, վոր ջուրն
իջնի: Կառապանի շտապեցնող դրդումով բարձր ափի
վրա ձիերը դուրս քաշեցին ծանր կառքը: Յերիտասարդ
ճանապարհորդի առաջ բացվեց Լուարայի լայն տեսա-
րանը: Հզոր գետը դանդաղ թավալում եր իր ջրերը, վո-
րոնք առատ հոսանքով կտրում եյին ամբողջ Ֆրանսիան՝
սկսած Լանգեդոկից մինչև Բրետանը:

Ճանապարհը Լուարայի ափով եր անցնում, վորը վեր-
ջին անձրևից հետո դեռ չեր չորացել: Անիվների լայն
շրջանակները շուտով շաղախվեցին ցեխի գնդերով: Փըր-
փրակալած ձիերը դժվարությամբ եյին դուրս քաշում ծանր
կառքը ջրով լի փոսերից: Յեթե աշունն սկսված լինեք
և կարգին անձրևներ գային, միայն ձի նստած կարելի եր
տուն հասնել: Արքայական կառավարության հոգատարու-
թյունն այնքան հեռու չեր տարածվում, վոր ճանապարհ-
ների մասին մտածելին: Ելի լավ եր, վոր տեղական համայնք-
ները հարևան գյուղերի հետ կապ պահպանելու համար
տեղ-տեղ խարխուլ կամուրջներ եյին շինել: Ֆրանսիական
ճանապարհների վրա կառուցումները մեծ մասամբ սահմա-
նափակվում եյին փողոցների խաչմերուկների վրա
սուրբ կույսի արձանի համար շինված ծածկերով: Կոպիտ
ներկած տիրամոր պատկերը, ինչպես համոզում եյին քա-
հանաները, հոգում եր ճանապարհորդի անվտանգության
մասին: Սուրբ կույսը պիտի պաշտպաներ ճանապարհոր-
դին այն բազմաթիվ ավազակախմբերից, վորոնք տեր ու
տնորեն եյին դարձել այդ ճանապարհների վրա:

Արդեն մթնել եր, յերբ հառան Տուր: Ինչպես վայել
եր աղնվականի և խոշոր աստիճանավորի վորդուն, Դենին
իջեվանեց քաղաքի ամենալավ հյուրանոցում: Սակայն այդ
չազատեց նրան տանջանքներից: Լվերի և ագահ ու սոված

փայտոջիւնների անհաշիւ յերամներ թափվեցին իջնանոցի վրա: Դենին աչք փակել չկարողացավ և առավոտյան ճանապարհ ընկավ հոսալով, վոր կառեաում քնից կկշտանա:

Նա քաղցր քնած եր, մոռացած բոլոր հոգսերն ու սպասելիք հանդիպումը հոր հետ. այդպես քնով կանցներ ամբողջ որը, յեթե կառքը չսկսեր առանձնապես ուժեղ թափահարել: Կառքը թեքվեց գլխավոր ճանապարհից: Նեղ, միջգյուղյա ճանապարհը դուրս գալով, նա սկսեց ավելի սարսափելի փոսերի մեջ ընկղմվել, քան անցածներն ելին: Դենին աչքերը բացեց և ճանաչեց հայրենի տեղերը: Ճանապարհը վորովում եր բլուրների լանջերի զառիվայրերի վրա գտնվող խաղողի այգիների մոտով: Շուտով կառքը դղրդաց քարե լեռկար կամուրջի բարձր կամարակապ սրահի տակ: Այդ հինավուրց կամուրջը հռվմեական տիրապետութւյան հեռավոր անցյալից եր ժառանգութուն մնացել Բլուռ քաղաքին: Ահա դադարեց սմբակների դոփշունը և կառքը ուղացավ Բլուռի չալարկած փողոս փողոցներով: Յերկու կողմերի վրա յերևացին փոքրիկ խանութներն ու արհեստանոցները: Նրանց դռների վրա աչքի ելին ընկնում գույնզգույն գրերով զարդարված տախտակները: Վոմանց մոտ ել յերկար ձողի վրա կախված հսկայական մեծությամբ յերկարաճիտք կամ հասարակ փայտե սաբո¹ կոշիկներն ելին ցուցանակի տեղ, ծառայում: Զուր չեք Բլուռն հնուց հայտնի, վորպես կոշիկ մատակարարող ամբողջ Ուրլեաններին:

Վոտնատեղերից և հետևի սոնակից կախված տղաների աղմուկի տակ կառքն անցավ քաղաքի միջով: Մի ժամից հետո նա բարձրանում եր դեպի սարահարթը, վորտեղից ձորն ելին նայում Պապենյանների կարմրին տվող կղմինդ-

¹) Սաբո—Բելգիայի և Ֆրանսիայի գյուղացիների փայտե կոշկատակ ունեցող յերկարաճիտք կոշիկներ:

ըյա տանիքները՝ կայսերական համբարակ Պապենի ագարակը:

Դենին իր հորն անկողնում պառկած գտավ: Յերիտասարդը հագիւլ նրան ճանաչեց: Նա հիշում եր իր հորն ամուր կազմվածքով, լիարյունությունից կարմիր դեմքով: Այժմ նրա առաջ բարձրի վրա կիսապառկած եր չորացած մի ծերուկ: Դեմքը քամած նարնջի յեր նմանում, թուլացած կաշին դեղին ծալքերով կախվել եր պարանոցը փաթաթող բմբուլե թաշկինակի վրա: Սուր ուսերը կախարանի ծայրերի նման ձգում ելին նրա բամբակած խալաթը: Չնայած վոր ոգոստոսի հրաշալի յերեկո յեր, ծեր համբարակը խալաթի վրայից փաթաթված եր տաք վերմակով: Վոտներին յերկարաճիտք տաք կոշիկներ եր հագել:

Հիվանդությունից ուժասպառ՝ մաղձոտ ծերուկը հուզված փնթփնթաց.

— Ինձ հարկավոր ե մի լավ բժիշկ: Ձեր գալն իսկ ժամանակին կլինեք, յեթե դուք նստատակ չունենայիք վորքան կարելի յե շուտ մեռցնել ինձ՝ Պապենյաններին տիրանալու համար: Ափսոս, վոր դուք չեք կարողանա փոխարինել այդ ծեր ավանակ՝ բժիշկ Կոկանդին, վորը թունավորում ե ինձ իր զգվելի դեղերով: Բարեբախտաբար յես դեռ հասկանում եմ, վոր մի բաժակ գինին նրա դեղերից ավելի ոգտակար ե, ուստի և շատ ուշադրություն չեմ դարձնում նրանց վրա:

Դենին վշտացած ու տարակուսանքով լսեց ծերուկի կծու խոսքերը, վորոնք ամեն րոպե ընդհատվում ելին խալոտ հագով: Յերիտասարդ բժիշկը դժվար կացութւյան մեջ եր ընկել: Նա չեք ուզում իր ատելի բժշկութւյնն սկսել, բայց տեսնում եր, վոր չի կարող թողնել հորը գավառական տգետ բժշկի հոսով, վորը կախարդական խմիչքներ ե հրամցնում: Փոքր տատանումից հետո նա ասաց.

— Հայրիկ, յեթե դուք համաձայնվելիք լսել միայն ինձ և կատարել ալն, ինչ յես ձեզ կասեմ, պատրաստ եմ ձեզ բժշկելու, կարծում եմ, վոր մի ամսից հետո

դուք նորից կհագնեք ձեր համազգեստը և կգնաք ձեր պաշտոնատեղը, այնպես, կարծես վոչ մի բան պատահած չլինի:

Ծերուկը ձևանալով իբր թե շարունակում և դեռ բարկանալ, հպարտությամբ դիտում էր յերիտասարդ բժշկի խոշոր ու կտրուկ դիմագծերը: Մեծ քթի կեռության, սև աչքերի լայն զրվածքի և մսալի ուղիղ շրթունքների տակ գտնվող ծանր կզակի մեջ ծեր համբարակը ճանաչում էր ինքն-իրեն յերիտասարդ հասակում:

2. ՀԵՐՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԳՈԼՈՐՇՈՒ ՌԻՅՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Դենին սկսեց բժշկել հորը: Հոգու խորքում նա հույս ուներ, վոր ծերուկի սիրտը շահած կլինի և թուլյալովություն կստանա վերջ տալու իր բժշկական գործունեությունը:

Հարկադրական արձակուրդի ազատ ժամանակը Դենին վորոշեց ոգտագործել այնպես, վոր կարգա և զբաղվի իր սիրած գիտություններով: Բլուսնում կար բավականին լավ գրադարան: Այնտեղից մաթեմատիկայի, ֆիզիկայի և մեխանիկայի մասին մի կույտ գրքեր բերեց: Նրա ձեռքն ընկավ նաև վոմն Սոլոմոն դե Կոյի գիրքը: Հեղինակը նկարագրում էր փորձերը զանազան գործիքների հետ և նույն թվում՝ ջուրը բարձրացնելու փորձերը: Այդ գրքի մեջ գրված շատ բան արդեն հայտնի էյին Դենին, բայց մի քանի նոր բաներ էլ գտավ նա այնտեղ: Դե Կոն բավականին մանրամասն նկարագրում էր, թե ինչպես պետք է բարձրացնել ջուրը գոլորշու ոգնությունը:

Պապենը խնամքով արտանկարեց դե Կոյի գրքից զժազիրը և փոքր ինչ մտածելուց հետո կարգադրեց, վոր ձին թամբեն: Յերկու ժամից հետո նա արդեն Բլուսնումն էր վորտեղ: Վորոնում էր քաղաքում հայտնի պղնձագործ Ժուրոյին:

Յերեք որ շարունակ Դենին համարյա բոլորովին գուրս՝ չեկավ Ժուրոյի արհեստանոցից, ոգնելով վարպե-



Պլնձն անոթն ամուր կասկարայի վրա ամրացվեց:

տին կատարելու բոլորն այնպես, ինչպես ցույց եր տալիս գծագիրը: Հոգնած, բայց գոհ նա վերադարձավ դղյակի իսկ նրա հետևից ժուրոն բերեց պղնձե փայլուն բալոնը:

Յերբ արգեն առողջացող համբարակը ծառաների ոգնությամբ դուրս յեկավ ալգին և բազկաթոռի վրա տեղավորվեց, տարրերինակ տեսարան բացվեց նրա առաջ. յերիտասարդ բժիշկը վտաքից մինչև գլուխ կեղտոտված, ծնկների վրա սողում էր գետնին: Նա ոգնում էր ժուրոնին քաղաքից բերած բալոնը սարքելու: Պղնձե բալոնը յեռոտանու վրա ամրացրին, մեջը ջուր լցրին և տակը կրակ վառեցին: Դենին վերևի ծորակը բացեց, ապա նստեց հոր կողքին և սպասում էր կրակի ներգործությանը: Բացի Դենիից վոչ վոք չգիտեր, թե ինչ է կատարվելու: Համբարակը փնթփնթում էր: Նրան թվում էր, թե իր վորդին դատարկ բանով է զբաղված:

Անցավ համարյա մի ժամ, բայց կրակի ներգործումը դեռ չէր նկատվում:

— Ձեր անհեթեթ կաթսան, պարոն,— փնթփնթում էր համբարակը,— այնքան վատ է սարքված, վոր նրա մեջ նույնիսկ ջուրը չի յեռում: Իմ խոհանոցի կաթսաներն ավելի լավ են աշխատում:

Վիրավորված Դենին մի խտիտ ծղոտ գցեց կրակի վրա: Պայծառ բոցի սյունը պատեց բալոնը: Ուղղաձիգ խողովակի վերևի անցքից հանդիսատեսների սպասած գոլորշու փոխարեն ջրի շիթ յերևաց: Սկզբում թույլ, հետզհետե ուժեղացավ: Յերբ Դենին նորից ծղոտ ավելացրեց, ջրի շիթը տափն արմունկի բարձրության շատրվան խփեց: Այստեղ նույնիսկ համբարակը չհամբերեց և իր հիացմունքը հայտնեց:

— Յես լսել եմ, վոր այդպիսի բաներով զվարճանում են թագավորները, բայց չեյի կարծում, թե կհասնեմ այն որին, յերբ իմ սեփական այգում շատրվան կտեսնեմ:

Ջուրը քանի գնում, ավելի բարձր էր խփում: Յայտող տաք ջրի կաթիլներն անձրևի նման թափվում էին ամբողջ դղյակից այնտեղ հավաքված հանդիսատեսների վրա: Համբարակի բազկաթոռը ստիպված էյին հեռու քաշել այդտեղից: Բայց հանկարծ ջրի բղխումը միանգամից դադարեց և խողովակից սուլոցով գոլորշին դուրս թռավ: Դենին մոտ վազեց խարուկին և փայտերն այս ու այն կողմ ցրեց. նա հասկացավ, վոր ջրի մակարդակը խողովակի անցքից ցած է իջել:

Համբարակը գլուխը շարժեց:

— Զվարճալի ձեռնածուծյուն է, պարոն, բայց յես չեյի ուզի, վոր նման դատարկ բաները շեղեյին ձեզ իսկական գիտությունից:

Դենին գոհ մնաց առաջին փորձից: Նա համոզվեց, վոր գոլորշու ուժն իրոք վոր կարող է ջուրը բարձրացնել: Այժմ նրան հետաքրքրում էր հետևյալ հարցը, թե՞ դե կոյի առաջարկած միջոցով ինչ բարձրության կարելի չե հասցնել ջուրը: Դենին ամբողջ գիշեր նստած հաշվում էր այդ, իսկ առավոտյան նորից գնաց նույն ժուրոյի մոտ՝ նոր ապարատ պատվիրելու: Սա նույն ձևի բալոն էր. միայն ուղղաձիգ խողովակը, վորից ջուրն էր բղխում, Դենին առաջվանից ավելի յերկար արավ:

Շատ ժամանակ նա կորցրեց խողովակի յերկարության անհրաժեշտ չափը հաշվելու վրա, վերջը ձեռք քաշեց ալգ բանից: Մաթեմատիկան անգոր էր ոգնելու նրան: Վորոշեց տարբեր յերկարության խողովակներ փորձարկել:

Իտալական գիտնական Տորիչելլու փորձերին ծանոթ Դենին հասկանում էր, թե վորպեսզի բալոնի մեջ ջրի մակերեսի վրա գոյացող գոլորշին կարողանա բալոնից ջուրը դուրս մղել, անհրաժեշտ է, վոր նա հաղթահարի մթնոլորտի ճնշումը, գումարած ուղղահայաց խողովակի

մեջ գտնվող ջրի սյունի ճնշման հետ:

Ապա ուրեմն ինչ ուշտ պետք է ունենա ջրի գոլորշին, ինչպիսի ճնշում կարող է հաղթահարել նա և ինչպիսի ջրի սյուն կարող է դուրս մղել խողովակից:

Յերեկոյան ջահերի լույսի տակ նոր բալոնի հետ փորձ կատարվեց: Նորից հավաքվեց հանդիսատես բազմութունը:

Դենին ինքնավստահ հայտարարեց, վոր այս անգամ ավելի յերկար խողովակի միջից ջուրն առաջվանից բարձր է խփելու:

Բոլորն անհամբեր սպասում էին: Դենին խտիսներով ծղնոտ եր ավելացնում կրակին, բայց չնայած այդ ջանքերին, ջուրն առաջվանից բարձր չեր խփում: Այդպիսով դե Կոյի գործիքի գործնական նշանակությունը Դենիե կարծիքով շատ մեծ չեր: Չէ՞ վոր այդ միջոցով ջուրը զգալի բարձրության վրա հասցնելու համար ստիպված պիտի լինեին այդպիսի գործիքների մի շղթա գնել և ջուրը հետևողաբար մեկից մյուսը մղել: Այդպիսի միջոցն անհետաքրքիր թվաց Պապենին: Նասկսեց գրել մի հոդված Սոլոմոն դե Կոյի դեմ:

Դենին լերեխայինման ուրախանում եր, վոր ինքը քննադատությամբ հանդես է գալու գրքի մեջ տպվածի դեմ: Նա ծածուկ ծիծաղում եր, վոր պարոն գիտնական դե Կոյի դատողությունները կհերքվեն իր՝ Դենի Պապենի կատարած փորձի հիման վրա: Յերիտասարդ հեղինակը վոգեվորվել եր իր հոգվածով: Նա աշխատանքն ընդհատում եր միայն մոմի պատրույգի այրուցքն ուղղելու համար: Նա բոլորովին մոռացել եր, վոր արդեն ուշ է և հարկավոր է քնել:

Դոյակը քնած եր: Վերջապես, հոգնածություն զգալով, Դենին ցած դրեց գրիչը և մոտեցավ լուսամուտին: Լուսնի լույսի շերան ամպերի ստվերներով եր կտրտվել և թվում եր, թե ամբողջ այգին շարժվում է:

Ծառախոբերը մերթ լուսավորվում էին, կարծես բարձրանալով հակայական մի ալիքի կատարի վրա, մերթ նորից անհայտանում՝ ընկղմվելով խորը մթության մեջ: Դենին հետաքրքրությամբ դիտում եր, թե ինչպես լույսն ու ստվերն իրար հաջորդելով, բուռն շարժման մի տպավորություն եյին ստեղծում: Հանկարծ այգուց խլացուցիչ մի պայթյուն լսվեց: Դենին ցնցվեց և լուսամուտից հետ դատկեց: Հարևան սենյակից, վորտեղ քնած եր հայրը, ջարդված ապակու ձայն և դղրդոց լսվեց: Դրան հետևեցին տխուր հառաչանքներ: Դենին վազեց հոր մոտ: Յերբ այնտեղ հավաքված ծառաները լույս արին, Դենին տեսավ, վոր սենյակում անկարգություն է տիրում, լուսամուտի ապակիները ջարդված են, շրջանակները կոտրտված, հոր մահճակալի գլուխը փշուր-փշուր եր լեղած, իսկ համբաբակը ահից կանաչած, հատակի վրա պառկած է: Ծերուկը հառաչում ու հայհոյանք եր թափում:

— Այսպես եք ձեր ծեր հորը բժշկում: Դուք վորոշել եք սպանել ինձ ձեր դժոխային արարքներով:

Լուսամուտից ներս ընկած և այդքան դժբախտություն պատճառած արկը վորոնելիս՝ Դենին յերևան հանեց պղնձե թերթի մի կտոր, վորը պատի փայտի անկյունակալի մեջն եր ցցվել: Դենին գլխի ընկավ, վոր դա իր բալոնի կտորն է:

Չհասկանալով, թե ինչ կարող եր պատահած լինել, նա վազեց այգի: Նրա գործիքից բան չեր մնացել: Ոջախի տեղը պայթյունից քանդված փոս եր առաջացել, իսկ հողի միջից ցցվել էին խորը մեխված յեռոտանու յերկաթե ձողերը:

Ծառաներին հարց ու փորձ անելուց հետո Դենին պարզեց, վոր պահապանը, վորին գիշերվա անհաջող փորձից հետո պատվիրել էին ամեն ինչ հավաքել, կրակը չեր հանգցրել: Այնինչ, փորձից հետո Դենին փակել եր բալոնի վերևի ծորակը: Մնում եր լեռնադեր, վոր դուրս

գալու հնարավորութիւնն զրկված գոլորշին, վորը շարունակում եր տաքանալ, այնքան ուշժ եր կուտակել, վորքան բավական եր պղնձե ամուր բալոնը պայթեցնելու համար: Կարծես ճիշտ եր այդպիսի յենթադրութիւնը, սակայն պատահած փորձանքը Դենիին հանելուկ թվաց: Վորտեղից եր գոլորշին այդպիսի ավերում կատարելու ունակութիւն ստացել:

Դենին հիշեց, վոր ինչ-վոր մի տեղ կարգացել է անգլիական մարկիզ Վորչեստերի՝ գոլորշու ուշժն ուսումնասիրող աշխատութիւններէ մասին: Նա իր գրքերի մեջ գտավ մարկիզի գրվածքները և խորասուզվեց ընթերցանության մեջ: Շուտով նա գտավ այն եջերը, վորտեղ մարկիզը նկարագրում եր, թե ինչպես Լոնդոնի բանտում իր բանտարկութեան ժամանակ ստիպված եր կերակուր պատրաստել իր համար: Վորպեսզի տավարի պինդ միսը լավ չեփի, Վորչեստերը կափարիչով ամուր ծածկում եր կաթսան և կափարիչի վրա աղյուս եր դնում: Յեւ ահա մի անգամ, ինչպես ասում ե մարկիզը, նա տեսաւ, վոր կափարիչը վեր թռավ ու անհայտացավ բուխարու ծխնալույզի մեջ: Այս հայտարարութեան ճշմարտութիւնը մնում ե հարգելի մարկիզի խղճի վրա, սակայն այդ չեր հետաքրքրում Դենին: Նրա համար կարեւորն այն եր, վոր այս դեպքը բացատրելու համար Վորչեստերը բանտից դուրս գալուց հետո մի շարք փորձեր նախաձեռնեց: Այդ փորձերի թվում նա կատարեց հետեւյալը: Վերցրեց հին բրոնզե թնդանոթ, վորի վրա փոքրիկ ճեղքվածք կար, թնդանոթի փողը ջրով լցրեց, իսկ փողաբերանին մետաղե ամուր խցան պնդացրեց: Թնդանոթի տակ կրակ վառելով մարկիզը սկսեց տաքացնել այն:

Ժամերն անցնում էին իրար հետեւից, սակայն ջեռուցման վոչ մի հետեւանք չեր նկատվում: Բարեբախտաբար մարկիզի համբերութիւնը մեծ եր: Զեռուցման քսան-

յերեքերորդ ժամին ուժեղ պայթիւն ատաղացավ: Թնդանոթը պայթել եր գոլորշուց: Բանից դուրս չեկավ, վոր գոլորշու ճնշումն այնքան մեծ եր, վոր կարողացավ հաղթահարել բրոնզե թնդանոթի հաստ պատերը:

Այժմ ամեն ինչ հասկանալի դարձավ Դենիի համար: Նա միանգամայն վստահ վերաբերվեց Վորչեստերի հետազա մտքերին, վոր ասում եր, թե մի անոթ գոլորշիացած ջուրն ընդունակ ե քառասուն նույն տեսակ սառը ջրով լի անոթներ բարձրացնելու:

Դենին յերկար ժամանակ նստած եր Վորչեստերի գրվածքի հաստ հատորի ուսումնասիրութեան վրա: Նա չնկատեց, թե ինչպես արդեն կեսօրը մոտեցել եր: Մըտքերով զբաղված՝ նա չլսեց Բլուայի սուրբ Նիկողայոսի յեկեղեցու մեծ զանգի ձայնը:

Կալվածատանն արդեն բոլորն արթնացել էին: Սենյակի դուռը բաղխեցին: Ծառան հայտնեց, վոր պարոն համբարակը նախաճաշի յե հրավիրում յերիտասարդ պարոնին: Դենին թոթափեց իր վրայից ընդարմացումը և զժկամորեն գնաց հոր հրավերին:

Հալըը մոայլ ու կենտրոնացած նստած եր սեղանի մոտ: Նա այնպես եր ձեւանում, իբր թե չի նկատում վորդուն: Դենին լարված սպասում եր բացատրութեանը: Ոգի մեջ նա փոթորիկ եր զգում: Յերկյուղը սրտում հարց տվեց.

— Ինչպես եք ձեզ զգում, հայրիկ:

Համբարակը մի պտորվակի յեր սպասում, վոր խոսի:

— Ձեզ հետաքրքրում ե իմ առողջութիւնը: Արդյոք ձեզ չեմ պարտավոր, վոր այս գիշեր արաքոցով ու դըրըդոցով քիչ ֆուսց յերկնքի արքայութիւնը ներս խոժեփի, ինչպես վերջին սկանդալիստ: Առանց ապաշխարանքի, առանց հոգու հանգստի՝ ստիպել բարի քրիստոնյա ազնվականին վերջին ճանապարհն ընկնել: Վատ ծառայութիւն

չէ՛ վորդու կողմից։ Բավական ե, վորքան զբաղեցրիք ինձ
 ձեր աչքակապություններով։ Ի՞մ վերջին և վճռական խոս-
 քըս ե. յերկու որ եմ տալիս պատրաստվելու համար։
 Դուք կմեկնեք Փարիզ և իբրև բժիշկ կներկայանաք այն
 մարդկանց, վորոնց անունով յես ձեզ հանձնարարական
 նամակներ կտամ։ Յե՛վ այն որը, յերբ ինձ լուր կհասնի, թե
 դուք նորից ձեր հիմարություններովն եք զբաղվում, յես
 կզրկեմ ձեզ ժառանգությունից։ Այդպես ել իմացեք։ Ահա
 այն, ինչ յես ուզում եյի ձեզ ասել։ Մնաք բարով։



Յերկար կաշեբաճկոնով և բարձրաճիտք կոշիկներով Դենին
 բավականին մարտական տեսք ունեւր։

3. ՀԵՐՈՍԸ ՄԵԿՆՈՒՄ Ե ՓԱՐԻԶ

Ջուր եյին Պապենի բոլոր ջանքերն ու խնդիրները,
 վոր ծերունին փոխի իր վորոշումը։ Նա հաստատ կանգ-
 նած եր իր ասածի վրա։ Յերրորդ որվա լուսաբացին մի
 թամբած ձի յեր բերված դոյակի մուտքի սանդուխքի մոտ։
 Մի բեռնած ձի համեստ ուղեբեռով և յերկու հեծյալ ծառա-
 ներ պիտի ուղեկցեյին յերիտասարդ բժշկին։

Մնում եր նստել թամքի վրա և մնաս բարով ասել
 հայրենի տանը։ Յերկու ատրճանակ և հոր նվիրած յեր-
 կար սուսերը Դենիի ամբողջ գենքն եյին կազմում։ Կաշվե
 յերկար բաճկոնով և բարձրաճիտք կոշիկներով նա բավա-
 կանին մարտական տեսք ունեւր։ Անդեն չեյին նաև ծա-
 ռաները. մեկի ձեռքին հին պատրույգավոր ծանր հրա-
 ցան կար, մյուսի մեջքի վրա ճոճվում եր նիզակը։

Սպառազինումն ավելորդ չեր։ Ճանապարհները վրի-
 տում եյին ավազակներով։ Ամենից ավելի այդ ավազակ-
 ները լինում եյին կարիքից իրենց գյուղերը թողած
 գյուղացիները։ Հողն ալլես անկարող եր կերակրել նրանց։
 Բերըը հաղիվ եր բավականացնում կալածատերերի վար-
 ձավճարներն ու պետական հարկերը վճարելուն։ Առանձ-
 նապես ծանր եր հուզենոտները՝ դրությունը։ Նրանց
 անախորժություն պատճառելու համար պետությունը բո-
 ղոքականների քաղաքներն ու գյուղերը զորքեր եր ու-
 դարկում՝ ախտեղ ոթեանելու։ Հեծյալ գնդերի խառապան-
 ներն ավերում եյին ամբարներն ու մառանները։ Պարոն
 սպանների ձեռքից վոչխոզն եր փրկվում, վոչ ել հորթը։ Շատ
 քիչ հավ կարելի յեր տեսնել գյուղացիների բակերում։

¹ Հուզենոտներ — Ֆրանսիայի բողոքականներն են։
 Նրանց կրոնական բողոքի հիմքն եր ֆեոդալական արիստոկրա-
 տիայի և բուրժուազիայի մի մասի դժգոհությունը թագավորի
 անսահմանափակ իշխանության դեմ։

Նորին մեծության զինվորներն ամեն ինչ հափշտակում ելին: Խեղճ գյուղացիները զինվորների ոթեանելուց կորցնում էին այն ամենը, ինչ չէին կարողացել գրավել կալվածատերերն ու թագավորական հարկահանները: Այս հանգամանքը հարկադրում էր գյուղացիներին լքել իրենց դաշտերը: Նրանք խմբեր էին կազմում և դասալիք զինվորների առաջնորդութամբ թալանում էին թե հեծյալ և թե փոքրով անցնող ճանապարհորդներին:

Այդ պատճառով ել ճանապարհորդութունն այդ տեղերում, փորն անվտանգ չեր նույնիսկ ցերեկը, գիշերներն առանց զինված սպահակախմբի ուղղակի անհնարին էր դառնում:

Այս բոլորի մասին Դենին շատ քիչ տեղեկություն ուներ: Նրան շատ զարմացրեց Ուլեան գավառի ավերված տեսքը: Յեթե ծառաների աղաչանքը չլիներ, փորոնք վախենում էին մութն ընկնելուց հետո քթները փողոց դուրս հանել, ինչպես և ձիերի հոգնածությունը, Պապենն անգամ գիշերելու համար կանգ չեր առնի ճանապարհին: Նա զգվում էր կեղտոտ պանդոկներից և իշկանատների միջատներից վխտացող անկողիններից:

Յերկինքը մռայլվում էր: Անձրև էր սպասվում: Ծառաները շտապում էին հասնել մինչև Րամբուլյե, փորը վերջին կայանն էր Փարիզ հասնելու համար: Պապենը շտապեցնում էր իր հոգնած ձիուն:

Արդեն մութն էր, չերբ մտան Րամբուլյե: Ծառաները նախորոք ճաշակում էին գալիք հանգիստը: Սակայն հենց առաջին քաղերը ճանապարհորդներին համոզեցին, փոր նույնիսկ ագնավականը, յեթե նա զինվորական չէ, տեղական պանդոկատերերի հյուրասիրության վրա հուսալ չի կարող: Բոլոր պանդոկներն ու իշկանատները լցված էին: Թագավորական գործառնին Վերսալ¹ մեկ-

¹ Վերսալ—Լյուդովիկոս XIV-ի Փարիզի մոտ գտնվող շքեղ պալատը:

նող դրագունական գունդն այստեղ հանգստի չէր իջևանել: Դինեաների դահլիճները լցված էին սպաներով: Ծխի ու կերակուրների գոլորշու մեջ նրանց դեմքերը չէին յերևում: Ողախներում ճրթճրթում էր ճարպը: Հարբեցողների աղաղակների ու բռնկվող վորոտալից ծիծաղի միջից անագե գավաթների ու կոշիկաթանների շխշխկոցն էր լսվում:

Յերբ Պապենը ներս մտավ դահլիճ, նրան թվաց, թե շնչասպառ է լինելու: Քրտնած հագուստի, թամքերի ու քրտնքաքաշերի գարշ հոտը, թափված գինու գոլորշիացումը և թունդ ծխախոտի խեղդող հոտը, բոլորն իրար խառնված, մի անտանելի գարշահոտութուն էին տարածում: Դենին փորոշեց, փոր ինքն այստեղ չի մնա: Մանավանդ, փոր ծառաներից մեկը յեկավ և հայտարարեց, փոր փոշ մի փունջ խոտ և փոշ մի հատիկ վարսակ չի կարողացել գտնել ձիերի համար: Շուրջը մի լյո տարածության վրա բոլոր ամբարներն ավերված էին դրագունների կողմից:

Այս բոլորը ստիպում էր Դենին անհապաղ շարունակել ճանապարհը: Նա ծառաների բողոքներին փոշ մի ուշադրութուն չդարձրեց և կարգադրեց ձիերը թամքել:

Յերեք ճանապարհորդները, դուրս գալով իշկանատան բակից, ընկղմվեցին խավարի մեջ:

Լուսինը ծածկված էր ամպերով: Ուժեղ, կտրուկ քամին սկսվող անձրևի կաթիլներն էր քշում: Այնուհետև խավարն ալնպես թանձրացավ, փոր ձիերը մանր վարդով պիտի քշեյին, և հետո ել հանդարտ քալով, ապա թե փոշ գլուխ կկտարեյին այդ խորդուբորդ ճանապարհի վրա: Անձրևը հետգհետե ուժեղանում էր:

Դենին համարյա ուշադրութուն չեր դարձնում վատ յեղանակի վրա: Նա յերասանակը բաց թողեց ու վերարկուի մեջ փաթաթվեց: Շատ չանցավ, յերկնքից սկսեց գետի

նման ջուր թափվել: Այս ծանր ճանապարհորդության ճախորդություններէից վրդովված, ծառաները փնթփնթում եյին: Սակայն Պապենը վոչ ծառաների շլուտանքն եր լսում, վոչ ամբակների շրմփոցը ցելի մեջ, վոչ ցուրտ քամին, վոչ ել զգում եր թրջված վերարկույի ծանրությունը: Նրա մտքերը շարունակ նույն բանի շուրջն ելին պտտում. բժշկական կարյերան, վորը զոռով վզին եր փաթաթել հայրը, անխուսափելի յեր: Կհաջողվի՞ արդոք չսիրած բժշկությամբ պարապելիս մեջընդմեջ ժամեր պոկել զօրորշու ուշի խնդիրներն ուսումնասիրելու համար:

Հանկարծ Պապենի մտքերն ընդհատվեցին: Ճանապարհի վրա նրանց առաջ հուսահատական ճիչ լսվեց: Կրակոցի կարճ փայլն ու դղրդոցը ճեղքեցին գիշերվա խավարը:

— Հետեցեք ինձ, — գոռաց Պապենն ու խթանեց ձիուն: Միաժամանակ հանեց ատրճանակը, մտադրվելով հարձակվել առաջին հանդիպողի վրա, վոր դուրս կգա նրա առաջ այդ դժոխային խավարի միջից: Բայց պետք չեղավ կրակելու: Պապենի ձին սրընթաց արշավի ժամանակ հանկարծ կանգ առավ ու ծառս յեղավ: Մի վայրկյան ևս և ձին հեծվորի հետ միասին ընկնելու ելին ճանապարհի մեջտեղը շրջված կառետի վրա: Պապենն իրեն թամբի վրա պահել չկարողացավ և ձիու գլխի վրայով թռավ ու զարկվեց կառքի վերնակին: Բայց նա իրեն չկորցրեց. անմիջապես վտարի կանգնեց և ատրճանակն արձակեց մթության մեջ շտապ հեռացող մարդկանց վրա:

Դենին կանչեց իր ծառաներին, բայց նրանց հետքն ել չեր լերևում: Նրա ուղեկցորդներն աւթող ուժով հետ եյին փախչում: Այդ միջոցին շրջված կառքից թանձր ու խռովոտ թավ ձայն լսվեց: Մեկը գոռում եր ու հայհոյում: Պապենը կառքի լուսամուտից ներս նայեց, բայց մթության մեջ վոչինչ չկարողացավ տեսնել:

— Ի՞նչ եք այդտեղ լերկար մտածում, — գոռում եր ճանապարհորդը, — շոտ եք ինձ կրակ տալու, թե վոչ: Ե՛յ ժան, Ծրանսուա, ուր եք:

Այդ կանչին խավարից լերկու հոգի լերևացին. հավանորեն խուճապելով, հենց դրանց վրա յեր Պապենը կրակել: Դրանք կառքի մեջ թրպրտացող ճանապարհորդի ծառաներն ելին:

Բոլորը միասին աշխատում ելին բանալ կառքի դռնակը, վոր ազատեն մարդուն, բայց սալաթափքը ծովել եր և կառքը բանալ չհաջողվեց: Այդ միջոցին նաև Պապենի ծառաները լերևացին և հալտարեցին, իբր թե իրենք ավաղակներին եյին հետապնդում: Վիճելու ժամանակը չեր: Դենին ձևացրեց, վոր հավատաց այդ ստին: Ապա կարգադրեց ծառաներին բարկացկոտ ճանապարհորդի մարդկանց հետ միասին անիվների վրա կանգնեցնել կառքը: Պարզվեց, վոր ճանապարհի լայնքով ընկած գերանն եր յեղել նրա շրջվելու պատճառը թալանչիներն այդ ձևով ելին կառքը կանգնեցրել: Միայն Դենիի հայտնը վելը խանգարեց նրանց ոգավելու իրենց հանցափորձն պտուղներից:

Վերջապես լապտերի լույսի տակ ճանապարհորդին կառքից դուրս հանեցին. նա վոչ մի բույն չեր դադարում հայհոյելուց: Դենին չերբ տեսավ նրան, հաղիվ զսպեց իր ծիծաղը: Նրա առաջ կանգնած եր կարճահասակ, բայց արտասովոր հաստության մի մարդ, վորի կլոր գնդաձև մարմինն լամբողջովին ցելաթաթախ եր: Դիմագծերը չեր կարելի ջոկել: Ամբողջովին կավաթաթախ, նա զայրուլթի պոռթկումից չեր ել փորձում մաքրվել կեղտից: Ծառաներին ել լավ հասավ: Նրանց հետ հաշիվը տեսնելուց հետո միայն հաստ մարդը վորոշեց շնորհակալություն հայտնել իր փրկարարին: Տնքալով ու ծա-

նըր հեալով նա մոտեցավ այս տեսարանը զիտող Պապենին:



Ուղևորն ամբողջովին կալաթաթախ եր:

— Ո՞վ եք դուք, պարոն: Յես հուսով եմ վոր գործ ունեմ ազնիվ ծագում ունեցող մի մարդու հետ և, առանց նսեմացնելու ազնվական պատիվս, կարող եմ հայտնել ձեզ իմ շնորհակալությունս: Ուրախ կլինեմ հիշել ձեր հասցեն, վոր Փարիզ հասնելուն պես այցելեմ ձեզ ավելի պատշաճ տեսքով:

— Ավանդ, պարոն, չես փարիզեցի չեմ և ինքս ել չգիտեմ, թե վորտեղ եմ իջնելու:

— Ուրեմն դուք գավառացի՞ լեք. վոչինչ, ավելի

լավ: Գեներալ լեյտենանտ դը Ֆուլենիսսարը, վորին դուք տեսնում եք ձեր առաջ,—այս ասելով հաստ մարդը փքված, ձեռքերը կողքերին կանթեց,—կարող ե առաջարկել ձեզ իր հյուրընկալութունը: Սակայն ում հետ պատիվ ունեմ խոսելու:

Դենին հայտնեց իր ազգանունը:

— Պապեն, սուրբ աստվածածին. ազգական չեք արդյոք այն Պապենին, վորը մի ժամանակ թագավորական մուշկետավոր զորքումն եր ծառայում:

Ուրախացած հաստ մարդը չթողեց նույն իսկ, վոր Դենին հաստատի նրա լենթադրությունը: Նա հիշեց այն ժամանակները, յերբ Դենիի հոր հետ միասին մուշկետավոր (հրացանավոր) զորքում յերկուսն ել դեռ հասարակ սերժանտ ելին: Սոսակցությունը վերջացավ նրանով, վոր նա իր կառքում տեղ առաջարկեց Դենիին: Փրկվածն ու փրկողը միասին շարունակեցին ճանապարհը դեպի Փարիզ: Վերջապես հոգնած իր շատախոսությունից, գեներալը սկսեց քաղցր փնջացնել ու գլուխը Դենիի ուսին թեքելով՝ հանգիստ քուն մտավ:

Արդեն լուսանում եր, յերբ Պապենն անձրևի քողի միջից տեսավ Փարիզի առաջին տները: Նա ուզեց դուրս գալ կառքից, բայց Ֆուլենիսսարը գլուխը նրա ուսին դրած դեռ շարունակում եր այնպես քաղցր խոմփացնել, վոր լերիտասարդը սիրտ չեր անում արթնացնել նրան: Դենին սահմանափակվեց նրանով միայն, վոր իջեցրեց կառքի լուսամուտը, վորպեսզի ավելի լավ կարողանա դիտել մայրաքաղաքը:

4. ԳԵՆԵՐԱԼԻ ՀԵՏ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆ ՈԳՈՒՏ Ե ԲԵՐՈՒՄ

Փարիզում Դենին հաստ մարդուն հաճախ այցելող հյուր դարձավ: Իր Ֆուլենիսսարը, Պապենի հոր հին բարեկամը, չնայած վոր նույնպես հուզենուտ եր, կարողացել եր հասնել գեներալ-լեյտենանտի աստիճանին: Լքելով մարտի

դաշտերը, նա հրճվում եր մայրաքաղաքի կամուրջների և հանրային շենքերի գլխավոր հսկիչի պաշտոնում — ալլ կերպ ասած՝ նա փոշինչ չեր անում:

Ըստ լերեվութին գեներալը և նրա կինը միանգամայն չեղին հետաքրքրվում, թե կյանքի ինչ ճանապարհ կրնարի իրենց նոր ծանոթը: Նրանց չեղին հետաքրքրում յերիտասարդի ապագայի ծրագրերը: Դենին ել իր կողմից չեր շտապում ներկայացնել հոր նամակները, փորոնց մեջ հայրը խնդրում եր արքունիքում բժշկական ծառայություն գտնել իր փորդու համար:

Դեներալուհու սալոնում հայտնվելիս յերիտասարդը շատ քիչ ուշադրություն եր իր վրա գրավում: Վոչ փոքի չեր հետաքրքրում մի գալառացի, փոր մասնակից չեր լինում մայրաքաղաքի պճնամոլների բամբասանքներին: Դենին փոչ բամբասանքներ գիտեր, փոչ ել պալատական նորություններ, իսկ գեներալուհու հյուրերին այդ եր միայն հետաքրքրում:

Դենին լերեվի այնպես աննկատելի լել կանհետանար գեներալական սալոնից, ինչպես և հայտնվեց ախտեղ, յեթե միանգամ վկա չլիներ հյուրերի միջև բացված վեճին: Վեճի պատճառ հանգիստացավ Վան Հյուլգենսի նոր հրատարակված գիրքը: Այդ գրքի մեջ հուշակավոր Ֆիզիկոսը հայտնում եր վերջին ժամանակներում հայտնաբերված Մատուրնի ողակի վրա կատարած իր վերջին գիտողությունների մասին: Սալոնի պճնամոլներն սկսեցին իրենց անմիտ գաղաղությունները հայտնել Հյուլգենսի գրվածքի վերաբերյալ: Պապենը չհամբերեց և մասնակցեց այդ վեճին: Նման համարձակութուն փոչ փոք չեր սպասում լերիտասարդ գալառացուց: Հյուրերը սկսեցին ծաղրել նրան: Տանտիրուհին խեթ-խեթ հայացքներ եր գցում հանդուգն գալառացու վրա: Այս վեճը կարող եր կատարյալ խայտառակությամբ վերջանալ Դենիի համար, բայց այդ միջոցին հյուրասենյակը մի նոր հյուր մտավ:

Դենին տեսավ վայելչակազմ մարդուն: Նրա զգեստն աչքի յեր ընկնում արտասովոր գեղեցիկությամբ ու շքեղությամբ: Գլուխը գեղեցիկ զարդարված եր Դենին զարմացնող մեծության պարիկով: Ուշագրավ ելին նաև նոր հյուրի վարվելաձևերը: Կարծես առանձին ջանացողությամբ նա կշռադատում եր իր ամեն մի շարժումը և հիանում իր նրբագեղությամբ: Ներս մտնելով հյուրասենյակը, հյուրը խորը բարև տվեց տանտիրուհուն, նույնիսկ ռեվերանս արեց, այնպես, ինչպես պահանջում եր արքունիքի մոզան: Միևնույն ժամանակ վեր բարձրացրեց ու իր շուրջը լայն պտտեց մի փունջ փետուրներով զարդարված իր գլխարկը: Այդքանը բավական եր, փոր Պապենը թշնամանք տածեց դեպի այդ պճնամոլը: Յեվ հանկարծ նրա ականջին հասան տանտիրուհու խոսքերը:

— Ախ, ի՜նչ ժամանակին եք լեկել, պարոն Հյուլգենս. հենց նոր ձեր գիրքն եր այստեղ քննադատվում:

Ինչպե՞ս: Ուրեմն մետաքսե ու թավջա զգեստով զարդարված մոզայամոլն այն գիտնական Ֆիզիկոսն ե, փորի գրքերով հափշտակվում եր Դենին դեռ համալսարանում լեղած ժամանակ: Ուրեմն այս զարդարված պճնամոլն ե լույսի ալիքային տեսություն ստեղծողը, ճոճանակավոր ժամացույց հնարողը և հայտնի աստղագիտակ հորինողը: Դենին չեր հավատում իր ականջներին: Արդյոք ինքը չէր սխալ լսել: Բայց փոչ մի կասկած լինել չեր կարող: Հյուրերից մեկի մտքովն անցավ ցույց տալ նրան այն յերիտասարդին, փորը ծիծաղելի դատողություններ եր անում նրա գրքերի մասին: Հյուլգենսը Պապենի վրա ուղղեց իր լորնետը: Պճնամոլները հաճույքից ձեռքերը թրորում ելին յերիտասարդ հանդուգն գալառացու անհարմար գրությունը նախատեսելով: Դենին գիտեր, փոր փոչ փոք նրան չի պաշտպանի: Սակայն նրա մեջ զայրույթ եր բարձրանում այդ դատարկ գլուխների դեմ: Զգվելի դարձավ և ինքը, Հյուլգենսը, փորը նույնպես դատարկ, փոտերը քստքստացնող պալատականի տպավորություն

եր թողնում, ինչպես և մյուսները: Դենին չհամբերեց և խոսեց, յեռանդուն պաշտպանելով իր հայեցակետը Հյուլզգենսի գլուտի մասին:

Այն միջոցին, յերբ Պապենը խոսում էր, Հյուլզգենսի դեմքը հետզհետե ավելի յեր լրջանում. արհամարհական ժպիտն անհայտացավ: Հենց վոր հուզված Պապենն իր ճառը վերջացրեց, Հյուլզգենսը կտրուկ վոտքի յելավ և ասաց.

— Հարգելի պարոն, յես հիացած կլինեյի, յեթե այս յերկրում գանվեր ելի մի մարդ, վորն ընդունակ լիներ այնպես ճիշտ հասկանալու ինձ, ինչպես դուք եք հասկացել:

Ի գարմանս բոլորի, հայտնի ֆիզիկոսը մոռանալով իրեն շրջապատող տիկիներին և կավալերներին, մոտեցավ գավառացուն, թևից բռնեց, ու հեռացավ նրա հետ հյուլրասենյակի հեռու անկյունը, վորտեղ նրանց չեյին խանգարի հյուրերի խոսակցությունները: Ամբողջ յերեկո միշտ միասին եյին տեսնում նրանց: Այդ խոսակցությունները հյուրերից և վոչ մեկը կրկնել չեր կարող, վորովհետև վոչ վոք չեր հասկանում: Խոսակցությունն ինչ-վոր գիտական առարկաների մասին եր, վորոնց անուններն անգամ հաճախ անհայտ եյին շրջապատողների համար:

Հեռանալիս Հյուլզգենսն առաջարկեց Պապենին ճանապարհին շարունակել զրույցը:

Հյուլզգենսը հետ ուղարկեց մուտքի մոտ իրեն սպասող կառքը և վոտքով ճանապարհվեց, վոր յերկարացնի զրույցը: Զրույցով տարված նոր ծանոթները յերեք անգամ անցան թագավորական գրադարանի մոտով, վորտեղ ապրում էր Հյուլզգենսը: Նրանք հրաժեշտ եյին տալիս իրար, մոռանում այդ մասին և նորից վիճում:

— Յես ձեզ հետ համաձայն չեմ, — ասում էր Դենին, — ինձ թվում է, վոր բնության ուժերը հարկավոր ե ուսումնասիրել այն բանի համար, վոր նրանց հաղթահա-

րելով՝ ծառայեցնեն մարդու կարիքներին: Տեսեք, դուրըշու ույժն աչնքան մեծ է, վոր ընդունակ է պալթեցնել թրնդանոթը: Ուրեմն, միթե չի կարելի ոգտագործել այն. ստիպել նրան բարձրացնել ջուրը, կամ պալթեցնել հողը, կամ, վերջապես, ծանրություններ տեղափոխել:

— Ախ, յերիտասարդ պարոն, — պատասխանեց Հյուլզգենսը, — բանը միայն դուրըշու ույժը չէ: Հսկայական չափերով ոգտակար և մարդու կյանքն ավելի հարմար ու հաճելի դարձնող գլուտեր կարող եյին տալ գիտնականները. սակայն այդ բոլորովին նրանց գործը չէ: Գիտնականներն ամենից առաջ պետք է հոգատար լինեն իրենց գիտության և վոչ թե մարդկանց ստոր շահերի համար:

— Դուք ուզում եք, վոր գիտնականները նույնպես անոգտակար լինեն հասարակությանը, ինչպես մեր ձրիակեր ազնվականներն են, — տաքացած բացականչեց Պապենը:

— Բայց ինչո՞ւ ձրիակերներ: Գիտնականներն ոգուտ են բերում: Պալատների այգիներում նրանք շատրվաններ են կառուցում, բախտացույցեր են կազմում, յերկնային լուսատուներն են ուսումնասիրում, յերբ կապ են վորոնում նրանց և միապետների ու մեծատոհմ ազնվականների մեջ: Վերջապես գիտնականները թագավորներին ու նրանց մերձավորներին զբաղեցնող բազմաթիվ դատարկ բաներ են հնարում:

— Ապա մարդկության ոգուտը: Այդ յես չեմ տեսնում:

Հյուլզգենսը ծիծաղեց:

— Վճր մարդկության մասին եք խոսում դուք: Մեզ համար պալատներով և ակադեմիաներով ե սահմանափակված այդ մարդկությունը: Միայն թագավորներն ու միստրներն են կարող դրամ տալ մեր վորձերի համար: Միայն նրանք կարող են տանելի կյանք ապահովել մեզ

համար: Հետևապես առաջին հերթին հենց նրանց պետք է ծառայենք: Նրանց քմահաճույքները մենք պիտի կատարենք, վորպեսզի հնարավորութիւն ունենանք այդ զվարճութիւնների հետ, մեջ ընդ-մեջ, իսկական գիտութեամբ ևս զբաղվել: Մենք չեյինք կարողանաւ այն հսկայական գյուտներն անել, յեթե չզբաղվեյինք պալատականներին ուրախացնելով: Միայն դրա համար են մեզ լիարժեք վարձատրում:

Պապենը, վոր գիտնականների իսկական դրութեան մասին վոչ մի գաղափար չունէր, դժվար էր հասկանում Հյուլզենսի խօսքերը: Գիտնականների հանգիստ աշխատանքն ապահովելու համար յերկիրը բաժանելն հարուստ էր թվում նրան. Ձե՛ վոր նա լսել էր, թե ինչ հսկայական գումարներ է ծախսում թագավորն իր արքունիքի և զվարճութիւնների վրա. ուրեմն Ֆրանսիան ունի միջոցներ:

Հյուլզենսը միայն ծիծաղում էր միամիտ խոսակցի վրա: Ճիշտ է այդ, թագավորը քիչ չի ծախսում: Որինակ, նրա նոր պալատը Վերսալում համարյա արդեն հարյուր միլիոն լիվր¹ արժե. այսինքն Ֆրանսիայի մի տարվա բոլոր պետական ծախսերից չորս անգամ ավելի: Այդ պալատի կառուցման վրա աշխատում են քսաներեք հազար բանվորներ: Միայն շատրվանները Վերսալի այգում արդեն յերկու միլիոն են նստել: Թագավորի տեսակետից այդ ամենեվին ել շատ չէ: Ձե՛ վոր իր զգեստները զարդարող ազամանդների և արքունիքի տիկնանց նվերների վրա վերջին տարվա ընթացքում ուղիղ նուշքան է ծախսվել: Սակայն այդ ամենեվին ել չի նշանակում, վոր նորին մեծութիւնը ցանկութիւն ունի այդ գումարների թեկուզ մի հարյուրերորդը ծախսել գիտնականների աշխատանքների վրա: Թագավորը մեծ ոգուտ չի տեսնում մաթեմատիկայի և մեխանիկայի մեջ, իսկ թագավորի հաս-

¹ Լիվր — ֆրանսիական հին դրամ:

կացողութիւնը բժշկութեան մասին տգրուկներէից, շերմաթրջոցներից և հոգնայից հեռու չի գնում: Արքունիքի բժիշկներն այդ միջոցներով են փրկում նորին մեծութեան կյանքը հողատապից և փոքրկապութիւնից:

Դենին պատասխանեց, վոր այդ դեպքում գիտնականները մյուս դասակարգերի մեջ պիտի աջակցութիւն վորոնեն: Ձե՛ վոր կգտնվեն այնպիսի մարդիկ, վորոնք շահագրգռված կլինեն գիտնականներին ոգնելում: Վերջնեք թեկուզ նույն Հյուլզենսի ժամացույցը: Միթե այդ գյուտի վրա կատարած աշխատանքին չեյին ուղի աջակցել վաճառականները:

— Տարրինակ մարդ էր դուք, — ասաց Հյուլզենսը, — արդյոք չէ՞ք ուզում այն աստիճան ստորացնել գիտութիւնը, վոր այն ծառայութեան դնէք խանութպաններին: Յես ժամացույցը հնարել եմ վոչ նրա համար, վոր ալլուրավաճառներն իմանան, թե յերբ սկսեն առևտուրը: Զուտ գիտութեան և ազնվական գասակարգի վայելքի համար ես հնարել յես իմ ճոճանակավոր մեխանիզմը:

— Սակայն ժամացույցից կոգտվեն նաև խանութպանները, — համառորեն կրկնեց Պապենը: — Յես գրազ եմ գալիս ձեզ հետ: Յեթե յես մի տաս տարուց հետո չհնարեմ սայլ կամ նավակ, վորը գոլորշու ուժով շարժվի և վորի համար վաճառականներն ինձ հարստացնեն, ապա դուք կարող եք պահանջել ինձնից, ինչ կամենաք:

— Ձեր միամտութիւնը սահման չունի: Յեթե դուք, թեկուզ ամենայերևելի, առանց ձիերի շարժվող կառք հնարելիք, վոչ վոք, բացի թագավորից, նրանով ոգտվել չեր կարողանա: Դուք ըստ յերեմութին չգիտեք, վոր արհեստավորների ամեն մի արհեստակցական միութիւն և վաճառականների ամեն մի գիլդիա այս կամ այն իրերն արտադրելու և վաճառելու արտոնութիւնն ունի: Այդպիսի արտոնութիւն ունեն նաև սայլապանները: Սայլապանների միութիւնից բացի վոչ վոք իրավունք չունի ամենաանպետք յերկանիվ կառք

անգամ շինելու: Յեթե դուք փորձեք այդ անել՝ ձեզ ան-
միջապես բանտ կնստեցնեն:

— Դուք սարսափելի բաներ եք պատմում, վարպետ:

— Իսկ դուք, կարծես, լուսնից եք ցած ընկել, չգի-
տեք այն, ինչ վոր ձեր շուրջն է կատարվում: Ահա ձեզ
որինակ: Աքաղաղ վաճառողներն իրենց արտոնությունն
ուենեն. մի խոհարարապետ համարձակվեց իր ճաշարանում
տապակած ամբողջ աքաղաղներ ծախել: Ինկատի ունեցեք,
տապակած, բայց չկտրտած: Այդ ուրինակին հետևեցին նրա
ընկեր խոհարարապետները, յենթադրելով, վոր այդպիսով
կկարողանան զանց անել աքլորավաճառների մենաշնոր-
հը: Բայց ավագ. աքլորավաճառներն ամբողջ Փարիզով մեկ
աղմուկ հանեցին: Այդ հանդուգն խոհարարապետն, ահա
արդեն վեցերորդ տարին է, բանտ է նստած, ու զեռ
դատարանը քննում է աքլորավաճառների և խոհարարա-
պետների վեճը: Իսկ յես, ճիշտն ասած, կարծում եմ, վոր
նա հենց բանտումն էլ կմեռնի: Դատավորները յերբեք չեն
կարողանա այդ գործի վճիռը կայացնել: Բավական է, վոր
մի կողմն ավելի մեծ կաշառք տա դատավորներին, քան
տալիս է հակառակ կողմը, և ամբողջ դատավարությունը
նորից կսկսվի: Ուրեմն ահա իմ խորհուրդը. յերբեք չկա-
ռուցեք և չհնարեք վոչ մի անյալիսի բան, վորը պիտի շուկա
դուրս գա և վաճառքի առարկա դառնա, ապա թե վոչ դուք
բանտ կնստեք: Հավատացեք, դատական աղվեսներն առիթ
կգտնեն նստացնելու ձեզ, յեթե այդ ձեռնտու յե նրանց,
վորոնց կողմից վարձատրվում են դատավորները:

— Այդ չի կարող պատահել: Ոգտակար գյուտը միշտ
կգտնի իր ճանապարհը կյանքի մեջ:

— Տա աստված, վոր դուք չհիասթափվեք այդ հա-
մոզման մեջ, — ասաց Հյուլզենսը, վերջացնելով զրույցը:

Նրանք հինգերորդ անգամ մոտեցան գիտնականի բնա-

կարանի մուտքին: Արդեն առավոտ էր: Գաղաքն արթ-
նանում էր: Ժամանակ էր բաժանվելու:

Յեվ ահա այն, ինչի մասին չեր կարող յերագել Պա-
պենը, կատարվեց ինքն իրեն: Հյուլզենսն առաջարկեց նրան
միասին աշխատել: Հյուլզենսը նույն իսկ խոստացավ հա-
ջողեցնել Պապենի համար լաբորատորիայի աշխատակցի
պաշտոնը Ակադեմիայի ֆիզիկական լաբորատորիայում,
վոր ինքն էր ղեկավարում: Հյուլզենսը շատ հավանեց յե-
րիտասարդին: Նրան գրավեցին Պապենի շիտակ և համար-
ձակ դատողությունները: Նա տեսավ, վոր Դենին շատ
կարգացած է, լավ գիտե ֆիզիկան և մաթեմատիկան
ու իր համար հրաշալի ոգնական կարող է լինել: Այդ-
պիսի աշխատակից հարկավոր էր Հյուլզենսին իր փոր-
ձերը կատարելու մեջ, իսկ ինքը ժամանակ չեր ունենում:
Նա ստիպված էր շատ ժամանակ նվիրել դատարկ բանե-
րին, վորոնց համար արքունիքում գրամ, աստիճաններ և
պարգևներ էյին տալիս: Իսկ Հյուլզենսն այդ բոլորի սի-
րահարն էր: Այդ բանի համար էր յեկել հայրենի Հոլլան-
դիայից Ֆրանսիական միապետի փալտուն արքունիքը՝ Արե-
զակ թագավոր Լյուդովիկոս Տասնչորսերորդի մոտ:

Շուտով արդեն Պապենն սկսեց աշխատել Ակադե-
միայի ֆիզիկական լաբորատորիայում: Դենին ուրախու-
թյամբ աղբի արկղը գցեց հոր այն նամակները, վորոնք
հանձնարարում էյին իրեն ազդեցիկ փարիզեցիներին, իբրև
բժշկության ծառայողի: Նա հույս ուներ՝ ել յերբեք դուրս
չբերել իր բժշկական դիպլոմը:

5. ԹԵ ԻՆՉՊԵՍ ԲԺԻՇԿԸ ԴԱՌՆՈՒՄ Ե ՖԻԶԻԿՈՍ ՅԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒՄ Ե ՆՈՐ ԱՍՊԱՐԵՋՈՒՄ

Միասին կատարած կարճատև աշխատանքից հետո
Հյուլզենսը լիովին գնահատեց իր յերիտասարդ ոգնակա-
նին: Նրանց մեջ ամենամտերիմ հարաբերություններ հաս-

տառվեցին վոչ միայն աշխատանքի վայրում, այլ և մասնավոր կյանքի մեջ: Հոլլանդական գիտնականը, վորը բարեկամներ չունեն Փարիզում, խիստ մտեղմացավ Պապենի հետ և շուտով առաջարկեց նրան տեղափոխվել այն շենքը, վորտեղ ինքն եր ապրում և վորտեղ գտնվում եր նրա լաբորատորիան:

Պապենը համոզվեց, վոր իր առաջին տպավորութունը Հյուլզենսից սխալ եր: Հոլլանդացին թեպետ և սիրահար եր շքեղության, պճնվելու և շխկշխկան բաների, սակայն իսկական գիտնական եր: Պապենը տեսավ, վոր իրականության մեջ Հյուլզենսն այնքան ել չեր տարվում արքունիքի կյանքով, ինչպես թվում եր սկզբում: Ակադեմիկոսի կապը պալատականների և գլխավորապես իրեն հովանավորող առաջին մինիստր Կոլբերի հետ գիտական աշխատությունների համար դրամ հայթայթելու միջոց եր միայն:

Դենին նույնպես սերտ կապվեց իր ուսուցչի հետ: Նա սովորեց հասկանալ Հյուլզենսի մտադրությունները խորությունը: Զարմանալի արագությամբ ըմբռնում եր նրա գաղափարները: Հյուլզենսը բավական եր վոր հետաքրքրվեր վորեւս առարկայով, Դենին ինքնուրույն գտնում եր այդ փորձի մեթոդը և կառուցում եր ապարատներն նրա համար: Շուտով արդեն նա սկսեց ինքնուրույն կերպով պատասխանատու հետազոտություններ կատարել: Բավական արագ վորոշվեցին Պապենի սեփական գիտական շահադրրոցությունները: Նա ամբողջովին կլանվեց պնեմատիկային¹ վերաբերվող փորձերով: Ողի ճնշման ուսումնասիրությամբ զբաղվելով՝ նա խնդիր դրեց իր առաջ՝ արագ և պարզ ձևով ողահանում ստեղծել: Նրան գրավեցին գերմանական հայտնի Ֆիզիկոս Ոտտո Փոն Գերիկեյի փորձերը, վոր նա կատարել եր ողահանված կիսագնդերի վրա: Ամբողջ Յեվ-

րոպայում արագ տարածվեց այդ լուրը «մագդեբուրգյան կիսագնդերի» մասին, վորոնց տասներկու ձիեր չէյին կարողացել իրարից բաժանել: Գերիկեյի կառուցած պոմպն ուսումնասիրելով՝ նա ձեռնարկեց իր սեփական պոմպի ստեղծմանը: Այդ գործի մեջ շատ շուտ հաջողություն ունեցավ:

Պարզվեց Պապենի աշխատանքի հիմնական ուղղությունը: Վոչ մի հետազոտություն և վոչ մի փորձ նա չեք կատարում լոկ փորձի համար: Ամեն մի նոր հայտնագործման մեջ Պապենը միշտ տեսնում եր նրա մեջ թագցրած գործնական կիրառման հնարավորությունը: Այսպես, որինակ, իր առաջին պոմպերի վրա աշխատելիս նա յերազուս եր այն մասին, թե կարող ե պատահել, վոր իրեն հաջողվի այդ ճանապարհով ոգտակար աշխատանք կատարող մեքենա ստեղծել: Այդ բանի համար ուղեց մթնոլորտի ճնշումն ոգտագործել: Նա կարծում եր, վոր այդպիսով կկարողանա ծանրություններ բարձրացնել և ջուր հանել:

Գալիլեյի հանճարեղ աշակերտ Տորիչելլիի փորձերից, նաև Գերիկեյի և Բոյլի փորձերից, Հյուլզենսի գիտողություններից և իր սեփական հետազոտություններից Պապենն արդեն գիտեր, վոր յերկրագունդը շրջապատող ողը մեծ ուժով ճնշում ե նրա վրա: Որինակ, մարդու լարմինը մթնոլորտի այնպիսի ճնշում ե կրում, վոր յեթե այդ ճնշումը մարմնի ներսից նույն ուժով ներգործեր, ինչպես դրսից, մարդը կձգմվեր, բլիթի նման կտափականար: Զե՛ վոր Գերիկեն, յերբ իր առաջին կառուցած կիսագնդերից ողը հանեց, նրանք սղմվեցին մթնոլորտի ուժից, վորովհետև բավականաչափ դիմացկունություն չունեյին: Տորիչելլին լրիվ ակներևությամբ ապացուցեց, վոր այդպիսի ճնշում կրում ե ամեն մի մարմին: Նա սովորեցրեց չափել այդ ճնշումը: Պապենը համոզված եր, վոր կարելի յե սովորել ղեկավարել այդ ճնշումը: Այդ բանի համար, Պապենի կարծիքով, հարկավոր եր վոչնչացնել այն հակա-

¹ Պնեմատիկա — այն ժամանակներն այդպես կոչվում եյին գազերի ճնշման փորձերը:

ճընշումը, վոր ողն ինքն իրեն ե ցույց տալիս: Այլ խոսքով ասած՝ հարկավոր ե սովորել զատարկութուն ստեղծել: Այդ դեպքում կարելի կլինի ոգտագործել մթնոլորտի մեջ յեղած հսկայական եներգիւն, վորն առայժմ իզուր կորչում ե: Պապենին թվում եր, թե վոչ մի բարդ բան չկա այդ նպատակին հասնելու մեջ:

Սակայն իրականութիւնը հերքեց Պապենի կարծիքը: Նա ստիպված եր յերկու տարի շարունակ հոգեմաշ փորձեր կատարել, նախ քան կարողացավ փոքր ի շատե բավարար արդւոնքներ ի հասնել: Իր փորձերի նկարագրութիւնը Պապենը հրապարակեց մի հոդվածում, վորի անունն եր՝ «Անող տարածութեան վրա կատարած նոր փորձերի մասին»:


Յերիտասարդ գիտնականի կողմից մամուլի մեջ հանդես գալու առաջին փորձն եր այդ: Գիտնականների աշխարհը լսեց նրա մասին: Նրա աշխատութիւնները բոլորի ուշադրութիւնը գրավեցին և գովասանքների արժանացան բնախույզների նոր շկոլայի կողմից: Այդ դեպքից հետո Պապենի գիտական կապերը լայնացան, շատ գիտնականների հետ նամակագրութիւն սկսեց: Նրա հետ նամակագրութեան մեջ մտավ նաև Լայբնիցը: Այդ ականավոր գիտնական փիլիսոփան արդեն աշխարհահռչակ անուն եր ձեռք բերել: Լայբնիցի կարծիքն ուշադրութեամբ լսում եյին, և այն հանգամանքը, վոր նա Պապենի հետ նամակագրութիւն ուներ, խիստ բարձրացրեց Դենիի հեղինակութիւնը:

Ոգտպոմպի վրա կատարած աշխատանքի ամենաբուռն միջոցին, յերբ Դենին գործիքների ամենալավ ձեւերն եր վորոնում, Լայբնիցը նրան խորհուրդ տվեց ոգտագործել այն սխառնումը, վորը հետագայում հայտնի դարձավ ամբողջ աշխարհում «մխոցի և գլանի» սխառնում անունով: Պապենը զնահատեց այդ փայլուն գաղափարը: Նա ան-

միջապես թողեց ամեն ինչ և սկսեց այդպիսի գործիքի կառուցումն իրագործել:

Նա վերցրեց մի ուղղաձիգ, ներքից փակած դատարկ գլանակ B: Այդ գլանակի մեջ դրեց յերկրորդ գլանակը A, վորի դրսի տրամագիծը հավասար եր B-ի ներսի տրամագծին: Յերբ փորձեց ներս քաշել A գլանակը, նա տեսավ, վոր այդ շատ դժվար ե: Հարկավոր եր մեծ ուժ գործադրել այն մի փոքր առաջ քաշելու համար: Գլանակի մեջ յեղած ոգը դիմադրում եր մխոցի շարժմանը: Այդ մխոցը կարծես լողում եր գլանակի մեջ գտնվող ոգի յերեսին: Բաց հենց վոր Պապենը կրան K-ն բացեց, մխոցն սկսեց իջնել: Այդպիսով մխոցը գլանակի հատակին հասցնելով և կրանը փակելով, Պապենը համոզվեց, վոր մխոցը նորից հանել այնտեղից շատ դժվար ե: Դրսի ոգը հսկայական ուժով ճընշում եր մխոցի վրա: Իսկ յերբ Պապենը նորից բացեց կոանը, մխոցի վրայի ու տակի ճնշումը հավասարակշռվեց և մխոցն ազատ կարելի յեր հանել:

Այդ փորձը կատարելուց հետո Պապենն սկսեց խորհել, թե ինչպես ոգտագործի իր կառուցած գործիքը: Նա ուզում եր ստիպել մթնոլորտային ճնշմանն աշխատելու: Շուտով նա հարմարանք հնարեց, վորը բաղկացած եր ճախարակներից, թուկից և մի քանի կշռաքարերից: Թուկը ճախարակների վրա գցելով և նրա ծայրը A մխոցին ամրացնելով, Պապենը սկսեց գլանակից ոգը դուրս հանել: Վնքան նա ուրախացավ, յերբ տեսավ, վոր-



ողի պարպման հետ միտքը ցած է իջնում և իր հետ քաշում է թուղը: Թուկից կապած կշռաքարերը սկսեցին բարձրանալ: Պապենի համար անհրաժեշտ սխեման արդեն գտնված էր:

Հետևյալ նրա խնդիրն էր՝ միտքի տակից ողն արագույնությամբ հեռացնելու միջոց գտնել. նա հասկանում էր, վոր իր սարքավորումը կարող է գործնական հետաքրքրություն ունենալ իբրև բեռնամբարձ մեքենա միայն այն դեպքում, թե միտքի վեր ու վար շարժումներն արագ հաշորդելին միմյանց:

Շատ ժամանակ գործադրեց Պապենն ողապումպը կատարելագործելու փորձերի վրա սակայն նրան չհաջողվեց փոքր ի շատե բավարար հետևանքների համեմատ: Ողապարպումը շատ դանդաղ էր կատարվում: Տեսնելով, վոր անկարելի չե այդ միջոցով բեռը բարձրացնելու արագությունն ավելացնել, գյուտարարը խորամանկություն գիմեց: Նա վորոշեց, վոր հարկավոր դեպքում կարելի չե մի քանի այդպիսի մեքենաներ գործի դնել և նրանցով հերթով ահուել բեռը: Իսկ վորպեսզի ամեն մի առանձին մեքենան արագ բարձրացնի բեռը, նա գլանիկի վերևում առանձին հարմարանք ստեղծեց, վեր բարձրացած գլուխի մեջ միտքը սողնակով դեմ էր առնում, գլանակի միջի ողը պարպվում էր, միտքի տակ ողի նստացույցում էր դրոշմում, իսկ միտքը շարունակում էր մնալ վերևում: Յերբ ողը, ինչպես կարծում էր Պապենը, ամբողջովին պարպված էր, գյուտարարը հանում էր սողնակը: Միտքը տային ճնշման տակ միտքը, վորը գլանակի ներսից ողի ճնշմանը չեր յենթարկվում, թափով ցած էր ընկնում և բեռն արագ բարձրանում էր: Պապենի նպատակն իրագործված էր: Իր գյուտը նա հպարտությունով ցուցադրեց Հյուլզենսին, վորից մինչև այդ թագնում էր իր փորձերը:

Ակադեմիկոսը հիացած էր իր ոգնականի գյուտից:

Նա բաձկոնը հանեց և սկսեց գործիքով զբաղվել: Ամեն անգամ, յերբ սողնակը դուրս էր քաշվում, միտքը ցած էր ընկնում և կշռաքարերը վեր էլին նետվում: Գիտնականները յերեխայի նման ուրախանում էլին: Վորոշվեց անմիջապես սկսել մեծ չափերով նման ապարատի կառուցումը: Պապենը կարծում էր, թե արդեն հաղթել է Հյուլզենսին և կարող է տոնել իր հաղթանակը: Այժմ հուլանդացին կարող էր համոզվել այն բանի մեջ, վոր գիտական հայտնագործումը, վորը կատարվել էր լաբորատորիայում գուտ գիտական նպատակներով, կարելի չե անմիջապես կյանքում ոգտագործել: Արդեն ամենահրապուրիչ պատկերներ սկսեցին յերեվալ Պապենին: Նա պատկերացնում էր, թե ինչպես շինարարական աշխատանքների ժամանակ քարերն ու տախտակները բանվորների ուսերի վրա տեղափոխվելու փոխարեն, նման մեքենաներով կբարձրացվեն: Նա արդեն ծրագրում էր «միտքը տային» ցցահար հնարել՝ ցցերն ամրացնելու համար:

Հյուլզենսն ուրիշ ճար չունեց, բացի նրանից, վոր համաձայնվեց, թե անհրաժեշտ է սկսել մեծ մեքենայի կառուցումը, վորպեսզի գիտնականներին ու պալատականներին ցույց տար այն:

Աշխատանքը յեռաց:

6. ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀԻԱՍԹԱՓՈԻԹՅՈՒՆ ՅԵՎ ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Ապարատի կառուցումն ավելի դանդաղ էր ընթանում, քան հաշվի յեր առել Պապենը: Առանձին մասերի պատրաստելը շատ դժվար էր: Վորպեսզի կարելի լինեց ստիպել, վոր դուրս ողն իր ճնշումով միտքը ներս հրի գլանի մեջ, անհրաժեշտ էր, վոր միտքը շատ կիպ կպած հարմարագրվեց գլանի պատերին: Նրանց միջև ող չպիտի

անցներ: Պարզվեց, վոր այդ այնքան ել հեշտ բան չեր: Այն ժամանակ դեռ չեյին կարողանում ճշտորեն ձուլել այնպես, վոր մխոցի ձևը միանգամայն կանոնավոր լիներ: Դեռ գոյություն չունեյին այնպիսի հաստոցներ, վորոնց վրա հնարավոր լիներ ճշտորեն հարթել գլանի և մխոցի մակերեսները: Ստիպված եյին ձեռքով հարգարել այն:

Այդ աշխատանքների ամբողջ ընթացքում Պապենը քայլում էր մտահոգ և չարացած: Դժվար էր ճանաչել գիտնականին այն յերկարահասակ և նիհարած մարդու մեջ, վորը միշտ մրոտված էր, հագուստի վրա կաղապարելու հողի հետքերը, իսկ ձեռքերն ալրվածքներով ու քերվածքներով ծածկված:

Սակայն, չնայած Պապենի հսկողությանը և անձամբ ցույց տված ոգնությանը, չնայած վարպետների գործադրած ջանքերին, գործը գլուխ չեր գալիս: Յերբ վերջապես մխոցը միանգամայն ճշտորեն հարգարեցված էր գլանին և նրանց պատերի միջև վոչ մի արանք չկար, լերեւի ման յեկավ սարքավորման թերությունը: Մխոցն այնպես ուժեղ էր քսվում գլանի պատերին, վոր մխոցը տալիս ճնշումը չեր կարողանում իջեցնել այն: Բավական էր, վոր մխոցը մի փոքր ծովեր և նա բոլորովին դեմ էր առնում. հարկավոր էր շատ չարչարվել, նորից այն դուրս քաշելու համար: Պապենին վոչինչ չեր մտում, բաց լեթե գիտակցորեն մեծացնել մխոցի և գլանի պատերի միջև յեղած արանքը: Այդպես էլ արին: Սակայն այստեղ տեղի ունեցավ այն, ինչից Պապենը հենց սկզբից վախենում էր: Ողբ սկսեց ձեռքով ներս մտնել և շատ թույլ էր սեղմում մխոցի մակերեսը: Շարժիչը կորցրեց իր հզորությունը և էլ վոչ մի բանի պետքական չեր:

Պապենը հասկացավ, վոր քանի դեռ այդքան անողնական դրության մեջ են արհեստանոցները, մտածել անգամ չի կարելի բարդ ապարատներ ու մեքենաներ

ստեղծելու մասին: Միայն փոքրիկ սարքավորումները կարող եյին գործել: Պապենին թվում էր, վոր ստեղծված դրությունը կրկին անգամ ապացուցում է այն, ինչ իր ժամանակին նա ասում էր. Հյուլզենսին, գիտությունն ոգնության պիտի հասնի պրակտիկային բոլոր բնագավառներում:

Մի թե գիտությունն իրեն չի զրկում իր մտադրություններն իրագործելու հնարավորությունից նրանով, վոր ուշադրության չի առնում մետաղի և փայտի մշակման խնդիրները: Պարզ էր, վոր մինչև գիտնականները չոգնեն վարպետներին մեքենաների մասերը պատրաստելու գործում ամենամեծ ճշտությանը հասնելուն, նրանք չեն կարողանա գործնականում կիրառել շատ գլուտեր ու հայտնագործումներ:

Հյուլզենսը բավականին հանգիստ վերաբերվեց մեքենայի հետ կապված անհաջողությանը: Դրությունը միանգամայն բնական էր համարում: Նա ամենեվին մտադիր չեր գիտության վրա իր ունեցած հայացքը փոխելու: Առաջվա պես նա գտնում էր, վոր գիտնականների բաժինն է լաբորատորիան և կաբինետը, նրանք վոչ մի կարիք չունեն ծխամած արհեստանոցները մտնելու: Թող արհեստավորն ինքը լուծի իր խնդիրները, և յերբ կլուծի, կարող է գալ և ասել, վոր նա պատրաստ է կատարելու գիտնականների պատվերները:

Այսպիսի մոտեցումը հակասում էր Պապենի հայացքներին: Մի անգամ Հյուլզենսի հետ այս հարցն արծարծելիս Պապենն ասաց.

— Մենք կախարդական ողակի մեջ ենք գտնվում: Վորպեսդի կարողանանք բնության թագըրած ուժերն ոգտագործող մեքենաներ կառուցել, անհրաժեշտ է հաստոցներ ունենալ, իսկ հաստոցները շարժման բերելու համար անհրաժեշտ է ուժեղ մեքենաներ ունենալ: Նայեցեք Լայբ-

նիցի հանճարեղ գաղափարին՝ գլանի մեջ շարժվող միտ-
ցին: Սրանով կարելի չէ մթնոլորտը նվաճել: Սակայն
ինչ անենք, յեթե մենք չենք կարողանում միտցի և գլան
կառուցել: Մթնոլորտին տիրելու համար անհրաժեշտ է
կառուցել այդ իրերը, իսկ նրանց կառուցելու համար ան-
հրաժեշտ է մթնոլորտին տիրել: Միթե սա կախարդական
ողակ չէ:

Հյուլգենսն անհոգ պատասխանեց.

— Գործն այնքան ել վատ չէ: Կարիք չկա գլուխ
կոտրելու այդպիսի բարդ պրոբլեմների վրա: Թողեք այդ
փրկիստփաներին, վորոնց իրավունք է վերապահված ամ-
բողջ կյանքի ընթացքում մտածել և վոչ մի բան չհնարել:
Այս անգամ թող նրանք փորձեն զուգորդել գիտությունը
կյանքի հետ:

— Դուք իրավացի չեք: Գյուտարարի նպատակը պի-
տի լինի գլուխը զուգորդել ժամանակակից մարդու կա-
րիքների հետ: Ի՞նչ ոգուտ իմ գյուտից, յեթե նա պետք
չէ ժամանակակից մարդկանց: Ուրեմն գաղափարը ճիշտ
չէ, յեթե անհնար է իրագործել այն: Յերեմի ողով աշ-
խատող շարժիչի համար լիս այլ ուժում պիտի վորոնեմ:
Ըստ յերեմիին իմ լուծումը բավականաչափ պարզ չէ,
կամ ընդհակառակը՝ նա դեռ բավականաչափ կատարյալ
չէ: Սակայն միթե կատարելությունն ու պարզությունը
միևնույն բանը չեն:

— Յես կարծում եմ, վոր ձեր գաղափարը ճիշտ է:
Միտցի տակից հանված ողը հնալավորություն կտա մթ-
նոլորտին հսկայական ուժով շարժել այդ միտցի: Խնդիրը
մանրամասնությունների մեջ է, վորոնք վաղ թե ուշ
կգտնվեն:

— Իսկ յես այժմ սկսել եմ հենց գաղափարի մասին
կասկածել: Ողը հանել: Միթե սա անմտություն չէ:
Միտցի վրա գտնվող դրսի ողը կարծես պիտի սպասի,

մինչև պարոն Պապենն իր գործը վերջացնի պոմպի հետ:
Իհարկե սա անմտություն է: Պարպեցեք ողը վայրկենա-
բար և միտցը ցած կնետվի: Այստեղ նրան վոչ մի ճեղք
չի խանգարի: Միթե սա գիտնականներին արժանի խըն-
դիր չէ՝ մի վայրկյանում ողը պարպել գլանից: Ահա ձեզ
մի խնդիր, վորը կյանքն ինքն է գիտություն անաջ
դրել:

Հյուլգենսը վրդովվեց.

— Կյանքը չի կարող խնդիրներ դնել գիտության
առաջ: Գիտությունը բարձր է կյանքից:


Պապենը հասկանում էր, վոր իր խոսակիցն իրավա-
ցի չէ, բայց նա առարկություն չեր գտնում: Հյուլգենսի
վրդովմունքն աճում էր աշակերտի համառությունից:
Պապենը չեր ուզում վիճել իր ուսուցչի հետ. իր արդա-
րություն մեջ համոզված, նա լուրջ ու գնաց քնելու: Նոր
եր քուն մտել Պապենը, յերբ զգաց, վոր մեկը քաշում է
իր ուսը:

— Ե՛յ, Ե՛յ, վեր կացեք:

Պապենն աչքերը բացեց ու տեսավ Հյուլգենսին: Գիտ-
նականի դեմքից նա հասկացավ, վոր արտասովոր մի բան
է պատահել: Հյուլգենսի զգեստն իսկ այնքան արտասո-
վոր էր, վոր ստիպեց Պապենին վեր թռչել: Այդպիսի
կերպարանքով պճնամոլ հոլանդացուն նա դեռ չեր տե-
սել: Նրա հազին վոչինչ չկար, բացի կարճ շապիկից և
արծաթի մեծ ճարմանդ ունեցող շքեղ տուֆլիներից: Ըստ
յերևութին, մի կարեվոր բան խանգարել էր Հյուլգենսին
հագնվելու, կամ ընդհակառակը, անկողին մտնելու համար
հանվելիս: Ակադեմիկոսը քաշ տվեց Պապենին իր սենյա-
կը: Յեվ այստեղ, գիտնականի սենյակում, Պապենը գտավ
նրա տարորինակ զգեստի բացատրությունը: Ըստ յերեմի-
թին, քնելուց առաջ նրա գլխի մեջ ծագել էր մի գաղա-

փար և նա վորոշել եր անմիջապես նկարագրել այն: Սա-
վանի մեկը ձխլոված և ածուխով գծագրված՝ ընկած եր
հատակի վրա, իսկ մյուսը, վորը խնամքով փռված եր
սեղանի վրա, ծածկված եր ածուխով գծած նկարներով:
Այստեղ նույնպես շտապ ինչ-վոր հաշվարկումներ եյին
կատարված:

Հյուլգեներ վերցրեց քաթանի նուրբ յերեսով ծածկը-
ված բարձը և իր ծնկների վրա դրեց:



— Տեսեք, — ասաց նա ու
սկսեց նկարել: — Ահա ձեր
գլանը: Ձեր առաջվա մեքե-
նայից նա տարբերվում ե
նրանով, վոր նրա հատակը
Q-ն հանվում ե: Գլանի վե-
րովի մասում, այնտեղ, վոր-
տեղ սկսվում ե մխոցի շար-
ժումը, կա անցք կամ պատու-
հան B: Ահա և ամբողջ կառույց-
վածքը: Ինչպե՞ս ե նա աշխա-
տում: Պատեցնելով հանում
ենք գլանի հատակը, նրա վրա
վառող ենք դնում և տեղն ամ-
րացնում: Սովորական պատ-
րույգով, ինչպես թնդանոթի
մեջ, վառում վառողը: Պալ-
թյունը վեր ե թոցնում մխոցը,
վորն այնտեղ դիմհարին զարկ-

վելով կանգ ե առնում: Հենց վոր մխոցն իր շարժման
ընթացքում հասնում ե պատուհանին, վառողային գա-
զերն ուղղվում են դեպի այդ պատուհանը: Շուտով գլա-

նի ներսում դրսի մթնոլորտի համեմատ ողը նոսրանում
ե, մթնոլորտի ճնշման տակ մխոցը սկսում ե իջնել և
փակում ե B պատուհանը: Այնուհետև նա շարունակում
ե շարժվել, վորովհետև մթնոլորտի ճնշումը նրա վրա
շարունակվում ե, իսկ նրա տակն ողը նոսրացած ե: Շնոր-
հիվ այսպիսի սարքավորման, մենք վոչ միայն կարողա-
նում ենք մխոցի տակ ողի վալրկենական նոսրացմանը
հասնել, այլ և վեր ենք նետում այն: Հենց վոր մխոցն
իջավ, անհրաժեշտ աշխատանքը կատարելուց հետո, մենք
նորից հետ ենք պատեցնում գլանի հատակը և վառողի
նոր լիցք դնում: Ինչպե՞ս եք հավանում այս գաղա-
փարը:

Պապենը հիացած եր:

— Ահա տեսնում եք, — բացականչեց նա, — դուք ինք-
ներդ ոգնության հասար կյանքին:

— Շատ պետք ե ինձ ձեր կյանքը, — բարկացավ
Հյուլգեներ, — լես միայն գիտության ոգտին եմ մտա-
ծում: Դե, կորեք, քնեցեք:

Սակայն այդ գիշեր Պապենը չքնեց. և հետագա մի
քանի գիշերներ հաղիվ եր գլուխը բարձին կպցնում: Նա
վողևորված աշխատում եր վառողային նոր մեքենայի
գծագրերի վրա:

Յեվ նորից սկսվեց լեռուն ժամանակը: Յերկու գիտ-
նականները միառժամանակ գաղանի եյին պահում իրենց
ձեռնարկումը: Թող լի ակներևությամբ պարզվի, վոր
մեքենան կաշխատի և այնպիսի առասպել չի լինի, ինչ-
պես Պապենի առաջին ողային մեքենայի հետ տեղի ու-
նեցավ:

Դեռին լեռանդով սկսեց նոր դասեր տալ վարպետ-
ներին: Նրա մոտ յեկան ձուլողներ, դարբիններ և մեքե-
նագործներ: Ծոծրակները քորելով լսում եյին մինչև
այդ դեռ չտեսնված պատվերները: Գիտնականն անողոր

եր և մագաչափ անգամ չէր ուզում զիջել իր պահանջները: Նա ուզում էր, վոր նոր մեքենայի մասերը վոչ միայն չափազանց ամուր, այլ և այնպիսի ճշտությամբ պատրաստվելին, վորպեսին դեռ վոչ վոք չէր պահանջել վարպետներից:

Պապենն ինքն որվա մեծ մասն արհեստանոցներումն էր անցկացնում: Ամեն տեղ քիթը խոթում էր, բոլորին խորհուրդներ տալիս, ամեն մի աշխատանքի ուզում էր մասնակցել:

Արևը դեռ փարիզյան կղմինդրե բարձր տանիքներին չհասած՝ Պապենն արդեն հայտնվում էր ձուլարանում կամ դարբնոցում: Չսպասելով արհեստանոցի տիրոջ գալուն, նա հրում էր բակում կողք-կողքի քնած բանվորներին: Նա չէր նկատում այն, վոր այդ մարդիկ վորոնց ձեռքերով կյանքում կենսագործում էր նա իր զաղափարը, քնած ելին խոնավ գետնի վրա, բաց յերկրնքի տակ, շատ քիչ գեպքում ծածկված մի լաթով, կամ խտրով, իսկ բարձին փոխարինում էր կաղապարելու հողը կամ հնոցից հանած մոխրակույտը:

Բանվորների թշվառ վիճակը Պապենի միտքը չէր զբաղեցնում: Նրան չէր հետաքրքրում այն, վոր նրանց մեծ մասը թողել են իրենց սոված ընտանիքները կիսավեր գլուղերում, վոր այդ մարդկանց հողերը, վոր սերնդե սերունդ իրենց աշխատանքի քրտինքով ե ջրված, ալժամ կալվածատերերն են գրավել:

Պապենին ամենեկին հոգս չէր պատճառում այն, վոր այդ մարդիկ, վոր քաղաք ելին յեկել աշխատանք վորոնելու, սովից ու տաժանակիր աշխատանքից բացի այնտեղ վոչինչ չեյին գտնում: Յեվ նույնիսկ վոչ մի հույս չունեյին ազատվելու անողոքաբար շահագործված լինելու վիճակից: Արհեստակցական միությունների անգամները, արհեստանոցների տերերը յերբեք նրանց չեյին ընդունի:

Իրենց դասը և Թուլլ չեյին տա նրանց զբաղվելու այն արհեստով, վորն այս կամ այն արհեստախմբի ադտոնուլթյունն էր միայն: Թշվառները կամ սովամահության ելին դատապարտված, կամ ստրկաբար պիտի հնազանդվելին իրենց տերերին:

Այս բոլորը Պապենի միտքը չէր զբաղեցնում: Աքացիներով արթնացած բանվորները յերկար ճանապարհից չհանգստացած կենդանիների նման ելին վեր կենում, սկզբում ծնկների վրա, հետո ճիգ անելով վոտքի կանգնում: Շարունակ ձուլարանում ու դարբնոցում մնալուց նրանց դեմքերը կանաչել ելին: Կիսաբաղց մնալուց այտերը ներս ելին ընկել: Խոր ակոսված կնճիռները մրի ու մետաղի վոշու անջնջելի հետքերով ելին բռնվել: Ձեռքերը մարդու մարմնի վերջավորություններին շատ քիչ ելին նմանվում, դրանք սև բուռնցքներ ելին, հողերի վրա ընկմադմային հանգուցներով ու այրվածքների չբուծված վերքերով ծածկված: Խորը ալնաբներից միայլում ելին հալածված չար եյակների աչքերը:

Բանվորների տաժանակիր աշխատանքով ստեղծված ապարատի մասերը գալիս ելին գյուտարարի մոտ: Կարկինով ու քանոնով զինված, նա չափում էր դրանք համեմատելով իր գծագրերի հետ, և ամենաչնչին սխալմունքի ու տված չափերից ամենաչնչին շեղման դեպքում անողոք խոտանում էր: Աշխատանքի անձգբոտությունը համբերությունից հանում էր Պապենին. նա գոռում էր արհեստանոցատերերի վրա և սպառնում մուրացկան դարձնել նրանց: Չայրացած արհեստանոցատերերը հայհոյում ելին վարպետներին: Իսկ վարպետները, վորոնց վատ աշխատանքի համար տեղերը տուգանում ելին, զայրացած ծեծում ելին բանվորներին:

Ավելի վատ էր, յերբ բանը հասնում էր ձուլած կամ դարբնած մասերի կերտմանը: Պապենը պահանջում էր,

վոր մասերը վոսկերչական ճշտությամբ ու մաքրությամբ
կետոված լինեյին: Խոշորացուցով զինված, նա կռվախն-
դիր եր դարձնում ամեն մի խորդուբորդություն, զննում
եր ամեն մի բոլորն այնպես, կարծես թագավորական
բաճկոնի զարդ լինեյ այն և վոչ թե մեքենայի մաս:
Այդ ժամանակները վարպետներն այն համոզման եյին,
վոր շինվածքի ճշտությունը և մաքուր կերտվածքն ան-
հրաժեշտ է արդյունաբերության յերկու ճյուղերում մի-
այն. այն է՝ բարձրատիճան անձերի զարդարանքների
և ծովային գործիքների համար: Վոչ մի այլ բանում
կյանքը մեծ ճշտություն և նրբագեղություն չեր պահան-
ջում նրանցից: Արհեստանոցների տերերը Պապենի այդ-
պիսի պահանջները դատարկ բռնախնդրություն ու գիտնակա-
նի անձնական քմահաճույք եյին համարում: Առաջին ան-
գամ չեր, վոր կատարում եյին Ակադեմիայի տված պատ-
վերները, սակայն ակադեմիկոսները դեռ յերբեք այդպի-
սի փաստեր չեյին հասցրել և այդքան զխաջավանք չեյին
պատճառել արհեստանոցատերերին:

Համբերությունից դուրս յեկած արհեստանոցատերե-
րը վորոշեցին գանգատվել Հյուլգենսին նրա խենթ ող-
նականի վրա: Ի զարմանս նրանց, հոլլանդացին, վորը միշտ
զիջող ու քաղաքավարի յեր, անողոր բարկացավ արհես-
տանոցատերերի վրա: Սպառնաց, վոր թողակի մինիստրին
զանգատվի, յեթե աշխատանքները չկատարվեն: Վար-
պետները ձեռնունայն վերադարձան: Սակայն վորո-
շեցին յուրատեսակ ազատվել այդ անշահավետ պատ-
վերներից: Դադարեցին վճարել բանվորներին այն ժամա-
կասիջոցի համար, վորը Պապենի պատվերներն ուղղե-
լու վրա ելին գործադրում:

Պապենը տեղյակ չեր գործարանատերերի այդ ա-
րարքին, վորովհետև այդ միջոցին կարճ ժամանակով



Սավանի մեկը ճիւղոված և ածուխով գծադրված՝ ընկած
եր հատակի վրա:

Փարիզից բացակայում եր: Չգիտեր նաեւ, վոր բանվորներէ հետ խոսելիս՝ տերերն ամբողջ մեղքը Պապենի վրա եյին գցել վոր իբր թե նա անանկացրել է իրենց:

7. ԹԵ ԻՆՉ ՀԵՏԵՎԱՆՔ ՈՒՆԵՑԱՎ ՀԵՐՈՍԻ ԿԱՐՃԱՏԵՎ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Գարնան պարզ որ եր. Փարիզի կտուրները վառվում էյին ծիրանագուլն փալլով: Այն հեռավոր ժամանակները կտուրների կղմինդրները դեռ չեյին սեացել զործարանների անթիվ ծխնելույցների մրից: Ծխի քուլաները փարիզեցիների հայացքներից չեյին թազցնում պայծառ կապույտ յերկինքը:

Մոնմարար բլրի գագաթին, վորն այն ժամանակ քաղաքի գծից դեռ դուրս եր գտնվում, պանդոկի բաց լուսամտի առաջ նստած եր Պապենն ու քաղաքի տեսարանով եր հիանում: Փողոցները սարդի վոստայնի նման մի քանի հանգույցներից այս ու այն կողմ ելին ցրվում. այդ հանգույցներից ամենամեծը՝ Լուվրն եր¹: Չաղ սե սարդի նման նստած եր պալատը Սենա գետի ափին ու իր քարե թիկունքով հետ եր մղում հյուսիսաին թաղամասերը, վորտեղ դեռ հնուց քաղաքի չքավոր դասակարգն եր բուն դրել:

Պապենը մտածմունքի մեջ եր ընկած: Նա պատկերացրեց, թե ինչ է կատարվում արհեստավորների այդ թաղամասերից մեկում: Լայն բակում աղմուկ ու իրարանցում է: Չնայած գարնան ողի թարմությանը, մարդիկ կորած են քրտինքի մեջ: Նրանց դեմքերը թափանցիկ դեղնություն ունեն, իսկ աչքերը տենդոտ փալլով են

վառվում: Մինչև գոտի մերկացրած մարմինները ծխոտ ված են ու կեղտոտ: Մարդիկ կռացած են հողե կաղապարի վրա, վորի մեջ շերեփից կայծեր արձակող հալած անագապղինձ է թափվում: Շերեփների ծանրության տակ ձկռած մարդիկ մեկը մյուսի հետեփից մոտենում են կաղապարին և նրա մեջ թափում հալած մետաղը:

Չուլվում է վառողային շարժիչի վերջին և ամենամեծ մասը՝ գլանը: Բոլոր մանր մասերն արդեն պատրաստ են: Աշխատանքը մոտենում է իր վախճանին: Շուտով կվերջանա բանվորների և արհեստանոցների հետ կապված այս շփոթը: Հնարավոր կլինի հանգիստ զբաղվել ապարատը հավաքելով և նրա վրա կատարելիք փորձերով: Այս մտածելիս Պապենը հուզված ուսերը շարժեց և սեղանի վրա թխթխկացրեց:

— Եյ, պանդոկապետ, ձին պատրաստեցեք:

Մի քանի րոպեյից յերասանած ձին կանգնած եր արտաքին սանդուխքի մոտ: Պապենը թռավ թամբի վրա: Սմբակներով փոշու քուլաներ բարձրացնելով, ձին հենց տեղից վարդավազ տվեց:

Պապենը շտապում եր Փարիզ: Նա ուզում եր հասնել ձուլողների վերջին աշխատանքներին, վոր անձամբ կարողանա հետեւ նրանց: Այնպիսի անհամբերությամբ եր շտապում նա հասնել արհեստանոցը, վոր նույնիսկ տուն չմտավ, այլ ինչպես կար՝ ճանապարհի հագուստով, թուրը կողքից կախած, մտավ ձուլարանի բակը: Միանգամից Պապենի աչքին ընկավ այնտեղի արտասովոր աշխուժությունը: Չուլողների մեջ Պապենը տեսավ արհեստանոցի հետ վոշ մի կապ չունեցող մեծ թվով վարպետների ոգնականներ: Վոշ վոք չեր աշխատում: Վոմանք ձգված պառկած էյին գետնին, մլուսները խումբ-խումբ հավաքված խոսում եյին: Ամեն կողմից գոռոցներ ու վեճեր էյին լսվում:

¹ Լուվր — Յեվրոպայի ամենագեղեցիկ պալատներից մեկը Փարիզում:

Հենց վոր Պապենը դարպասից յերևաց, նրա գեմ վազեց արհեստանոցի տերը: Նրա գեմքը յերկուզ եր արտահայտում:

— Ձուկելու գործը գլուխ չեկամ,—բարևի փոխարենը զժգոհ հարցրեց Պապենը:

— Ի՞նչ ձուկում, ի՞նչ բան, պարոն:

— Ապա բանն ինչո՞ւմն ե, ասացեք:

— Ախ, պարոն, նրանք... նրանք...

Արհեստանոցատերը կմկմում եր մտածելով, թե ինչպիսի սուտ հնարի: Յերբ Պապենը տեսավ, վոր նրանից բան չի հասկացվի, ձիուց ցած թռավ ու մոտ վազեց բանվորներին: Խոսակցութունները դադարեցին և մարդկանց առանձին խմբերը միացան, մի բազմութիւն կազմեցին: Առաջ յեկավ դարբնի կաշվե գոգնոցը կապած բարձրահասակ, նիհար մի ծերուկ: Գիտնականն ու դարբինը կանգ առան իրար դեմ: Նրանք իրար շատ լավ ելին ճանաչում: Շատ որեր ելին անցկացրել իրար կողքի, արհեստանոցում, վառողալին մեքենայի մասերը պատրաստելիս: Պապենը տեսավ, վոր ծերունին չափազանց հուզված ե և ինչ-վոր մի բան ուզում ե բացատրել: Սակայն աշխատանքը զնդանի մոտ չեր սովորեցրել նախադասութուններն արագ հյուսել, նա գեռ պիտի հավաքեր իր մտքերը: Պապենը չթողեց, վոր ծերունին սթափվի, և կտրուկ հարցրեց նրան:

— Ձեզ ո՞վ թույլ տվեց լքել աշխատանքը, և ինչո՞ւ յեք այստեղ հավաքվել:

Դարբինը վերջապես սիրտ արավ:

— Ձերդ փողորմածութիւն, աշխատանքը մեր սրբատուր չե: Մենք չենք ուզում պատրաստել այդ մեքենան, մինչև վոր մեզ...

Նա ուզում եր բացատրել, վոր այդ աշխատանքի համար վոչ վոք նրանց չի վարձատրում, վոր արհեստա-

նոցատերերն իրենք առաջարկեցին բանվորներին Պապենի հետ բացատրվել այդ առթիվ:

Բայց նախքան դարբինն իր մտքերը հավաքեց, նա տեսավ իր առաջ գիտնականի կատաղած գեմքը և նրա գլուխը ցնցվեց Դենիի հարվածից:

— Յեա կստիպեմ ձեզ աշխատել, թշվառ խոտվարարներ,—գոռաց Պապենը:

— Ընկերներ, ծեծում են,— գոռաց դարբինն ու գլուխ քաշեց գոտուց խրած մուրճը:

Բազմութիւնը, կարծես, ազդանշանով, թափվեց Պապինի վրա:

Առաջ վագոդներից յերկուսն ընկան, թրի առաջին հարվածն ընդունած ծեր դարբնի հետևից: Գիտնականը հետ եր քաշվում դեպի բակի խորքում գտնվող արհեստանոցատիրոջ տունը: Պապենին դեռ բավականին մեծ տարածութիւն եր մնում անցնելու, յերբ տեսավ, վոր բանվորների մի մասն անշատվեց բազմութիւնից, մտադրվելով կտրել նրա նահանջը: Վայրկենապես կշռադատելով դրութիւնը, Պապենն իրեն հետապնդողներից մեկի վոտքերի տակ շարտեց թուրը և ինքն ամբողջ ուժով տան կողմը նետվեց:

Շնորհիվ այդ մանյովրի անսպասելիութանը՝ Պապենը միանգամից տաս քայլի առավելութիւն ստացավ: Նա արդեն կարծում եր, վոր անվորձ կհասնի սանդուխքներին, յերբ հեռից թռան քարեր ու գործիքներ: Մեկի ուժեղ ու շեշտակի ձեռքով նետած մուրճը սուլոցով ողբ ձեղճեց: Թիկունքին ստացած հարվածից Պապենն ընկավ: Նա դեռ բավականին ուժ ուներ ատամները սեղմած սոնդալու սանդուխքների վրա: Յեւ այն վայրկյանին, յերբ դալու սանդուխքների վրա: Յեւ այն վայրկյանին, յերբ արդեն բռնել եր դռան փեղկից, դուռն ամուր փակվեց նրա առջև: Ձուլարանի տերը շտապ փակեց դուռը Պապենի առաջ: Այդ վարժունքն ամենաճիշտ միջոցն եր

միանգամ ընդմիջտ ազատվելու աներես պատվիրատուից։ Ձուլարանատերը զուր չէր արհեստակցության գործունյա անդամներին մեկը և զուր չէր մասնակցում ձեռնարկատերերի դավադրությանը, վորով բանվորներին գրգռում էին գյուտարարի դեմ։ Ձուլարանի տերը գիտեր, թե ինչ է անում։ Այժմ նա համոզված էր, վոր Պապենի ճաշը յեփած է։ Վորպեսզի կարողանա իր սեփական աչքերով համոզվել, թե ինչպես է գիտնականի հախից գալու վարպետների ոգնականների գազազած բազմութունը, գլուխը կպցրեց հաստ վանդակով պատած դռան փոքրիկ պատուհանին։ Բայց վորքան զարմացավ և նույնիսկ սարսափեց, յերբ գիտնականի հետ հաշիվ մաքրելու տեսարանի փոխարեն՝ ձուլարանատերը տեսավ բանվորների մեջ ընկած շփոթութունը։ Ձուլարանի բակի դարպասից մերկացրած թրերով հեծյալ պահակների մի ջոկատ ներս թափվեց։ Կոտորելով ու վտանատակ տալով վարպետների ոգնականներին, հեծյալները բակի հեռավոր անկյունը սեղմեցին մնացած բազմութունը։

Մի րոպե տատանվելուց հետո ձուլարանատերը դուռը բացեց և ուշաթափված Պապենին քաշեց նախասենյակը, իսկ ինքը վազեց բակը և գործան ուժ ուներ, գոռաց։

— Զարկեցեք, զարկեցեք խռովարարներին, նրանք ուզում եին սպանել պարոն Պապենին։ Յես վոր չազատեյի, այս գազանները կպատառոտեյին նրան։

Մի ժամից հետո ապստամբները շղթայված, վստահելի պահակախմբով շրջապատված, շարժվում էին դեպի բանտը։ Ձուլարանի տերը պահակապետին գինիով հյուրասիրելով՝ հնարում էր, թե ինչպես նա մահից ազատեց Պապենին։

Անցան շատ օրեր նախ քան Պապենը կրած ծեծից փոքր ինչ կազդուրվեց։ Առաջին բառերը, վորոնցով նա դիմեց իրեն այցելող Հյուլգենսին այն հարցն էր, թե ինչ վիճա-

կի մեջ է գտնվում շարժիչի կառուցումը. և սաստիկ վրշտացավ, յերբ պարզվեց, վոր այն որվանից, յերբ Պապենը հիվանդացել է, գործը վոչ մի քալ առաջ չի գնացել։ Դենին տաքացած հանդիմանում էր իր քարեկամին, բայց Հյուլգենսն անհոգ ծիծաղում էր միայն։

— Զարժե այդպիսի մանր բաների մասին մտածել։ Խռովարարներն արդեն ստացան իրենց պատիժը։ Տաժանակիր առաքատանավերի վրա՝ այժմ ամեն մեկը նրանցից կարող է հասկանալ, վոր մեր մեքենայի վրա տարած աշխատանքը հաճելի գվարձութուն էր միայն։ Արհեստանոցատերերը չորեքթաթ կսողան, վոր թույլ տանք պատրաստել մեր ապարատը, թողեք մի ձեռք խփեմ այդ գործին։

Յեվ իսկապես, շուտով թուղթ ստացվեց առաջին միխիստից։ Կոլբերը թագավորի անունից հրամայում էր բոլորին և յուրաքանչյուրին կատարել ակադեմիկոս Հյուլգենսի հանձնարարությունները։ Ապարատը կոգտագործվի վերսալի այգում պոմպեր կառուցելու համար։ Թագավորը ցանկութուն էր հայանել վերսալի լճերում իշխան ձուկ բազմացնելու մասին. և այդ հնարավոր էր, յեթե միայն կարողանային Սենալի ջուրը բարձրացնել այդ լճերի համար։ Այդ նպատակի համար անհրաժեշտ էյին պոմպեր, վորոնց մասին դեռ չգիտեյին այն ժամանակվա ինժեներները։ Պոմպեր կառուցելը Կոլբերը հանձնեց Հյուլգենսին և Պապենին։ Միաժամանակ Կոլբերը թագավորական հրաման է ուղարկում՝ Պապենին թագավորական Ակադեմիայի անդամ նշանակելու և նոր ակադեմիկոսին պետական գանձարանից մշտական ոտձիկ բաց թողնելու մասին։

Գործի այսպիսի ընթացքը Պապենին թեւովորեց։ Հիվանդ, վիրակապերով և սպեղանիներով ծածկված՝ նոր ակադեմիկոսը նորից դեկավարում էր շարժիչի կառուցումը։ Այժմ պատվերները կատարվում էին անմիջա-

պէս և առանձին հոգացողութեամբ: Ամենազոր մինիստրի անունը հնազանդեցրեց արհեստախմբի ամենարմբոստ անդամներին: Վոչ վոք չեր ուզում ուղարկված լինել նա-
վերի վրա՝ տաժանակիր աշխատանք կատարելու: Շուտով բոլոր մասերն արդեն պատրաստ էին և մեքենան հավա-
քեցին: Գյուտարարները հույս ունեյին, վոր ամենամօտիկ ապագայում նրանք ցույց կտան գիտական Փարիզին իրենց մեքենան՝ գործելիս: Ձհետաձգելով գործը, սկսեցին առաջին փորձի աշխատանքը:

Փորձը կատարվում էր թագավորական գրադարանին կից սրահում: Ինչպէս մի ժամանակ ծեր համբարակ Պա-
պենը Բլուայում բազկաթողի վրա նստած վորդու փոր-
ձերն էր դիտում, այնպէս ել այժմ հենացուպերով շարժ-
վող Դենին, նստած էր աթոռի վրա և ուշադրութեամբ հետևում էր պատրաստութեաններին:

Հյուլգենսն անձամբ չափեց վառողի լիցքը և դրեց գլանի մեջ. գլանի հատակը խնամքով պտուտակեցին: Ա-
ռաստաղից ամրացրած ճախարակի վրա թոկ անցկացրին,
իսկ թոկի ծայրին կշռաքարեր կապեցին: Կշռաքարերն
այնքան շատ էին, վոր նրանք շղթայաձև ընկած էին
հատակի վրա: Նայած թե միտցն իջնելիս քանի կշռաքար
է հատակից բարձրացնելու, կարելի կլինի դատել մեքե-
նայի ուժի մասին:

Հյուլգենսը պատրույգը վառեց և մոտ վազեց կշռա-
քարերին, վոր դիտի նրանց բարձրանալը: Բայց հաղիվ
էր նա յերկու քայլ արել, յերբ հանկարծ սոսկալի տրա-
քոց լսվեց: Հանդիսատեսների աչքերի առաջ միտցը
գլանից վեր նետվեց: Նրա հետ միասին պոկվեցին բոլոր
հարմարանքները և կշռաքարերը: Հանդիսատեսների գլխե-
րին տանիքի շարքված կղմինդրի կտորներ թափվեցին:
Պապենն ուժեղ հարված զգաց գլխին, ուշաթափվեց և
աթոռից ցած գլորվեց: Նա այլևս չլսեց, թե ինչպէս միտ-

ցը տանիքին զարկվելով, ընկավ հատակի սալերի վրա և
շարդուփշուր լեղավ:

Փորձը վերջացած էր: Պայթյունի ուժից բարձրա-
ցած միտցը պոկեց բոլոր սողնակները, վորոնք նրան գլա-
նի վերևում պիտի պահեյին: Ըստ յերևութին Հյուլգենսը
չափազանց մեծ լիցք էր վերցրել:

Շարժիչն ավերվել էր: Պապենը նորից հիվանդացավ:

Անկողնում պառկած Դենին փորձում էր ցուցմունք-
ներ տալ, թե ինչպէս պետք է կատարելագործել շարժի-
չը: Նրա հսկողութեան տակ պատրաստվեցին նոր գլանի
գծագրեր: Այդ գլանը շատ էր տարբերվում առաջինից:
Գլանի կողքի պատի մեջ շինված վառողային գազերը
դուրս հանող անցքի փոխարեն հենց միտցի մեջ կափա-
քիչ սարքեցին: Այդ կափարիչը դուրս էր թողնում գլանի
մեջ յեղած գազերը, բայց միտցորտային ողբ գլանի մեջ
ներս չէր թողնում: Այդ հանգամանքն ապահովում էր
պայթյունից հետո առաջացած ողի նոսրացումը գլանի
մեջ:

Սակայն յեթե Պապենի ուժը պատում էր գծագիր
պատրաստելուն հսկելու համար, շարժիչի կառուցման
աշխատանքը Հյուլգենսն ստիպված էր վերցնել իր վրա:
Կեղտոտ արհեստանոցները թափառելու և ձուլարան-
ներում ու դարբնոցներում իր ժանեկավոր մանժետ-
ները կեղտոտելու նա առանձին հակում չունեց: Հյուլգեն-
սըն ոգտվում էր ամեն մի առիթից, վոր խուսափի դրա-
նից և զբաղվի ակադեմիկոսի դիրքին հատուկ վորեվե-
այլ բանով: Յեթե Կուլբերը ժամանակ առ ժամանակ աշ-
խատանքի ընթացքի մասին չտեղեկանար, Հյուլգենսը հա-
վանորեն կթողներ այդ աշխատանքը մինչև Պապենի ա-
ռողջանալը:

Դենիի համար ել պարզ էր, վոր մինչև նա ինքը
չսկսի այդ գործը, շարժիչը չի կառուցվի: Նա պատրաստ

եր հենացուպերով գնալ արհեստանոց: Բայց ինչ կարող
եր անել նա՝ թույլ ու հիվանդ գրության մեջ: Իսկ Հյուլ-
գենսն այժմ տարվել եր լույսի թեորիայով: Շարժիչի կա-
ռուցումն արդեն դարձել եր նրա համար ձանձրալի մի
պարտականություն և արքունիքում գրամ հայթայթելու
միջոց: Հոլլանդացին թեթեւացած շունչ քաշեց, յերբ պոմ-
պերի մասին հերթական հիշեցման փոխարեն մինիստրա-
կան գրասենյակից հրավեր ստացավ, վոր պատրաստվի
ճանապարհ ընկնելու:

Լյուդովիկոս Տասնչորսերորդը մեկնում եր հերթա-
կան ճանապարհորդության: Թագավորը սիրում եր շրջել
պատերազմի դաշտը ճակատամարտը վերջանալուց հետո:
Նա հաճախում եր իր գործերի կողմից նոր գրաված
մարզերը: Այդ իսկական մի տոն եր պալատականների
համար: Այդպիսով կարելի յեր ավելի ուրախ կյանք անց-
կացնել, քան այն, վոր վարում եյին նրանք Վերսալում:
Այդպիսի տոներ հաճախ եյին կատարվում: Թագավորը
քաջբայել եր յերկիրն անընդհատ պատերազմներով և ան-
չափ շքեղությամբ: Նրա յերկարատե թագավորության ըն-
թացքում շատ քիչ կպատահեր այնպիսի տարի, վոր պա-
տերազմ չլիներ: Ծովային և ցամաքային ճակատամարտե-
րը փոխարինում եյին իրար: Մերթ գերմանական, մերթ
խաչանական և մերթ իտալական սահմանների վրա կրո-
վում եյին թագավորի բանակները: Թագավորական նավա-
տորմը կռվում եր անգլիական և իսպանական նավատորմ-
ների դեմ:

Այժմ թագավորի զվարճալի ճանապարհորդության
համար առիթ ծառայեց Լոթարինգիայի գրավումը Ֆրան-
սիական գործերի կողմից: Թագավորը կամեցավ տեսնել
իւր նոր յերկրները: Այս ճանապարհորդությունը պիտի
լիներ առանձնապէս շքեղ. Լոթարինգիան համեղ պատառ
եր Արև թագավորի համար: Թագավորը սովորաբար ճա-

նապարհորդում եր իր գեներալների, մինիստրների և ար-
քունիքի տիկնանց ուղեկցությամբ: Այս անգամ Լյուդո-
վիկոսը կարգադրեց իր հետ տանել բանաստեղծների,
աստղագետների և գիտնականների մի ամբողջ հաստիք:
Հրավիրվածների թվում եր նաև Քրիստիան վան Հյուլ-
գենսը:

Հյուլգենսի համար այդ ճանապարհորդությունը
զվարճություն եր և ժամանակին ազատեց նրան արդեն
ձանձրալի շարժիչով զբաղվելու անհրաժեշտությունից:
Նա ուրախությամբ Պապենին հանձնեց բոլոր գործերը և
մեկնեց արքունիքի հետ:

8. ԿԱՐԴԻՆԱԼԻ ԽՐԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԸ ԿՐՈՆԻ ՅԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պապենը դժվար կացության մեջ ընկավ: Սկզբում
հիվանդությունը թույլ չեր տալիս, վոր հետևի աշխա-
տանքներին, իսկ յերբ անկողնից վեր կացավ, տեսավ, վոր
վարպետները նորից բան չեն անում: Շարժիչի մասին
բոլորն արդեն մոռացել եյին: Վոչ միայն թագավորն ու
Կոլբերը, այլև նույնիսկ Հյուլգենսը բացառւած եր Փա-
րիզից: Վոչ վոք չկար, վոր սաստեր վարպետներին: Իսկ
մեքենայի, Վերսալի լճերի և իշխան ձուկ զարգացնելու
մասին արդեն մոռացել եյին: Թագավորի այս դատարկ
մտադրությունները նոր հնարքներով ու զվարճություն-
ներով փոխարինվեցին:

Բայց, չնայած Ակադեմիայի գրասենյակի և վարպետ-
ների անտարբերությանը, Պապենն իր յեռանդով և գյուտն
իրագործելու բուն ցանկությամբ յերեվի կհաղթահարեր
բոլոր արգելքները, յեթե ինքն իր գործը չփչացներ:

Դժբախտաբար միակ բարձրաստիճան մարդը, վոր
մնացել եր այն ժամանակ Փարիզում, կարդինալն եր:

Պապենի գլխում մի դժբախտ միտք ծագեց՝ հենց նրան դիմել ոգնություն խնդրելու համար:

Պապենի կյանքի վերջին տարիներն անցնում էին Ակադեմիայի լաբորատորիաներում: Իր հետազոտություններով տարված, նա ամենեվին չէր նկատում, թե ինչ եր կատարվում իր շուրջը: Վաղուց արդեն անցել էին ժամանակները, յերբ նրա դավանակից հուգենոտները ֆրանսիական թագավորի իրավագոր հպատակներն էին, ինչպես կաթոլիկները:

Թեպետ բողոքականների դավանության ազատազրկման մասին պաշտոնապես դեռ վոչինչ հայտնի չէր, բայց բողոքականները քանի գնում, այնքան ավելի ու ավելի ուժեղ հալածանքների էին յենթարկվում: Այս բոլոր գործերը վարում էին մի խումբ կաթոլիկ պալատականներ կիսախեղազար կեղծ-բարեպաշտ մարկիզուհի դե Մենտենոնի գլխավորութամբ, վորը ծերացող թագավորի սանձն առած, այս ու այն կողմն եր քաշում նրան: Մարկիզուհին ամեն տեսակ միջոցներով ձգտում եր կաթոլիկությունը միակ կրոնը դարձնել Ֆրանսիայում: Բողոքականներից խլում էին պետական պաշտոնները: Վաճառական հուգենոտներին ամեն կերպ ճնշում էին՝ խոչընդոտելով նրանց գործերը: Գավառներում, ոտաբերկրյա դեսպանների աչքից հեռու, կաթոլիկ աստիճանավորները խլում էին հուգենոտների յերեխաներին և բռնի կերպով հանձնում վանքերը՝ կաթոլիկ կուսակրոնների հսկողությանը:

Բողոքական գյուղացիներին սնանկացնում էին նրանց գյուղերում իջեվանելու ուղարկված դրագունների գնդերը: Թագավորական դրագունները յերբեք ել համեստ չեն յեղել իրենց կյանքում, իսկ իմանալով, թե ինչի համար են նրանց բերել, բոլորովին սանձարձակ էին դառնում և ալդ դժբախտ գյուղերում քարը քարի վրա չէին թողնում: Յերբ թալանված գյուղացիներից այլևս վերցնելու

բան չէր մնում, անցնում էին հուգենոտ կալվածատերերի ագարակներն ու դղյակները: Վոչ մի գանգատ չէր ոգնում: Տուժածների վոդբերի հանդեպ իշխանությունը խուլ եր մնում:

Պապենը չգիտեր, վոր բողոքական յեկեղեցուն պատկանելու պատճառով ինքն ել մշտական վտանգի տակ ե: Միայն Կոլբերի մշտական հովանավորության շնորհիվ նա դեռ մնում եր ալադեմիկոս:

Յեվ ահա այսպիսի անհամապատասխան ժամանակ նրա գլխում միտք ե ծագում դիմել կարդինալին՝ ոգնություն խնդրելու: Այնինչ հենց կարդինալն եր հուգենոտների դեմ կազմակերպած մոլեռանդ պալքարի գլխավոր դրդիչը:

Կարդինալը շատ սիրալիւր ընդունեց Պապենին, բայց այդ քնքշությունը մկան հետ խաղացող կառվի քնքշություն եր: Կարդինալը յերկար ժամանակ հարց ու փորձ եր անում Պապենին նրա աշխատանքների մասին և դուժում եր նրա մտադրությունները: Նա լսեց Պապենին և նուշնիսկ խոստացավ լիակատար աջակցություն ցույց տալ: Յեվ յերբ ուրախացած Պապենը սրտանց շնորհակալություն հայտնեց պրելատին¹ և ուզում եր արդեն հեռանալ, կարդինալը շողոքորթությամբ հարցրեց.

— Ասացեք, զավակս, դուք զղջացել եք արդեն ձեր մոլորության մեջ: Հասկացել եք, արդյոք, կաթոլիկ յեկեղեցու գիրկը վերադառնալու անհրաժեշտությունը, այն միակ իսկական քրիստոնեական յեկեղեցու, վորին սուրբ Պետրոսի փոխանորդն ե գլխավորում:

— Ձերդ սրբազնություն, — ասաց զարմացած Պապենը, — յես չեմ հասկանում՝ ինչ առնչություն ունի իմ դավանությունն այն աշխատանքների հետ, վորի մասին ձեզ հետ խոսում եմ:

¹ Պրելատ — բարձրաստիճան հոգեվորական:

Ձափակա, յես ձեզ պիտի ուղիղն ասեմ. վոչ մի աշխատանքի մասին դուք մտածել անգամ չեք կարող, մինչև վոր չհրաժարվեք բողոքականութունից: Փրանսիան այլևս վոչ մի ընդհանուր կապ չի ուզում ունենալ հերետիկոսական գիտության հետ:

— Այդ բանին յես հավատալ չեմ կարող: Գիտությունը մնում է գիտություն, անկախ նրանից, թե ով է առաջ քաշում այն:

— Մենք այլ կարծիք ունենք այդ մասին:

— Դուք մոլորվում եք, հայր: Յես ձեզ կապացուցեմ այդ:

— Դուք ինձ կապացուցե՞ք. — կարդինալը սրտանց ծիծաղեց: Իսկ ինչպե՞ս եք մտադիր անել այդ:

— Յես թագավորի մոտ կգնամ:

— Թագավորը պատերազմի թատերավայրումն է: Դուք այդ գիտե՞ք:

— Նա կվեռադառնա:

Կարդինալը մոռանալով իր հոգևոր բարձր աստիճանը, սուլեց:

— Միայն ասածուն է հայտնի՝ կկարողանա՞նք տեսնել նրան, թե վոչ:

Այդ հանելուկային նախադասութունն ասելուց հետո նա մի րոպե մտածելով ավելացրեց.

— Յես համոզված եմ, վոր յեթե նորին մեծութունը թեկուզ հենց այսօր յերևար այստեղ, դուք, միևնույն է, նրան տեսնել չեյիք կարողանա: Իմ հաջրական խորհուրդն է՝ հանգիստ նստել, մտածել և անկեղծաբար զղջացած, վորքան կարելի չե շուտ, գալ մեզ մոտ: Յե՛վ մենք, իմանալով վոր մոլորությունը ժառանգաբար է անցել ձեզ, չեյինք բարկանա ձեզ վրա և ձեզ կընդունեյինք միակ ճշմարիտ պապական յեկեղեցու գիրկը:

— Յե՛վ այն ժամանակ:

— Ո՛հ, այն ժամանակ, բոլորովին այլ խնդիր է: Ձեր առաջ կբացվեյին բոլոր դռները, դուք կկարողանայիք ազատ աշխատել: Յես կարծում եմ, վոր այն ժամանակ թագավորը կարող կլիներ մի րոպե ժամանակ դանել ձեզ հետ զրուցելու:

Պապենը մտածումների մեջ ընկավ: Նա ֆանատիկոս չեր, բայց հավատն առ աստված, վոր մանկութունից ամրապնդվել էր նրա մեջ, հաստատուն էր: Առաջին անգամ չեր, վոր նա համոզվում էր կաթոլիկ յեկեղեցու անհանդուրժողականության ու դաժանության մեջ: Նա շատ էր լսել, թե ինչ է կատարվում վանքերի պատերի հետե՛վում և յեպիսկոպոսների առանձնասենյակներում: Նա գիտեր, վոր արտաքին շքեղությամբ ու հեղուկյամբ եյին քողարկվում կուսակրոնների խայտառակ գործերը: Պապենը համալսարանում յեղած ժամանակ իր սեփական փորձից տեսնում էր, վոր յեկեղեցին խանգարում էր գիտությունների զարգացմանը: Բաց նրան թվում էր, վոր քրիստոնեյության այն յերիտասարդ ճյուղը, վորին պատկանում էր նրա ընտանիքը, բողոքականությունը, կաթոլիկությունից ավելի լավ ու մաքուր է: Պապենը չեր հասկանում, վոր բողոքական յեկեղեցին նույն խնդիրներն է դնում իր առաջ, ինչ և կաթոլիկությունը՝ հաշտեցնել ընչազուրկ աշխատավորներին գոյություն ունեցող կարգերի հետ և նրանց վրա թագավորների, կալվածատերերի և վաճառականների իշխանությունը հաստատել: Պապենը միամտաբար հավատում էր բողոքական կրոնի մաքրությանը: Նա զգվում էր այն մտքից, թե կարյերայի կամ սիրած գիտության համար կարող է դավաճանել հավատին: Ուստի գլուխը բարձրացրեց և հանդուգն ասաց.

— Ով ել լինեմ յես, բողոքական թե կաթոլիկ, յես մինչև վերջին օրս պիտի աշխատեմ և տքնեմ: Դուք խոր-

հուրդ եք տալիս ինձ հանգիստ նստել և ինչ-վոր մի բանի սպասել: այդ անկարելի յե, գլուխս պայթում ե նոր դադափարներից:

— Ձեր գաղափարները վնասակար են, զավակս:

— Ընդհակառակը, ձերդ գերազանցութուն, նրանք հարկավոր են Փրանսիային: Դուք լավ գիտեք, թե ինչ ոգուտներ ե ստանալու յերկիրն իմ մեքենան գործադրելուց: Նրա ոգնությամբ կարելի յե տասնապատկել արտադրության ուժը: Արհեստանոցների հաստոցները շարժման մեջ կդրվեն առանց գետերի ու քամու ոգնության: Հաստոցները կպտտվեն առանց մարդկային մկանների ոգնության:

— Գետերն ու քամիներն աստված ե ստեղծել Քրիստոսի իսկական զավակների կարիքների համար և նրանցից ոգտվելուց հրաժարվելու վոչ մի հիմք չկա,— խստաբար ասաց կարգինալը:— Դուք կոչված չեք փոխելու յերկրնքի կոդմից դրված որենքը: Ձեր խոսակցութունը վնասակար ընթացք ե ստանում. յես չեմ ուզում լսել այլևս:

— Սրբազան հայր, գուցե այլ փաստարկներ ձեզ համոզեյին. իմ մեքենան կրկնակի, յեռակի կհարստացնի այժմյան գործարանատերերին: Նա հնարավորութուն կտա գործարաններ հիմնել այն մարդկանց, վորոնք այժմ յերազել անգամ չեն կարող այդ մասին: Ամբողջ Փրանսիան լցվելու յե ամենակարևոր և շքեղ առարկաներ արտադրող արհեստանոցներով: Ժողովուրդը կրկնակի կհարստանա:

— Դուք ուզում եք ամեն մի փոքրիկ գյուղում արհեստանոցներ հիմնել: Լավ գործ ե, ել ինչ ասել կուզի: Դուք մոռացել եք, վոր այս կամ այն ապրանքներն արտադրելու արտոնությունները թագավորն ինքն ե տալիս: Վոչ վոք իրավունք չունի խախտելու այն: Վերջապես, դուք

մոռացել եք, վոր յերկրի ամենախոշոր արհեստանոցները թագավորին են պատկանում: Վեց հարյուր զուլգ ձեռք զբաղված ե թագավորական հայելիների արհեստանոցում. իսկ Աբբեվիլում թագավորի համար աշխատում են հազար յերկուհարյուր մարդ: Յեվ դուք ուզում եք մրցել այդ գործարանների հետ, դուք ուզում եք գլխացավանք ստեղծել նորին մեծության համար:

— Բայց մտածեցեք մի ըուպե, սրբազան հայր, թե վորքան ձեռքեր կազատվեն անասունների աշխատանքը կատարելու անհրաժեշտությունից:

— Աստված ինքը գիտի, թե ում ինչպիսի աշխատանք պիտի տալ:

— Յեթե այսուհետե ել միայն մարդկանց մկանների վրա հույս դնենք, ձեռքերը չեն բավականանա:

— Այս տարի մենք մի միլիոն լիվրի գերիններ ենք ներմուծել Աֆրիկայից: Յեթե անհրաժեշտ լինի, ելի յերկու միլիոնի կներմուծենք. բայց ներդրամիտ չենք կարող լինել դեպի ձեր վնասակար հնարքները: Դուք հերետիկոս եք, պարոն:

Կարգինալի արտասանած այս բառը սարսափելի յեր: Պապենը գիտեր, թե ինչ կարող ե պատահել մի մարդու հետ, վորին այդպես են անվանում: Նա վերջին ջանքը գործադրեց:

— Սրբազան, միթե Պապեն-կաթոլիկը ձեզ համար ավելի կարևոր ե, քան Պապեն-գիտնականը:

— Սուրբ յեկեղեցին չի ճանաչում վոչ գիտնականներ, վոչ ել տգետներ: Նրա համար գոյութուն ունեն միայն Քրիստոսի հավատարիմ զավակներ և զազրելի հերետիկոսներ: Հասկանում եք, պարոն, հերետիկոսներ, վորոնց դեմ յեկեղեցին պայքարում ե և վորոնց նա կվոչնչացնի:

վերջին խոսքերը կարգինալը բարկացած բարձր ար-
տասանեց: Չանդակի բուղը քաշեց և կարգադրեց մտնող
սպասավորին:

— Ուղեկցեք այս մարդուն:

Պապենը հասկացավ, վոր այս մոմենտից ամեն մի
պաշտոնական ոգնություն կորած է նրա համար, մինչև
վոր նա չփոխի իր հավատը: Սակայն, վորոշելով հաստա-
տուն լինել, նա գլուխը բարձր պահած դուրս յեկավ կար-
գինալի մոտից: Պապենը միամիտ կերպով հավատում էր,
վոր խելացի և ազնիվ մարդիկ կպաշտպանեն նրան մինչև
թագավորի վերադարձը:

Իսկ հետո յերբ Լյուդովիկոսը կվերադառնա, ամեն
ինչ կհարթվի թագավորը չի կարող չհասկանալ իր սե-
փական պետութւյան շահը:

9. ՀԵՐՈՍԸ ԿՈՒՍԱԿՐՈՆՆԵՐԻ ԼԱՐԱԾ ԹԱԿԱՐԴՆ Ե ԸՆԿՆՈՒՄ

Ծանր օրեր սկսվեցին Պապենի համար: Յեկեղեցա-
կանների մեքենայութուններն այն տեղը հասցրին Պա-
պենին, վոր նրան արգելեցին մտնել աղագեմիական լա-
բորատորիան: Նա սկսեց գրագարանի շենքում գտնվող
Հյուլզենսի մասնավոր լաբորատորիայում աշխատել, բայց
պատերազմական թատերաբեմից լուր ստացվեց, վոր հոլ-
լանդացի ֆիզիկոսն ընդմիշտ թողել է Լյուդովիկոս թա-
գավորի պալատը և վերադարձել է հայրենիք: Պապենը
չգիտեր իր բարեկամի այսպես շտապ հեռանալու իսկա-
կան պատճառը: Դենիի աղանջին ամեն տեսակ լուրեր
եյին հասնում: Վոմանք ասում էին, վոր հոլլանդացին
հանդուգն վերաբերմունք է ցույց տվել թագավորի նոր
սիրածներից մեկի հանդեպ, վոմանք էլ պնդում էին, վոր
Հյուլզենսին սիրող և հարգող Կոլբերն ինքն է խորհուրդ

տվել նրան՝ շուտ հեռանալ Ֆրանսիայից: Մինիստրը գիտեր,
վոր վաղ թե ուշ կաթոլիկները կապալեն Հյուլզենսին:

Հուլզենսոսների գրությունը շատ վտանգավոր էր դառ-
նում: Դենին այդ գգում էր իր կաշու վրա: Առանց այն
էլ շատ բարեկամներ չունեիր նա Փարիզում, իսկ այժմ
ամենևին: Ծանոթ կաթոլիկներն իրենց դուռը ծածկեցին
հերետիկոսի առջև: Հուլզենսոս բարեկամները, վորոնք ի-
րենց սեփական վիճակի համար եյին դողում, վախենում
եյին իրենց մոտ ընդունել պատվից ընկած գիտնականին:

Պապենը, ինչպես մի անապաստան, թափառում էր
Փարիզում: Չնայած բոլոր անհաջողութւյններին, նա լի
յեր նոր գաղափարներով: Պապենը խորհում էր ոգային
պոմպի միջոցով շուրը մի տեղից մյուսը տեղափոխելու
մասին: Նրա մեջ միտք ծագեց Հյուլզենսի շարժիչ մեքե-
նայի մեջ վառողը փոխարինելու մի աջնալիսի բանով, վո-
րը կարողանար լայնանալ և սեղմվել: Տեսական հավշում-
ներն արդեն արված էյին: Պապենին անհրաժեշտ էր փոր-
ձով ստուգել վառողը ջրի գոլորշիով փոխարինելու հնա-
րավորութւյնը: Նա գտնում էր, վոր յեթե հնարավոր լի-
ներ գլանի մեջ ջուր լցնել և այնուհետև տաքացնել այն,
գոյացող գոլորշին կստիպեր մխոցին շարժվել: Յեթե այնու-
հետև ջուրը սառցնես, գոլորշին կթանձրանա, կնստի և
մխոցի տակ դատարկութւյն կգոյանա: Մթնոլորտային
ոգը մխոցի վրա ճնշելով կստիպի նրան իջնել և մեքենան
ոգտավետ աշխատանք կկատարի: Այս միտքն անհրաժեշտ
էր ստուգել գործնականում: Բայց ինչպես, և վճռեղ:
Պապենը վոչ լաբորատորիա ուներ, վոչ էլ արհեստանոց,
վոր կարողանար ամենահասարակ փորձը կատարել:

Ազատ բույներին, մաթեմատիկական աշխատանքնե-
րից հանգստանալու համար, Պապենը թերթեր էր կարդում:
Հյուլզենսից ընդորինալից սովորությամբ, ավելի շատ ու-
տարեկրկյա թերթեր էր կարդում, քան Ֆրանսիական:

Գերմանական, հոլլանդական և անգլիական թերթերից նա տեղեկանում էր վոչ միայն այն մասին, թե ինչ է կատարվում արտասահմանում, այլ և տեսնում էր Ֆրանսիական կյանքը, վորն ամենևին այնպես չէր պատկերած ինչպես նկարագրում էր Ֆրանսիայի մամուլը։ Ամեն ինչ վկայում էր, վոր մոտենում է ահն ուր, յերբ հուզենոտների կյանքը Ֆրանսիայում անհնարին կդառնա։ Պապենը վերջապես հասկացավ, վոր բանը աստվածաբանական վեճերի մեջ չէ միայն։ Հավատի խնդիրները պատշաճ ծածկոց ելին միայն Ֆրանսիայում իշխանության համար պայքարող բանակների համար։ Մի կողմից արխիտոկրատներն ու պալատական բարձր ազնվականությունը, վորոնց ձեռնտու յեր անսահմանափակ կենտրոնացած միապետություն ույժը, մյուս կողմից՝ ծնվող բուրժուազիան և հողատիրական ազնվականությունը, վորոնց կաշկանդում էր թագավորի բռնակալությունը։ Թագավորական իշխանությունը խանգարում էր բուրժուազիային ազատ զարգացնել իր առեւտրական և արհեստավորական գործունեությունը իսկ ազնվականներին՝ ամրացնել և լայնացնել հողատիրությունը։ Այդ դժգոհների բանակի գլուխն ելին կանգնած նույնպես ազնվականներ՝ արքունիքի հակառակորդները։

Առաջին բանակը՝ թագավորականը, ամենազոր հոգեվորականությունն պաշտպանությունը վայելելով, հայտարարեց իրեն միակ ուղղափառ պապական¹ կաթոլիկ յեկեղեցու համար պայքարող, և նրա դրոշի տակ պայքարում էր դժգոհների դեմ, վորոնք իրենց յելույթներն «ազատ բողոքական յեկեղեցու» դրոշով ելին բողարկում։

Բողոքական կամ ռեֆորմատական յեկեղեցու կողմնակիցները՝ Կալվինի հետևորդները Ֆրանսիայում «հուզենոտ» անունն ելին կրում։ Ինքնըստինքյան հասկանալի չէ, իհարկե, վոր հուզենոտների մասսան—բողոքական

ապ— Հռոմի կաթոլիկ յեկեղեցու գերագույն պետը։

համայնքների մի քանի հարյուր հազար շարքային անդամներն—անկեղծորեն յերևակայում ելին, վոր իրենց ձևով աղոթելու համար են պայքարում։ Նրանք չեյին ել կասկածում, վոր իրենց բուռն պալքարը «հավատի համար» իշխանությունը ձեռք բերելու նպատակով պալատական յերկու թշնամացած բանակների պայքարի հետևանքն էր միայն։ Հուզենոտները, վորոնք գոյություն ունեցող կարգերի դեմ արտահայտած բողոքի շնորհիվ իրենց դրոշի տակ ելին հավաքել բոլոր դժգոհներին, չեյին ել կասկածում, թե ինչի համար են մղվում այսպես կոչված «հուզենոտական պատերազմները»։ Չէ վոր նրանց ազնվական առաջնորդները՝ իշխաններն ու դուքսերը, վոչ թե նոր, ազատ Ֆրանսիայի համար ելին պայքարում, այլ դեպի հին, Ֆեոդալական կարգերը վերադառնալու մասին ելին յերազուժում։ Նրանց հարկավոր էր միայն անկախություն թագավորից և իրավունք, վոր առանց կենտրոնական թագավորական իշխանության մասնակցության շահագործեն իրենց կալվածքները։

Հասկանալի չէ, վոր այս բոլորը վոչ թե պարզ ասված էր ոտաբերկրյա թերթերում, վոր կարգում էր Պապենը, այլ նրանք իրենց հարձակումները թագավորական Ֆրանսիայի վրա նույնպես քողարկում ելին բողոքական դավանության համար մղվող պալքարի շիրմալով։ Սահմանի մյուս կողմում գտնվող բողոքականները—գերմանացիք, հոլլանդացիք և անգլիացիք—Ֆրանսիայի վաղեմի թըշնամիները, հավատացնում ելին, վոր Ֆրանսիայի թագավորը ճնշում է հուզենոտներին այն պատճառով, վոր նրանք իբր թե նոր գաղափարներ քարոզողներ են, ահն ե՝ մարդու խիղճը պապական յեկեղեցու լծից ազատագրելու գաղափարներ, հետևապես և գիտություն, մտքի ազատություն համար պալքարողներ։ Այդ իրավացի յեր այնչափ, վորչափ Լյուդովիկոս Տասնչորսերորդի Ֆրանսիայում վոչ մի

հեղինակ, բանաստեղծ և գիտնական վոչ մի խոսք չեր կարող ասել և վոչ մի տող գրել, լեթե այդ չեր ծառայում պայծառ Արևի թագավորի և նրան շրջապատող պալատականների կլիկայի գովաբանությունը: Ամեն մի քրն-նադատություն դաժանորեն ճնշվում էր: Բանտարկվում էին վոչ միայն նոր գրքերի հեղինակները, այլ նույն իսկ նրանց ընթերցողները:

Այս բոլորի մասին Պապենն իմանում էր արտասահ-մանյան թերթերից, քանի դեռ հնարավոր էր զրանք ստա-նալ: Շուտով այս փոքր ի շատե ստույգ տեղեկություն-ների աղբյուրն էլ կտրվեց. ազատամիտ գրականությունն ներմուծումը Ֆրանսիա արգելվեց: Պապենին մնում էր միայն մասնավոր նամակագրությունը: Հենց այդ ժամա-նակամիջոցին ուժեղացավ նրա նամակագրությունը Լայբ-նիցի Հետ: Բարեկամաբար տրամադրված փխտոփան սի-րով գրում էր Պապենին: Պապենն այդ նամակագրության մեջ աջակցություն էր փորձում և գտավ: Նա նորից իրեն զգաց ուժեղ ու յեռանդուն: Նորից ուզեց աշխատել, ժամանակ չկորցնել Լյուդովիկոսի վերադարձին սպասելով, վորի վրա հույս դնելուց նա դեռ չեր դադարել:

Հենց այդ ժամանակ Պապենի աչքով ընկավ յեզվի-տական կուսակրոն հայր լե Գոստի հայտարարությունը գիտական վեճի մասին: Պատվելի պատերը պատրաստ-վում էր հրապարակային լեռնային՝ առաքատային գործի և նավասարքման տեսական հիմունքներն ապացուցելու համար: Պապենը գնաց ներկա լինելու: Լսելով լե Գոստի հաղորդումները, նա սարսափեց: Առաքատային նավա-գնացությունն նրա ամբողջ «հիմունքները» հանգում էին ալն բանին, վոր պետք է յեկեղեցու հայրերի գրածների մեջ տեքստեր փորձել, վորտեղ վորևե բան լինի ասված առա-քատների և առաքատանավերի մասին: Կուսակրոնն հենց այս անվանում էր «առաքատային գործի հիմունք-

ներ»: Պապենը չհամբերեց և կուսակրոնի դեմ լեռնային ունեցավ: Նա ջախջախեց զեկուցման յերևակայական գի-տականությունը և ապացուցեց լսողներին, վոր նավա-սարքման գործից կուսակրոնը վոչինչ չի հասկանում: Վո-գեվորվելով, Պապենն անցավ ծովագնացությունը վերա-բերվող սեփական մտքերին և հայտարարեց ժողովին, վոր նա մի մեքենա չե հնարել, վորը կփոխարինի նավերի ա-ռաքատներին: Նոր մեքենան հավասար արագությունը կշարժի նավերը թե քամու ժամանակ, թե հանդարտ յե-դանակին, թե հոսանքի ուղղությամբ, և թե հոսանքի դեմ: Սկզբում Պապենին ուշադրությամբ լսում էին, բայց յերբ նա հայտարարեց, վոր մեծ ու անհամար առաքատների փոխարեն իր նավի վրա փոքրիկ թիակներ ունեցող ա-նիվներ կլինեն, հանդիսականներին զվարճություն պա-տեց: Բոլորին ծիծաղելի թվաց, վոր այդ ցնորամուրը մտա-դրվում է ջրի վրա անիվներով շարժվել: Պապենին սաս-տիկ ծաղրեցին:

Գործը գրանով չվերջացավ: Վերավորված լե Գոստը և նրա բարեկամ կուսակրոնները կրակի ուժով գործող Պապենի այդ խորհրդավոր մեքենայի պոչից բռնեցին: Պապենին սրբապղծության և յեկեղեցու հայրերին վիրա-վորելու մեջ մեղադրեցին: Նրանց խոսքով՝ դեռ ինքը, սուրբ Նիկոլայն էր որհնել առաքատներն իբրև միակ միջոց նավը շարժելու համար: Յեկեղեցու հայրերի աշխատությունների մեջ վոչ մի տեղ չի ասված վոչ մի այլ ուժի մասին, բա-ցի քամու և հոսանքների, վոր կարող են շարժել առա-քատանավերը: Ուստի նա, ով անդում է, թե բնություն մեջ գաստանավերը: Ուստի նա, ով անդում է, թե բնություն մեջ նոր այդպիսի ուժ է գտել, գործում է վոչ այլ կերպ, բայց լեթե սատանայի զրգումով:

Այժմ Պապենի թշնամիներն ուղղակի հնարավորու-թյուն ստացան մեղադրելու նրան հավատի մեջ գոր-ծած հանցանքի մեջ: Դա վտանգավոր մի գեներ էր նրանց

ձեռքին՝ վոչ մի պաշտպան չունեցող հուգենոտի դեմ պայքարելու համար:

Տերտերական կոմպանիան ոգավեց այդ գեներից: Շատ շուտով Պապենին կանչեցին կարգինալի գրասենյակը. սակայն այս անգամ նրա հետ կարգինալը չէր խոսում, և վոչ վոք չէր հետաքրքրվում նրա աշխատանքներով: Պապենը կանգնած եր մի սեղանի առաջ, վորի մոտ սուտաններ¹ հագած աստիճանավորներ էյին նստած, և գրի էյին առնում նրա ամեն մի խոսքը:

10. ՅԵԶՎԻՏԱԿԱՆ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱԿԻ ՎԵՐՋԻՆ ԿԱԹՈՒԼԸ

Քննութիւնը յերկարեց: Պապենին չձերբակալեցին, վորովհետև կարգինալը քաղաքից բացակայում էր: Կուսակրոնները չգիտեյին, թե վորքան խիստ կարելի յեր վերաբերվել ակադեմիկոսին: Բայց նրան վոչ մի ըոպե հանգիստ չէին տալիս. ամեն տեսակ մանր ինտրիգներով հետապնդում էյին նրան և հաճախ հարցաքննության կանչում:

Պապենը վորոշեց անձնատուր չլինել: Նա համառ կերպով շարունակում էր աշխատել, վորքան հնարավորութիւն էյին տալիս պայմանները: Հենց այդ ժամանակ Փարիզում լուր տարածվեց, վոր Սաբլեյից Բենյե անուհով մի փականագործ է յեկել, և պարծենում է նրանով, վոր մի տեսակ թեվեր է հնարել, վորոնցով մարդ կարող է թռչել: Այդ ապացուցելու համար Բենյեն մտադրվել էր Սենալի մի ավից մյուսը թռիչք կատարել: Այս լուրը մինչև Պապենին հասնելն ամեն տեսակ առասպելներով զարդարվեց: Մի քանիսը Բենյեյի մասին արտահայտվում էյին իբրև մի խաբեբայի, վորը գավառից յեկել է փա-

րիզցիներին ձեռք առնելու համար: Մյուսները, վորոնք կրոնականորեն էյին տրամադրված, յենթադրում էյին, վոր այդ արհեստավորի կոշտ բաձկոնի տակ վորևէ համեստ, բայց կրթված կուսակրոն է թագնվում: Նրանք յենթադրում էյին, վոր սուրբ հոգու աջակցությամբ կուսակրոնն իմացել է, թե ինչպես է Հիսուս Քրիստոսը յերկինք համբարձել և հիմա այդ կուսակրոնը ցանկանում է յեկեղեցու ճշմարիտ գավախների համար հեշտացնել ճանապարհորդութիւնը դեպի յերկինք: Վերջապես կային և այնպիսիները, վորոնք առհասարակ վախենում էյին բացարձակ խոսել Բենյեյի գլուտի մասին: Զե՛ վոր հայտնի յեր, վոր նման բաներ կատարվում են միայն չար վոգու հորդորանքով: Յեկեղեցու հետ էլ փոխհարաբերութիւնը կփչացնես: Իսկ ժամանակն այնպես չէր, վոր կարելի լինէր կուսակրոնների գթասրտութիւնն արհամարհել:

Բենյեյի մասին տարածված լուրերը Պապենին էլ հասան: Նա հետաքրքրվեց այդ մարդով: Բամբասանքների կեղեվի տակ նա առողջ մտքով կորիզը շոշափեց և վորոշեց բանալ այն: Պապենը յեկավ Բենյեյի մոտ: Պարզվեց, վոր Բենյեն իսկապես յեկել էր գավառից և թռչելու մեքենա չէր հնարել: Փականագործը հիրավի պատրաստվում էր Փարիզի վրա թռչելով զարմացնել հանդիսականներին և այդպիսով փառք և հարստութիւն ձեռք բերել:


Բենյեն ապրում էր մի եժան իշկանատան հետևի բակում, վորտեղ նրան մի կիսաքանդ սրահ էլին վարձով տվել: Այստեղ Պապենը տեսավ փականագործի ապարատը: Պարաններից, փայտե ձողերից և թիթեղյա շերտերից մի կառուցվածք էր դա, վորը կախված էր առաստաղից: Ուշադրությամբ դիտելով ապարատը, Պապենն այն յեղրակացությանը յեկավ, վոր ամենից առաջ փականագործը վոչ խաբեբա էր, վոչ էլ հիմար: Նա գիտեր, թե ինչ է անում: Բենյեն համոզում էր, վոր փայտա-

¹ Սուտան—կաթուղիկ հոգեվորականության նեղ թեվերով Փարաջան (կապան):

ձողերը նրանց ամրացված թիթեղների հետ միասին թափահարելով, ողում անհրաժեշտ հենարան կունենա: Փայտածողի ծայրը բարձրացնելիս թիթեղյա շերտերը կծալվեն և ողին զիմադրութուն ցույց չեն տա. իսկ իջնելիս նրանք կտարածվեն և ողի վրա հենվելով, վերամբարձ ույժ կստեղծեն: Սկզբունքորեն այդ ճիշտ եր, բայց Պապենի մեջ կասկած առաջացրեց այն, թե արդյոք մարդը թուիչքի ընթացքում կկարողանա զեկավարել այդ փայտերը և ողի մեջ հավասարակշռութուն պահպանել: Վորպեսզի վիրավորած չլինի գյուտարարին, Պապենը մեղմ ձևով հայտնեց նրան իր կարծիքները, բայց Բենյեն վոչինչ լսել չեր ուզում: Պատասխանի փոխարեն փայտածողերից կապեց իրեն և կախվելով նրանցից, հենց այստեղ, սրահատանը ցույց տվեց Պապենին, թե ինչպես կթուչի նա: Այս տեսարանի ժամանակ գիտնականի համար միանգամայն պարզվեց, վոր Բենյեն ինքն իրեն բազմության ծաղրին է դատապարտում: Պապենը փորձեց հետ կանգնեցնել փականագործին թուչելու մտադրութունից, բայց նա համառ եր: Փականագործը զիմեց Պապենին և խնդրեց, վոր նա ողնի իրագործելու իր այդ յերազանքը, վորով արդեն մի քանի տարի նա ապրում եր և այդ գյուտից բացի վոչ մի այլ բանի մասին չեր կարողանում մտածել:

Պապենն իր վրա յեր փորձել, թե վորքան ծանր և գյուտարարի համար, յերբ նա հնարավորութուն չունի փորձի յենթարկելու իր ապարատը: Նա անգոր եր մերժելու Բենյեյի այդ խնդիրը: Պապենն այսպես դատեց. ամենավատ դեպքում հանդիսատեսները կսուլեն Բենյեյին և նա կլողանա Սենայի ջրերում: Բանը վերջացավ նրանով, վոր Պապենը մի հողված գրեց, վորով ազդարարում եր Փարիզի ժողովրդին Բենյեյի մտադրութունների մասին և ծանոթացնում եր նրա գյուտի հետ:

Պապենը նախազգում եր, վոր մամուլի մեջ հանդես



ճիւտարար մը Գոթիով մշտնախմբու
Գոթիով ելքովով ամբողջով 7 Գոթիովարարի Գոթիովարար

գալը կարող է իրեն ֆլասել, բայց գյուտարարին ոգնու-
թյուն ցույց տալու նպատակով արհամարհեց այդ վտանգը:
Նա հույս ուներ, վոր այսոր կամ վաղը թագավորը Փարիզ
կվերադառնա և կարծում էր, վոր մոտ է այն օրը, յերբ
կարող կլինի գանգատվել թագավորին իր կրած բոլոր
հալածանքների մասին:

Պապենն անհամբեր սպասում էր Լյուդովիկոսի վե-
րադարձին, բայց նույն անհամբերությամբ սպասում էին
այդ վերադարձին և նրա թշնամիները: Չէ՞ վոր թագավորի
հետ միասին վերադառնում էր նաև կարդինալը, Կարդի-
նալն արդեն չի խնայի այդ հերետիկոսին, նա կոգնի, վոր
այդ հուզենոտից ազատվեն:

Կարդինալի վերադարձին սպասելով՝ թշնամիները
վորոշեցին ոգտազործել Բենյեյի մասին գրած հոգվածը
և բացարձակ գրոհի անցան:

Մի անգամ Պապենը տուն էր վերադառնում: Այն
փողոցի անկյունում, վորտեղ նա սենյակ էր վարձել,
տանտիրուհու տղային հանդիպեց: Պարզվեց, վոր տղան
արդեն վաղուց սպասում էր Պապենին, տղան նախազգու-
շացրեց, վոր տունը շրջապատված է վոստրիկաններով:
Նա Պապենի ձեռքը դրեց նրա վերարկուն և մի կտոր
հաց ու փախավ:

Գիտնականը մտահոգված կանգնած էր փողոցում:
Նա ապաստանից ել գրկվեց: Միակ տունը Ֆրանսիայում,
վորի դուռն այժմ բաց էր նրա համար, բանտն էր: Բայց
նա վոչ մի զեպքում այնտեղ չի գնա: Չէ՞ վոր անձնա-
տուր լինել թշնամիներին, նշանակում էր ընդմիշտ հրա-
ժարվել աշխատանքից:

Պապենը չերկար թափառում էր փողոցներում և չեր
իմանում, թե վորտեղ պատասպարվի: Թարմ մառախլապատ
առավորը նրան գտավ ձորակում: Վերարկուի մեջ փա-
թաված այնտեղ գիշերեց: Մարդկանց աչքերին չերևա-

յու համար վորոշեց ցերեկն ել այնտեղ անցկացնել: Մու-
թըն ընկնելուց հետո միայն նա դուրս լեկավ իր պատըս-
պարանից:

Մթության մեջ փողոցում թափառելիս հանկարծ նա
իր անունը լսեց: Առաջից անցնող մարդիկ խոսում էին
նրա մասին: Պապենն ուրախացած ուզեց մոտ վազել այդ
անցորդներին, բայց ժամանակին նկատեց, վոր նրանցից
մեկը վոստրիկան է, մյուսը կուսակրոն: Նրանք աշխույժ
խոսում էին իրար հետ: Այդ մարդիկ պիտի գտնելին
իրեն, ձերբակալեյին և կարդինալի գրասենյակը տանելին:
Վաղը վերադառնալու էին թագավորն ու կարդինալը:

— Սատանան տանի այդ հուզենոտներին, — ասաց
վոստրիկանը, — անվերջ գլխացավանք են պատճառում մեզ:
Կուսակրոնն ուրախ պատասխանեց.

— Սպասիր, զավակս, մի քիչ ել, ու մենք նրանց
հախից կզանք: Նրանց մենք ցույց կտանք:

— Իմ կամքով վոր լինեի, յես նրանց թուի վրա պար
կածելի:

— Անքննելի յես ասածո ճանապարհները: Յես և
դու չենք կարող իմանալ, թե ինչ է սպասում այդ հերե-
տիկոսին՝ պարան, թե՞ կացին: Գովաբանենք ամենաբարձ-
րյալին, վոր մեզ է ընտրել իբրև զենք Քրիստոսի հոտն
այս քոսոտ վոչխարից մաքրելու համար: Այսպես թե այն-
պես, Պապենի մոլորված հոգին յերկար չի տանջվի իր գար-
շելի մարմնի մեջ:

— Այդ ճշմարիտ է, միայն թե գտնենք նրան:

Պապենը հետ մնաց խոսակիցներից: Վերարկուի մեջ
ամուր փաթաթվեց ու հոգնած, քարշ գալով զնաց զեպի
քաղաքի ծայրամասը:

11. ԹԵ ԻՆՉՊԵՍ ԽՆԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՅՎԵՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ
ՅԵՎ ԻՆՉ ՀԵՏԵՎԱՆՔ ՈՒՆԵՑԱՎ ԱՅԴ

Մարդկանցից թագնվելով և ամեն մի շողքից խուսափելով, Պապենն ամբողջ գիշեր վոտքի վրա անցկացրեց: Նա թափառում եր, վախենալով թե կնստի ու քընով կանցնի, վորպես զի հանկարծակիի բերված չբռնվի: Միայն յերբ լուսացաւ ու գիշերվա պահակներն իրենց շրջագայությունը վերջացրին, Պապենը վորոշեց մի վորևե պանդոկ գտնել: Ուզում եր թուղթ ու թանաք խնդրել և թույլտվութիւն, վոր մի ժամ նստի սեղանի մոտ և խնդիր գրի թագավորին:

Նա քաղաքի ծայրում մի դատարկ պանդոկ գտավ: Այստեղ, վորքան կարող եր, շտապ մի խնդիրք գրեց Լյուդովիկոսին ու նորից դուրս յեկավ փողոց, դեմքը վերարկուով ծածկած:

Պայծառ ուր եր: Քամու ամեն մի շունչը տոթի նոր ալիքներ եր բերում: Կարելի չեր անձրև սպասել, յեթե յերկինքն այդպես անվրդով ու անամպ չլիներ:

Պապենն ամբողջ քաղաքն անցավ և ուղեվորվեց դեպի Լուվր: Կարողել հրապարակը լի չեր տեսարանների սիրահար Փարիզի դատարկապորտներով: Պապենը հազիվ կարողացավ անցնել բազմության միջից: Հասնելով Սեն-ժերմենի աբբայության առափնյա փողոցին, տեսավ, վոր այստեղ նույնպես շատ բազմութիւն եր հավաքված: Այն ժամանակ նա վորոշեց պալատից մոտիկ մի տեղ բռնել և հասավ մինչև պահակների շղթան, վորը զսպում եր խռնվող ժողովրդին:

Թագավորը պիտի գար կեսորին: Բայց արդեն զանգերը գիշերվա ժամերգության ելին կանչում հավատացյալներին, իսկ թագավորը դեռ չկար: Սպասելուց հոգնած ժողովուրդն առանց քաշվելու հաճոյում եր կարգերը:

Արդեն տոթն իրիկնագեմի զովությամբ փոխարինվեց, մարդիկ ավելի հաճախ սկսեցին խոսել բաց թողած ընթերթի մասին: Արդեն գիշեր եր, յերբ վերջապես փողերի ձայները լսվեցին ու ջահերը փայլեցին: Յերևաց թագավորական լերկար շքերթը: Հետիոտն սուրհանդակներին հաջորդում ելին հեծյալ պահակները, հեծյալ պահակներին՝ մուշկետավորները: Փայլում ելին ասեղնագործ բաճկոնները: Պահակների ձեռքերին որորվող ջահերից ձյութի ցայտյուններ ելին թափվում հանդիսատեսների գլխերին: Ամբոխի միջլսվում ելին այրվածների ու կոխկոտվածների հառաչանքները: Հետևի շարքերում կանգնածներն առջևում կանգնածների թիկունքների հետևից վոչինչ չեյին տեսնում, բայց բոլորն իրար վրա ելին բարձրանում և ուրախ գոռում: Բայց ահա հեծյալների ճնշման տակ ամբոխը հետ քաշվեց և յայն անցք բացեց: Սևաթույր ձիեր լծած կառքը յերևաց: Ձիերի ալանջների մեջադից ահագին փետրավինջեր ելին բարձրանում: Փետրավինջերը ճոճվում ելին կառքի վոսկեգոծ վերնակի հետ համաչափ: Կառքի անիվներն այնքան մեծ ելին, վոր մեկնած ձեռքով հազիվ կարելի չեր նրանց բարձրությանը հասնել: Կառքի կարմիր կողովը վոսկեգոծ զարդեր ուներ: Նույն գույնի ելին ձիասարքը և կառավարի ատլասե բաճկոնը: Արտասովոր հասակի ու հաստության տեր այդ յերիտասարդ կառավարն արձանի նման նստած եր բարձր նստիքի վրա:

Հազարավոր պարանոցներ յերկարացան: Մարդիկ աշխատում ելին գոնե մի բան տեսնել կառքի լուսամուտներից: Այնտեղ մուգ կարմիր մետաքսե բարձերի վրա բազմած ելին յերկու հոգի: Մեկը՝ ամենախորքում նստածը վոսկեթելերով և թանգարժեք քարերով զարդարած շքեղ բաճկոն ուներ հազին: Մի քանի շարք փետուրներով զարդարված գլխարկը դրված եր սև մագերից սարքած ահագին պարիկի վրա: Յերկար խոսուպիկներն ալիքաձև իջնում

եյին ուսերն, ուր ճոխ բանտեր եյին ցցված: Ճամբորդի դեմքի վրա գլխարկի գցած ստվերի պատճառով հանդիսատեսներին չէր յերեւում նրա այտերը ծածկող կարմիր ու սպիտակ շպարի հաստ շերտը: Լուսամուտից միայն կիսադեմքն էր յերեւում ծանր կախված շրթունքով ու անազին կեռ ու մասլի քթով, վորը մինչև կզակն էր իջել: Հենց դա յեր թագավորը:

Հանկարծ ամեն ինչ ցնցվեց—սուրհանդակները, պահակները, հանդիսատեսների ամբոխը: Թագավորական շքերթը կանգ առավ:

Թագավորական ձիերի վեցյակի առջև, ուղղակի փոշոտ սայլակի վրա ծնկաչոք կանգնած էր Պապենը: Յերբ ձիերը կանգնեցին, Դենին վեր թռավ ու մոտ վազեց կառքի դռնակին: Թագավորի դեմքը վախից այլանդակվեց: Նա թափով խորքը քաշվեց և ծածկակառքի անկյունում կուչ յեկավ, աշխատելով թազնվել բարձերի մեջ: Անհաղթ Լյուդովիկոսի աչքերն անից չուկեցին, իսկ ներքևի շքերթունքը կախվեց ու դողաց:

Պապենի աչքերը թագավորի աչքերին հանդիպեցին: Նա ձեռքը ծոցը տարավ, ուզեց իր խնդրը հանի: Թագավորին թվաց, թե անա իսկույն այս սև վերարկուով մարդը ատրճանակ կհանի և կրակի մի խուրձ կնետվի իր դեմքին:

Այս բոլորը կատարվեց շատ արագ: Թագավորի կողքին նստած ազնվատոհմ իշխանը հազիվ կարողացավ ըմբռնել, թե ինչ է կատարվում: Նա բռնեց դեպի կառապանը տանող լարը և խուճապահար սկսեց քաշել այն: Կառապանը յերկար խարազանով զարկեց ձիերին և նրանք շարժվեցին: Կառքի վոսկեգոծ վոտքատեղով հարված ստացած Դենին մի կողմ նետվեց: Ամբոխն անմիջապես նրա շուրջը հավաքվեց:

Յերբ Պապենն ուշքի յեկավ, ուսի վրա մի ծանր

ձեռք զգաց: Նրա գլխին վոստիկանական զգեստով մի մարդ էր կանգնած:

— Վեր կացեք և հետևեցեք ինձ,—հրամայողական ձայնով ասա նա:

Դենին հնազանդ բարձրացավ և հետևեց արագ քայլող վոստիկանական պաշտոնյային: Նա չէր մտածում փախչել: Դիտեր, վոր ամբողջ Փարիզում և ամբողջ Ֆրանսիայում վոչ մի տեղ ապաստարան չի գտնի: Իսկ վոստիկանական պաշտոնյան արագացնում էր քայլերը: Դենին հազիվ էր նրան հաոնում: Յերբ նրանք դուրս յեկան ամբոխի միջից, վոստիկանը կանգնեց և շնչաց:

— Պարոն Պապեն, յես թույլ եմ տալիս ձեզ փախչել, բայց ձեր տրամադրության տակ մի քանի ժամ կա միայն: Ընտրեցեք դեպի նավահանգիստ տանող ամենակարճ ճանապարհը:

Վոստիկանի ձեռնալապտերի լույսի ցուլքի տակ Պապենը տեսավ նրա դեմքը: Դեմքը ծանոթ թվաց նրան, բայց չկարողացավ հիշել, թե ով է: Հազիվ կարողացավ Պապենն իր ժտքերը հավաքել, վոր գոնե շնորհակալություն հայտնի իր անսպասելի փրկարարին, բայց վերջինըս արդեն անհայտացել էր:

Մ Ա Ս Ն II

1. ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Պապենը կաթսայի խուփը հետ պտտեց և այնտեղից հանեց նրա մեջ յեղածը: Պարզ ժելե էր այն: Մի քանի ժամ առաջ Պապենը ջարդված վոսկորներ էր կաթսայի մեջ դրել, այդ վոսկորներն եժան գնով հարևան մսագործից էր վերցրել, վրան ջուր էր ածել ու կաթսան կրակի վրա դրել: Վոսկորները ժելե եյին դարձել:

Պապենը ժելեյի մեջ արմտիքներ ածեց և հնդկական

պղպեղ ցանեց վրան ու ախորժակով սկսեց ընթերել, չնայած վոր այս կերակուրն արդեն սկսել էր ձանձրացնել նրան: Վաղուց արդեն միակ կերակուրն էր դարձել իր կերակրացանկի մեջ և ամենաեծան բանն էր, վոր կարող էր պատրաստել իրեն համար Պապենը: Հինգ տարի սրանից առաջ նա վոտք դրեց Անգլիայի հողի վրա: Այս յերկիրն այնքան էլ սիրալիր չընդունեց նրան: Մի տարուց ավելի նա անգործ այս ու այն կողմն էր ընկնում. ապրում էր Լոնդոնի չքավորների գետնախորշերում և սովում էր: Անգլիական ամբարտկան գիտնականները չեղին ցանկանում ճանաչել Ֆրանսիացի ցնցոտիապատ թափառականին: Վերջապես, նրան այստեղ գալու մասին իմացավ հայտնի ֆիզիկոս Ռոբերտ Բոյլը և ցանկացավ տեսնվել հետը:

Հունվարի ամսամաս՝ մի որ, ցրտից դողալով, սոված Պապենը յեկավ քաղաքից դուրս գտնվող Բոյլի կալվածքը: Սակայն վոչ քաղցը, վոչ էլ զրկանքները չեղին ազդել Պապենի պայծառ մտքի և գիտությանը նվիրված լինելու վրա: Մի քանի ժամվա խոսակցութունը բավական էր Բոյլի համար, վորպեսզի նա կարողանար գնահատել յեկվորին: Բոյլն առաջարկեց նրան միասին աշխատել: Մի ամսից հետո Պապենը հարգելի անգլիացու ամենամոտիկ աշխատակիցն էր: Վերսկսվեց աշխատանքն ուղալին պոմպի վրա՝ վորն առանձնապես հետաքրքրել էր Բոյլին:

Մի տարուց հետո Բոյլն առաջարկեց թագավորական ընկերությանը¹, իսկական անդամ ընտրել Պապենին: Յերկար վեճերից հետո, Անգլիայի գիտության սյուների ժողովը համաձայնվեց իր շարքերն ընդունել «միտեր Դենի Պապենին»: Այս մոմենտից Պապենի գիտական դիրքն Անգլիայում վերջնականապես ամրապնդված կարելի յեր համարել:

¹ Թագավորական ընկերություն — գիտական հիմնարկություն, վորն Անգլիայում Գիտությունների Ակադեմիայի դերն է կատարում:

Բայց այս հաջողութունները կարիքից չազատեցին Պապենին: Նա չուներ աջակիսի մտերիմ բարեկամ, ինչպես Հյուգենան էր, վոր մտնում էր նրա կյանքի բոլոր մանրուքների մեջ: Բոյլը շատ լավ էր վերաբերվում Պապենին, բայց ծանոթ չէր նրա իսկական դրության հետ: Բոյլը հարուստ էր և կարիք չուներ մտածելու առօրյա մանր բաների մասին: Նրա մտքով անգամ չէր անցել հետաքրքրվել, թե ինչով է ապրում Պապենը: Ոգնականի կողմից վոչ մի գանգատ չէր լսել, նա կարծում էր, վոր Պապենի կյանքում ամեն ինչ հաջող է ընթանում: Նա չգիտեր, վոր հպարտությունից և ինքնամոլոյի բնավորությունից Դենին թագցնում էր իր ծանր դրությունը: Պապենը ոռճիկ չէր ստանում, այլ պատահական վաստակով էր ապրում:

Սակայն անձնական ձախորդությունները չեղին կարող խորտակել Դենիի յեռանդը: Թագավորական ընկերության անդամ լինելը շոյում էր նրա ինքնասիրությունը և Դենին ավելի մեծ յեռանդով սկսեց աշխատել վառելանյութի ամենաարդյունավետ ոգտագործման խնդրի վրա: Մի շարք փորձեր կատարելով Պապենը մի ապարատ հնարեց, վոր անմահացրեց նրա անունը: Այդ ապարատը պատմության մեջ մտավ «Պապենի կաթսա» անունով:

Կաթսան ուներ պտուտակների միջոցով ամուր փակվող խուփ: Յեփելու նյութը դրվում էր կաթսայի մեջ և խուփը պտուտակներով ամուր կալնվում էր: Այդպիսով կաթսան հերմետիկորեն փակվում էր: Միջի նյութը յեփվում էր գոլորշու մեծ ձնշման տակ:

Պապենն արդեն գիտեր, վոր յեթե փակ տարածության մեջ պարունակվող գոլորշին շարունակես տաքացնել, նա ընդունակ է պայթեցնելու նույն իսկ թնդանութը: Պայթյունից խուսափելու համար Պապենը պահպանող

հարմարանք սարքեց: Այդ ինքնագործուն պահպանակ կա-
փուլըն եր: Կափուլըի ձողից միացած լծակին բեռ եր
ամրացվում: Վորքան փոքր եր լինում այդ բեռը, այնքան քիչ
գոլորշու ճնշում եր պետք կաթսայի ներսից, վոր բացվեր կա-
փուլը: Այսպիսով, այսլթյունից չվախենալով, Պապենը կա-
րող եր կարգավորել գոլորշու ուժը կաթսայի մեջ: Չնա-
յած, վոր այդ հարմարանքը շինված եր իմիջի ալոց, իբ-
րև ոժանդակ մաս, սակայն նա այնքան կարևոր դարձավ,
վոր ընդմիջտ կապեց Պապենի անունը մեքենակառուցման
պատմության հետ: Պահպանիչ կափուլը (փոքր ինչ
ձևափոխված) իր գոյությունը պահպանեց մինչև մեր
որերը:

Վորպես շնորհակալություն իրեն թագավորական
Ընկերության անդամ ընտրելու առթիվ՝ Պապենն իր պահ-
պանիչ կափուլով բարձր ճնշման կաթսան ընկերությա-
նը նվերեց: Գիտնականները մի քանի փորձեր կատարե-
ցին այդ գործիքով և մի կողմ գրին այն: Նրանք գեռ
չգիտեին, թե հետազոտությունների ինչ շրջանակներում
կարելի չեր գործադրել այն: Իսկ Պապենն իր գործիքը
ստեղծել եր զուտ գործնական նպատակների համար: Հե-
տազոտությունները կատարելիս նա գտավ, վոր սննդա-
նյութերը նրա կաթսայի մեջ շատ արագ կոսսերվացիա-
յի չեն չենթարկվում, իսկ վոսկորները յերկար յեփելուց
ժելե են դառնում: Պապենին հետաքրքրական թվաց այդ
և նա առաջարկեց խոհարարներին՝ ոգտագործել իր կաթ-
սան կերակուր պատրաստելու համար: Նա համոզում եր,
վոր իր կաթսան գործադրելով, կարելի չե մի քանի ան-
գամ իջեցնել պուդգինգի, ժելեյի և այլ կերակուրների
արժեքը:

Սակայն այդ առաջարկը վոչ վոքի չհրապուրեց: Վոչ վոք
չուզեց ոգտվել նրանից: Պապենը վորոշեց անձամբ վաճառե-
լու համար ամեն տեսակ սննդամթերքներ պատրաստել: Բայց
չյուզեցնսի գուշակումը, վոր արավ նա մի ժամանակ Ֆրան-

սիայում, ճշովեց նաև անգլիական հողի վրա: Պապենի վրա
թափվեց վաճառականների վոհմակը: Նա վոչ սննդամթերք
վաճառողների համբարության անդամ եր, վոչ ել խոհարար-
ների ընկերության անդամ և թագավորական արտոնու-
թյուն չուներ այդ զբաղմունքի համար: Պապենը հազիվ
ազատվեց բանտարկությունից: Նա թագցրեց իր ապա-
րատը և այժմ ոգտվում եր նրանից միմիայն իրեն համար-
կերակուր պատրաստելիս:

Վաճառականների կողմից Պապենի դեմ հարուցած
գործը գիտնականների աչքից գցեց նրան: Թագավորա-
կան Ընկերության անդամները սկսեցին խեթ նայել
ոտարերկրացու վրա: Ասում եյին, վոր նա սկսել ե մանր
շահախարդախությամբ զբաղվել և խախտել ե խոհարար-
ների ցեխին տված արտոնությունը: Այդ հարցը նույնիսկ
քննվեց Ընկերության ժողովներից մեկում:

Ի պատասխան Ընկերության անդամների հանդիմա-
նությանը՝ Պապենը հայտարարեց, վոր լեթե նրանք չեն
հավանում իր մասնավոր գործերը, թող իրեն ապրուստի
միջոց տան: Գիտնականները շատ զարմացան: Անդամների
անձնական կյանքի քննարկումն Ընկերության գործունեյու-
թյան շրջանի մեջ չեր մտնում: Ֆիզիկոսներն ու քիմի-
կոսները, փիլիսոփաներն ու աստվածաբաններն ուսերը
վեր քաշեցին: Վերջացավ նրանով, վոր Ընկերության խոր-
հուրդը հանդիմանություն արավ Պապենին և առաջար-
կեց ձեռք վերցնել այն մանր գործերից, վորոնք նրա
վրա, իբրև այդպիսի բարձր հիմնարկության անդամի,
բիժ են թողնում: Պապենը զայրացավ այդ վորոշումից:
Գիտնականները խանգարում ելին նրան ապրուստի մի-
ջոց հայթայթելում, իսկ իրենք վոչինչ չեյին ուղում
անել: Այդ հանդիմանությունից զայրացած՝ նա խորհրդի
ժողովից ուղղակի վենետիկյան դեսպանի մոտ գնաց:

Վենետիկի հանրապետության դեսպանն արգեն մի

քանի անգամ առաջարկել եր Պապենին անցնել իր պետության ծառայությանը: Նա ամենագրավիչ պայմաններ եր առաջարկում: Վենետիկում վերջին ժամանակները գիտությունների ակադեմիային հիմնել և գերապայծառ հանրապետության կառավարությունը դեմ չեր լինի առաջին ակադեմիկոսների թվում տեմնել այնպիսի հայտնի գիտնականին, վորպիսին դարձել եր այդ ժամանակ Պապենը:

Վերափոխված և հուզված Պապենը վորոշեց ստորագրել զեպպանի հետ կնքած պայմանագիրը: Նա արագ վերջացրեց իր Լոնդոնի գործերը և նավ նստելով մեկնեց Իտալիա: Նա յերազում եր լայն գործունեյության մասին վենետիկյան յերիտասարդ Ակադեմիայում: Հուլյա ուներ, վոր Գալիլեյի և Տորիչելլիի հայրենիքը կդառնա նաև իր նոր յերրորդ հայրենիքը: Պապենը շատ եր ուզում մշտական ապաստարան ունենալ. այժմ նա արդեն մենակ չեր, նրա հետ մեկնեց նաև ընտանիքը:

2. ՅԵՐՐՈՐԴ ՀԱՅՐԵՆԻՔՆ ԱՌԱՋԻՆ ՅԵՐԿՈՒՍԻՑ ԼԱՎ ԶԵՂԱՎ

Վենետիկում Պապենին շատ լավ ընդունեցին: Արտասովոր հարգանք ցույց տվին, բարձր ուճիկ նշանակեցին և հրաշալի բնակարան հատկացրին: Լոնդոնի աղքատ թաղամասում ապրելուց հետո այս բոլորը Պապենին շատ ուրախացրեց: Նա յեռանդով գործի կալավ նոր Ակադեմիայում: Բայց հենց այստեղ սկսեցին անախորժությունները:

Վենետիկի պետության գլուխ հարուստ վաճառականներն եյին կանգնած: Նրանք հիմնել եյին Ակադեմիան և ոտարեկրյա գիտնականներ հրավիրել բոլորովին վոչ այն նպատակով, վոր առաջ շարժեն գիտությունը: Գիտությունը նրանց շատ քիչ եր հետաքրքրում: Վաճառա-



Պապենն իր կաթսան նվիրեց Թագավորական Վնդերությունը:

կաններն ուզում եյին, վոր ուրիշ յերկրները տեսնեն, թե ինչպես ե Վենետիկը հովանավորում գիտությունները:

Այն ժամանակ դա մոգա յեր: Թագավորներից շատերը գիտնականներ եյին պահում իրենց արքունիքում: Մանր իշխանները հետևում եյին մեծ իշխանների որինակին և նույնպես աստղաբաշխներ, մաթեմատիկոսներ և փիլիսոփաներ եյին վարձում: Վենետիկի վաճառականները, համարելով, վոր իրենց կառավարությունը՝ վոչ մի բանով պակաս չե զանազան իշխանների և թագավորների արքունիքներից, նույնպես վորոշեցին սեփական Ակադեմիա հաստատել: Բայց, ճիշտ այնպես, ինչպես և թագավորներին, այս Ակադեմիան պիտի ցույց տար միայն, թե վորքան լավ են գնում Հանրապետության գործերը, թե վորքան կրթված են նրա կառավարողները: Իրենց գիտնական հուշկող շատ խաբեբաներ կարողացան մտնել Ակադեմիա: Նրանք սովոր եյին այդպիսի կարգերին և ուրախ եյին: Սակայն ամենավին այդ բանի համար չեյ յեկել Պապենը հեռավոր Անգլիայից: Նա ծարավ եր գիտական գործունեյության: Նրա տանջակ զաղափարները պետք եր փորձով ստուգել: Պապենին անհրաժեշտ եյին լաբորատորիաներ և արհեստանոցներ: Նրան հարկավոր եյին ոգնականներ, վոչ թե խաբեբաներ ու դատարկապորտներ, այլ իսկական գիտնականներ, վորոնք Իտալիայում ել հեշտ չեյին ապրում:

Պապենի մտադրությունները տարբեր եյին պետության ծրագրերից: Աստիճանավորներն սկզբում զարմացան Պապենի պահանջների վրա, իսկ հետո զայրացան: Սկսվեցին վեճեր ու անհամոթյուններ: Հրաժարվեցին միջոցներ բաց թողնել նույնիսկ ամենաանհրաժեշտ աշխատանքների համար:

Հուսաբեկված գիտնականն սկսեց իր սեփական զրամբ ծախսել փորձերի վրա: Ռոճիկից ընտանիքի համար վոչինչ չեյ մնում: Շատ շուտով ազատ կյանքը վերածվեց

այն նույն խղճուկ գոյությանը, վոր վարում եյին Պապեններն Անգլիայում:

Պապենը յերեք տարի պայքարեց Հանրապետության աստիճանավորների դեմ: Վերջապես տեսավ, վոր իր փոքրիկ միջոցներով վոչինչ չի կարողանա անել, իսկ այդ ժլատ կառավարողներից դրամ ստանալն անհնարին ե:

Պապենը գժովեց աստիճանավորների հետ և վորոշեց մի անգամ ել Անգլիայում փորձել իր բախտը, վորտեղ այնուամենայնիվ վորոշ կապեր ու ծանոթություններ ունեւր:

Յեւ ահա Պապենը նորից յերեւում ե Լոնդոնում: Գիտնականները նրան սառն են ընդունում: Միայն Ռոբերտ Բոյլն առաջվա պես վստահ եր Դենիի վրա: Այս անգամ արդեն Պապենի թափառելու իսկական պատճառը գիտենալով, Բոյլն աշխատեց մշտական պաշտոն ձարել նրա համար: Պապենն ընդունվեց ֆիզիկայի բաժանմունքի փորձարարի պաշտոնում:

Նա զանազան փորձեր պիտի կատարեր Ընկերության անդամների ժողովում:

Մի ուրիշին այդ աշխատանքը կարող եր ձանձրալի թվալ. տանջակ անգամ միևնույն փորձերը ցույց տալ անվստահ վերաբերվող ու փքված գիտնականներին, դա այնքան ել ուրախ զբաղմունք չեւ: Բայց Պապենը կարողացավ այս աշխատանքի մեջ ել դնել իր ամբողջ աշխույժը: Նա գործը նոր ձևով տարավ: Փորձերը դարձան շատ ավելի հետաքրքրական, վորովհետեւ նրանք մեծ պատրաստականութուն ունեցող մարդ եր վարում: Պապենը սովորական ծրագրով չսահմանափակվեց, նա մատուցում եր Ընկերության անդամներին իր սեփական հետազոտություններն ու գյուտերը: Ընկերության ֆիզիկական բաժանմունքի ժողովներն այնքան հետաքրքրական դարձան, վոր հետզհետե սկսեցին քիմիկոսներն ու մաթեմատիկոս-

ները հաճախել. նույնիսկ փրկիսփառներն ու աստվածաբանները սկսեցին հետաքրքրվել ֆրանսիացու «ուշագրավ ձեռնարկութուններով»:

Աշխատանքը հաջող եր ընթանում: Պապենին թվաց, թե բախտը նորից ժպտաց նրան: Մտածում եր շարունակել աշխատանքներն իր առաջվա ոգային և վառողային մեքենաների վրա: Բացի այդ, նրա մեջ նոր մտքեր ծաղեցին գոլորշու ույժը բարձր ճնշման կաթսայի մեջ ոգտագործելու մասին: Գոլորշին կարող ե շարժման մեջ դնել մեքենաներ: Այդ մեքենաների ույժը Պապենն ուղեց դարձյալ նույն նպատակին ծառայեցնել՝ ջուրն զգալի բարձրության հասցնելուն:

Նորից սկսեց կոպեկ-կոպեկ միջոցներ հավաքել և կիսաքաղց պահել ընտանիքը:

Պապենը վորոշեց մի մեծ պոմպ կառուցել և թեմզա գետի վրա փորձարկել այն: Նա կարծում եր, վոր յերբ պոմպը ցույց կտա իր բարձրորակ հատկութունները և այդ մասին լուր կհասնի Ֆրանսիա, նրանով կհետաքրքրվի նաև Պապենի նախկին տիրակալ Լյուդովիկոս Թագավորը: Պապենը չեք կարողանում մոռանալ իր պոմպը: Նա յերազում եր, վոր իր պոմպը կնվիրաբերի Թագավորին, Թագավորը կների իրեն և ինքը կկարողանա հայրենիք վերադառնալ: Միայն թե կարողանար վերադառնալ իր սիրելի Ֆրանսիան:

Բայց յերազներն այնպես ել մնացին յերազներ: Պապենի մոտ յեղած դրամն ապարատի նույնիսկ կեսի կառուցմանը չբավականացրեց: Այդ բարդ կառուցումն այնպես ել մնաց թեմզայի ափին վորպես խողովակների ու ռեզերվուարների մի կույտ: Դենին այդ գործից հույսը կորցրեց: Նա չափազանց չքավոր եր: Իսկ սառը և կըշռադատող անգլիացիներին գիտնականի յերեվակայական նախագծերը չեյին զբաղեցնում: Սակայն այստեղ ել Պապենը ձեռները չծալեց: Նա ամբողջովին կլանվեց ոգային

Թնդանոթի փորձերով: Յերեակայում եր, թե ինչպես այդ Թնդանոթը ումբեր կնետի առանց վառողի ոգնության: Թնդանոթն անձայն կլինի: Նրա ոգնությամբ Լյուդովիկոսի գործերը կնվաճեն ամբողջ Յեվրոպան, իսկ ինքը Դենին, դրա դիմաց իրավունք կստանա ապրելու և աշխատելու իր հայրենիքում և նրա համար միայն:

Բայց յերբ Թնդանոթի վրա կատարած փորձերն արդեն բարեհաջող ավարտման եյին հասնում, Պապենի գըլխին մի նոր ամպրոպ պալթեց: Լյուդովիկոս Տասնչորսերորդը, Ֆրանսիայի անսահմանափակ, խելացնոր տերը, վերացրեց Հենրիխ Չորրորդ Թագավորի հրամանը դավանությունների ազատության մասին: Նանտի հրովարտակ անունով հայտնի այս հրամանը տասնյակ հազարավոր հուգենոտների արյունով եր հատուցված: Թագավորական գըշի մի հարվածով հարյուր հազարներով հուգենոտներ որենքից դուրս հայտարարվեցին:

Պապենի համար միանգամ ընդմիշտ արգելված եր մուտքը Ֆրանսիական հողի վրա: Հայրենիքի մասին նրա յերազները պիտի մեռնեյին:

Ատելության փոթորիկ բարձրացավ Պապենի հոգու մեջ: Նա պատրաստ եր իր ամբողջ ուժերը նվիրել Լյուդովիկոսի դեմ պայքարելու համար: Այժմ նա ուզում եր աշխատել Լյուդովիկոսին թշնամի պետության ուժեղացման համար: Այդ պետությունն Անգլիան եր: Անգլիական յեկեղեցին թշնամի յեր կաթոլիկությանը: Անգլիական վաճառականներն ալլես չեյին կարողանում հաշտվել ֆրանսիական նավատորմի Յեվրոպայի ծովերի վրա գերիշխելու հետ: Անգլիական վաճառականական ընկերությունները յերազում ելին ֆրանսիական վաճառականներին դուրս մղել հեռավոր ամերիկական գաղութներից: Անգլիան Ֆրանսիայի անհաշտ թշնամին եր: Պապենը կարող եր ըի ծառայությունն առաջարկել իրեն ցույց տված

հյուրընկալության փոխարեն, բայց անգլիական գահի վրա նստած եր խորամանկ և նենգ Կարլոս Յերկրորդը: Նա անունով եր միայն թագավոր. իսկապես յերկիրը կառավարում եր պառլամենտը: Թագավորը չեւ ուզում հաշտվել այդ բանի հետ: Նա զաղտնի պայմանագիր կնքեց Լյուդովիկոս Տասնչորսերորդի հետ և պարտավորվեց ոգնել Ֆրանսիական զորքերին անգլիացիների դեմ: Կարլոսը խոտաացավ Լյուդովիկոսին Ֆրանսիայի հաղթելու դեպքում Անգլիայից քշել բողոքականներին և կաթոլիկ դարձնել բոլոր անգլիացիներին:

Այսպիսով, Անգլիայի թագավորը վատ պաշտպան եր հուգենոտ Պապենի համար: Պառլամենտի և աշնտեղ գլխավորող արիստոկրատների քաղաքականությունից Պապենը վոչինչ հասկոնալ չեւ կարողանում: Նրան հարկավոր եր լիակատար պարզութուն. ու Լյուդովիկոսի դեմ եր և բողոքականներին կողմնակից, նրանց հետ եր Պապենը:

Հենց այս հոգեկան տանջանքների ժամանակ նա Հեսսենի լանդգրաֆ Կարլի կողմից առաջարկութուն ստացավ նրա մոտ ծառայության մտնել և տեղափոխվել Գերմանիա:

Պապենն ուրախացած ընդունեց այդ բողոքական թագավորի առաջարկը:

3. ԴԱՐՁՅԱԼ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՓ

Կաթոլիկների ֆանատիզմը քանի գնում ավելի ծանր եր դարձնում բողոքականների կյանքը Յեվրոպայի մայրցամաքի վրա: Ֆրանսիայում, Իսպանիայում, Իտալիայում և Ավստրիայում նրանք հալածանքներ ելին կրում: Գերմանիան նրանց միակ ապաստանն եր: Նանտի հրովարտակի վերացումից հետո հազարավոր փախստականներ անցնում ելին Ֆրանսիական սահմանը: Գիտնականներ, արհեստավորներ, աստիճանավորներ, զինվորներ, վաճա-

ռականներ և բանվոր մարդիկ ապաստարան, աշխատանք և հաց ելին վորոնում Գերմանիայի պետություններում: Գերմանական մանրպետությունների իշխողները, աժեն տեսակ կոմսեր և կուրֆյուրստներ, իհարկե ոգտվում ելին փախստականների ծանր դրությունից: Աստիճանավորներին և զինվորներին ծառայության ելին վերցնում: Արհեստավորներին թույլ ելին տալիս քաղաքներում ապրելու և իրենց արհեստներով զբաղվելու: Կալվածատերերը կապարով ելին տալիս իրենց հողերը Ֆրանսիայի փախստական գյուղացիներին:

Այս բոլորն անում ելին վոչ այն պատճառով, վոր Գերմանիայի կառավարությունը կարեկցում եր դավանակից տուժածներին: Այդպիսի սիրալիրությունը բոլորովին այլ պատճառներից եր ծագում: Այդ ժամանակաշրջանում Ֆրանսիան իր տնտեսական և կուլտուրական զարգացումով զգալի կերպով առաջ եր անցել Գերմանիայից: Բաղմաթիվ մանր պետությունների բաժանված Գերմանիան միասնական պետական կյանքով չեւ ապրում: Այդ մանր իշխանություն և կոմսություն կոչվող հողապատանների իշխանություն և կոմսություն կոչվող հողապատանների տերերը հավիտյան թշնամության մեջ ելին իրար հետ և անընդհատ պատերազմներով հյուժում ելին իրենց հպատակներին: Ամեն մի իշխանիկ իր ուրենքներն եր դնում, իր մաքսերը, հարկերը կարգում, իր դրամն եր կտրում: Այս բոլորը շատ վատ եր նպաստում յերկրի առեվտրական և արդյունաբերական կյանքի զարգացմանը: Իսկ տնտեսական կյանքի հետ միասին հետմնում նաև գերմանացիների հոգեկան զարգացումը: Ֆրանսիան այդ տեսակետներից մի ամբողջ հարյուրամյակով առաջ եր անցել իր արևելյան հարեվանից: Ֆրանսիական հուգենոտների յերեվալը նոր հոսանք պիտի բերեր Գերմանիայի կյանքի մեջ: Ավելի փորձված վարպետներ, ավելի կրթված պրոֆեսորներ, ավելի զարգացած աստիճանավորներ՝ Ֆրանսիական յեկ-

վորները շատ ոգտակար եյին Գերմանիայի իշխանների համար, մանավանդ վոր անապատտան փախստականները սիրով համաձայնվում եյին ամեն մի աշխատանքի, ինչ պայմանով ել լիներ այն: Ել ինչ խոսք կարող եր լինել մանր մարդկանց, աշխատավորների մասին, վորոնք ուղղակի ստրկության եյին վաճառվում, վոր սովամահ չլինեն:

Հուգենոտները այդ արշավանքը զուգադիպեց Պապենի Հեսսեն գալու ժամանակի հետ: Բայց Պապենի դրությունն ավելի լավ եր, քան նրա հայրենակիցների մեծամասնության դրությունը: Դեռ Լոնդոնում յեղած ժամանակ նա ազատ պայմանագիր եր կնքել լանդգրաֆի հետ: Նրան մշտական ռոճիկ եյին նշանակել, վորով կարելի յեր մի կերպ ապրել:

Այդ ռոճիկով Պապենը պիտի դասախոսություններ կարդար համալսարանում: Նա ընտրեց մաթեմատիկան և հիգրավիկան: Ազատ ժամանակը նրան թուլատրվում եր զբաղվել սեփական գիտական հետազոտություններով և փորձերով: Հեսսենի լանդգրաֆ Կարլը իր ժամանակի համար բավականին կրթված մարդ եր. նա ճիշտ եր գնահատում նոր պրոֆեսորին և չեր ուզում խանգարել նրա աշխատանքը: Սակայն Կարլի մերձավորները և ուրիշ գիտնականներ Պապենին այլ կերպ վերաբերվեցին: Պաշտոնյաները զոդում եյին Պապենին բաց թողնվող ամեն մի տալերի¹ վրա: Նրանք գտնում եյին, վոր յեթե լանդգրաֆի մոտ ավելորդ դրամ կա, այդ դեպքում իրենք ել կարող են միջոցներ գտնել ծախսելու այն: Պապենի աշխատակից պրոֆեսորները նախանձով հետևում եյին յեկվորին և վախենում եյին, թե նա կարող ե չափազանց մեծ շնորհի արժանանալ արքունիքում:

¹ Տալեր — Գերմանիայի և Ավստրիայի առաջվա արծաթե դրամի միավոր ե:

Թե պրոֆեսորներին և թե գիտնականներին ձեռնտու չեր սահմանափակել նոր պրոֆեսորի գործունեության շրջանը: Նրանք ամեն մի միջոց ձեռք առան, վոր առավտից մինչև յերեկո համալսարանական դասախոսություններով ծանրաբեռնեն Պապենին: Այդպիսի միջոցներով ուզում եյին զրկել նրան գիտական լաբորատորիական աշխատանքներից: Այդ բեռնավորումը նմանում եր ծաղրի: Հաճախ Պապենը ստիպված եր դասախոսությունը դատարկ լսարանում կարդալ: Ամեն տեսակ միջոցներով աշխատում եյին ուսանողների մեջ թշնամական տրամադրություն առաջացնել դեպի ֆրանսիացին: Հենց վոր Պապենը դահլիճ եր մտնում, ուսանողները դիմոնստրատիվ կերպով թողնում-հեռանում եյին այնտեղից:

Պապենը յերկար ժամանակ տանում եր այդ վիրավորանքներն ու խարդավանքները: Նրա դրությունն անելանելի յեր. նա չգիտեր ում դիմել: Վերջապես նա տեսավ, վոր և՛ դասախոսությունները չի կարելի շարունակել, և՛ իր գլխավոր խնդիրը՝ գիտական աշխատանքը, կատարյալ կործանման ե մատնված: Առաջին հնարավոր դեպքում նա խնդիր ներկայացրեց լանդգրաֆին իրեն ազատ արձակելու մասին և հայտարարեց, վոր ուզում ե վերադառնալ Անգլիա:

Շատ տառապանք քաշեց Պապենը, մինչև վոր վորոշեց նորից գնալ Անգլիա: Այնտեղ վերադառնալն այնքան ել հեշտ չեր, մեծ հոգեկան պաշար պիտի կրեր այդ բանի համար:

Բայց լանդգրաֆ Կարլը չընդունեց Պապենի հրաժարականը. նա համոզեց նրան մնալ և թույլ տվեց թողնել դասախոսությունները: Կարլը նույնպես ավելացրեց Պապենի ռոճիկը և խոստացավ ամեն մի հնարավորություն ստեղծել նրա աշխատանքի համար:

Պապենին գրավեց այդ և նա մնաց: Կարլը կատարեց իր խոստումը. նրա հրամանով աստիճանավորները

հանգիստ թողին Պապենին: Դեպի ողագիտությունը (պնեվմատիկան) և ջրաբաշխությունը (հիդրավիկան) տաժած սիրուն հավատարիմ՝ Պապենն իր առաջվա լեռանդով վերսկսեց պոմպերի կառուցումը: Շատ շուտով նրա գլխում հղացավ կենտրոնախույս պոմպ կառուցելու միտքը: Հենց առաջին կառուցված պոմպը ցույց տվեց, Վոր գաղափարը ճիշտ է: Մի քանի կատարելագործություններ ևս և նոր գյուտը գործածության մեջ մտավ: Պոմպն անմիջապես սկսեցին ոգտագործել հանքային մշակման մեջ: Այն ժամանակներում ջրհանումը և ջուրը մակերես բարձրացնելը շատ կարելիոր խնդիրներ էին: Զուրը ձեռքի միջոցով բարձրացնելու դժվարության պատճառով հնարավոր չէր խորը հանքահորեր փորելը. նրանք հեղեղվում էին: Ստիպված էին միայն վերնաշերտերը մշակել: Պապենի գյուտը նոր հնարավորություններ եր բաց անում:


Շուտով առաջին պոմպի որինակով յերկրորդն ել կառուցվեց: Այդ ել կենտրոնախույս եր, բայց հանքահորերից փչացած ողը և հանքային գազերն արտածվելու համար եր այն:

Ուրախացած Պապենն սկսեց մի մեծ ջրամբարձ մեքենայի կառուցումը, բայց նրան չհաջողվեց մինչև վերջը հասցնել այդ աշխատանքը. լանդգրաֆ Կարլը լսելով վառոդային մեքենայի վրա կատարած Պապենի առաջվա աշխատանքների մասին, հետաքրքրվեց դրանով: Նա առաջարկեց Պապենին թողնել ամեն ինչ և վերսկսել աշխատանքներն այդ շարժիչի վրա: Շատ չէր հարկավոր խնդրել Պապենին: Զավակի պես սիրած մեքենայի վրա վերստին աշխատելը մեծ ուրախություն եր նրա համար:

Բոլոր ձախորդություններն ու անախորժությունները մոռացվեցին: Պապենը նոր ուժերի հորձանք զգաց իր մեջ: Ինչպես մի ժամանակ, յերբ նա քսան տարով յերիտասարդ եր և Հյուլզենսի հետ միասին առաջին վառոդա-

յին մեքենայով եր զբաղված, նա նորից ամբողջովին խրվեց այդ աշխատանքի մեջ: Տանը համարյա չէր լինում: Նորից, ինչպես առաջ, հաճույքով շնչում եր դարբնոցների և ձուլարանների ծխամած ողը:

Նոր վառոդային մեքենայի մեջ Պապենը մի քանի փոփոխություններ մտցրեց: Նա փոխեց գլանի հատակի



կառուցվածքը: Մխոցի շարժումները հաճախացնելու համար հարկավոր եր գլանը փորքան կարելի յե արագ լրցնել վառողով: Այդ նպատակի համար Պապենը մի սարքավորում գործադրեց, վորը գոյորշու պահպանիչ կափույրին եր նման: Այդ մի փոքրիկ լցքաթասակ եր, վորտեղ վառող եր լցվում: Թասակը ծանրոցով լծակի միջոցով տակից սղղմվում եր գլանին: Ծանրոցը փոխելով կարելի յեր կարգավորել թասակի սեղմման ուժը: Պապենը յենթադրում եր, վոր

այդպիսով նրան կհաջողվի վառողի ուժեղ պայթյունի գեպքում խուսափել շարժիչի ավերումից: Վառողի գազերի ուժից թասակը հետ կսղմվի և դուրս կթողնի գազերի մի մասը, թուլացնելով նրանց ազդեցութունը մխոցի վրա:

Պապենը յերկյուղով սկսեց իր նոր մեքենայի փորձարկումը: Առաջին փորձի համար ամենաթույլ լիցք դրեց: Վորչափ նա ուրախացավ, յերբ տեսավ, վոր պայթյունից մխոցը դուրս չհետվեց, սակայն շարժումը դարձյալ շատ ուժեղ թափ ունեւ: Այսպիսի մեքենայով հետաքրքիր փորձեր կարելի յեր կատարել, բայց վոչ մի գործնական կի-

շատու՞մ չե՞ր կարող ունենալ ա՛յն: Վորպեսզի հնարավոր լինե՞ր, այսպես թե՛ այնպես, մեքենան ոգտագործել, հարկավոր եր մխոցի շարժման արագութիւնը պակասեցնել: Բայց ինչպե՞ս կարելի չե՞ ստիպել, վոր վառողը դանդաղ այրվի: Վորքան ել Պապենը հնարքներ մտածեց, վոչինչ չկարողացա՛վ անել:

Այս անհաջողութիւնը վորոշ չափով հոսանատեցրեց նրան: Նա վախենում եր, թե լանդգրաֆը դժգոհ կլինի այդ անհաջողութիւնից: Սակայն Կարլն այնքան խելոք եր, քոր չկշտամբեց գիտնականին ժամանակավոր այդ անհաջողութիւնների համար:

Նա թույլ տվեց, վոր Պապենը կարողանա խորհել անհաջողութիւն պատճառների մասին: Կարլը հույս ունեւր, վոր Պապենը ճիշտ յելք կգտնի և կլուծի խնդիրը:

Կարլը ճիշտ եր գուշակել: Պապենի սուր միտքը և կառուցելու տաղանդը հաջողեցրին գործը: Լուծումը գտնված եր:

Վառողն այլ բանով փոխարինելու մասին խորհելիս Պապենը մեկ-մեկ հիշում եր բոլոր այն մարմինները, վորոնք իրենց լայնացման ուժով ընդունակ են բարձրացնելու մխոցը: Յեւ ահա այստեղ միտք ծագեց՝ չէ՞ր կարելի արդոք այդ աշխատանքը գոլորշու վրա դնել: Չէ՞ վոր գոլորշու առաձգականութիւնն աճում ե, չերբ տաքացնում են այն: Պապենն այդ գիտե՞ր Վորչեստերի նկարագրութիւններից և իր սեփական փորձերից: Յեթե գոլորշին կարող ե ջրի սյունը բարձրացնել, ապա ինչո՞ւ չստիպել նրան բարձրացնել մխոցը:


Առաջին փորձը, վոր կատարեց Պապենն այդ յենթադրութիւնը ստուգելու նպատակով, շատ պարզ եր: Նա վերցրեց հատակը ծածկած մի գլան և մեջը ջուր լցրեց: Գլանի վերևի անցքից մխոց անցկացրեց: Գլանի տակը վառած կրակի բոցով Պապենը ջուրը տաքացրեց: Գոլորշի գոյացա՛վ: Տաքացնելու հետ միաժամանակ աճում եր

գոլորշու առաձգականութիւնը. գոլորշին ձգտում եր ավելի ու ավելի լայնանալ: Գլանի մեջ ճնշումն աճելուց մխոցն ըսկսեց բարձրանալ: Յերբ մխոցը մինչև գլանի վերջը հասավ Պապենը բոցը հեռացրեց: Գոլորշին սկսեց սառչել և ծավալով փոքրանալ: Սկսվեց նրա խտացումը: Ճնշումը գլանի մեջ պակասեց և մխոցը սկսեց իջնել:

Յերբ ամբողջ գոլորշին ջուր դարձավ, մխոցն իջել եր ցած, ջրի մակերեսի վրա:

Այդպիսով, ուրեմն, ճիշտ եր մտածված. գոլորշին ընդունակ ե շարժելու մխոցը: Հիմնական գաղափարը ճիշտ եր, բայց դրանով խնդիրը դեռ չե՞ր վճռվում: Գոլորշու սառչումը՝ բավական դանդաղ եր կատարվում: Այդպես ել դանդաղ եր իջնում նաև մխոցը: Իսկ Պապենին հարկավոր եր, վոր մխոցը մթնոլորտային ճնշման տակ արագ իջնել: Յերկար մտածեց Պապենն այդ խնդրի մասին, մինչև վոր հիշեց շոգու մեքենայի մեջ անցյալում արդեն գործադրած հարմարանքը՝ մղլակը: Այստեղ արդեն ամեն ինչ պարզվեց: Պապենը տեսնողորեն ձեռնարկեց նոր՝ «կրակի» մեքենայի կառուցմանը: Այդ մեքենան հետեւյալ կառուցվածքն ունեւր: Օ գլանի մեջ դրը՝

ված եր N մխոցը, վորի շուրջը H յուղած պարանն եր փաթաթած: Այդ փաթաթվածքը պինդ կպած լինելով, պիտի արգելեր վոր գոլորշին չանցնի գլանի և մխոցի պատերի միջև: Մխոցին A ձողն եր ամրացրած: Այդ ձողն իր ներքևի մասում B փոսիկն ունեւր, իսկ գլանի խուփի վրա մղլակ C-ն եր սարքված: Յերբ մխոցը բարձրանում եր և ձողը գլանի խուփից դուրս եր գալիս



մինչև վերջը, մղլակն ընկնում էր փոսիկի մեջ և ձողը տեղում ամրացնում էր: Այժմ ձողը, իսկ նրա հետ և մխոցը մթնոլորտային ճնշումից չեյին կարող իջնել: Գոլորշին խտանում էր և գլանի մեջ նոսրացում էր գոյանում: Նոսրացումն աճում էր գոլորշու խտացման հետ միաժամանակ: Այդ միջոցին դրսի ոդն անցքերի միջով անցնում էր գլանի վերևի մասը և մթնոլորտային ուժով ճնշում էր մխոցի վրա: Վերջապես ամբողջ գոլորշին ջուր էր դառնում: Այժմ բավական էր մղլակը քաշել և ել վոչ մի բան չէր արգելի, վոր մխոցը ցած իջնի: Մեքենան սկսում էր աշխատել: Մեքենայի կառուցումն ավարտելուց առաջ Պապենի գլխում ելի մի կատարելագործման միտք ծագեց: Մեքենայի աշխատանքն արագացնելու և մխոցի շարժումների թիվը շատացնելու համար հարկավոր էր ստիպել, վոր գոլորշին արագ խտանա: Այդ բանի համար բոցը հեռացնելը քիչ էր. անհրաժեշտ էր գլանն արհեստական ձեւով սառցնել: Յեւ ահա Պապենն սկսեց գլանի վրա սառը ջուր լցնել: Հենց առաջին փորձը հաջող դուրս չեկավ: Գործն ավելի արագացավ: Գլուտարարի ցնծությունն անսահման էր:

4. ՆԱԽԱԳԾԵՐԸ ՀԱՋՈՐԳՈՒՄ ԵՆ ԻՐԱՐ

Յեթե Պապենն ուրախ էր, ապա նրանից շատ ավելի գոհ մնաց լանդգրաֆը, յերբ տեսավ, թե ինչպես է նոր մեքենան աշխատում: Նա ստիպեց շատ անգամ կրկնել փորձերը, վոր կարողանար ցույց տալ հատուկ այդ դեպքի համար հրավիրած բոլոր հյուրերին: Կարլը նույնիսկ ուզեց հրավիրել բոլոր հարևան պրինցներին: Անհամբեր շտապում էր պարծենալ կրակի մեքենայով, վորը հնարած էր իր տերության մեջ և իր հովանավորության տակ: Նա անկեղծորեն յերեմականացում էր, վոր այդ հայտ-

նագործման պատիվը Պապենից վոչ պակաս չափով իրեն է պատկանում:

Սակայն Պապենը հանդեսների մասին չէր մտածում: Նա զբաղված էր նոր գոլորշու մեքենային վերաբերվող ամենախիզախ ծրագրերով: Պապենի գործնական միտքը չէր կարող սահմանափակվել միայն գործի գիտական կողմով: Նա անհամբեր ձգտում էր կյանքում ոգտագործել մեքենան: Չէր նկատում, վոր իր կառուցած շարժիչը դեռ շատ անկատար էր և հազիվ թե կարողանար գործնական կիրառումն ունենալ:

Գոլորշիացումը գլանի մեջ շատ դանդաղ էր կատարվում: Չէ վոր ամեն անգամ անհրաժեշտ էր նորից տաքացնել և համբերությամբ սպասել, մինչև վոր վերջապես մխոցը կբարձրանա: Գոլորշու խտացումը նույնպես ժամանակ էր պահանջում: Մինչև գոլորշին խտանում էր, գլանի մեջ հետզհետե աճող նոսրացում էր գոյանում: Յեւ այդ միջոցին մխոցի և գլանի մեջ յեղած ձեղքով ողը միշտ ներս էր ծծվում: Կատարյալ անթափանցելիության հասնելը շատ դժվար էր: Ուստի այն միջոցին, յերբ մխոցն ազատվում էր մղլակից և սկսվում էր վալքելքի շարժումը, գլանի մեջ արդեն վորոշ քանակությամբ ող էր լինում: Այդ բանն իջեցնում էր շարժիչի հզորությունը և արգելում էր մխոցին մինչև վերջն իջնել: Ամեն մի շարժումից գլանի ջրի և մխոցի մեջ գոյացած ողի միջնաշերտը հետզհետե մեծանում էր: Մխոցի ընթացքը կարճանում էր և նոսրացումը գլանի մեջ պակասում: Այս բոլորն իջեցնում էր նրա հզորությունը, վորն առանց այդ ել շատ մեծ չէր. ողը ճնշում էր մխոցի վրա միմիայն մեկ մթնոլորտային ուժով: Ահա այն ամենը, ինչ կարող էր տալ մեքենան ամենալավ սարքավորման դեպքում:

Իհարկե, չէր կարելի մեղադրել Պապենին, վոր նա կուրացել է հաջողությունից և իրերի խնկությունն էլ չի

տեսնում: Չպետք է մոռանալ, վոր պատմութեան մեջ դա-
րիսկապես գոլորշիով գործող առաջին մեքենան էր: Մինչև
այդ՝ այդպիսի մեքենա վոչ վոք չեր տեսել: Ուստի և հա-
կանալի յե, վոր գլուտաբարը դրանով շատ ավելի ուրա-
խացավ, քան պետք էր:

Պապենը գտնում էր, վոր այժմ նրան մնում է մի
խնդիր չեմս վճռել. ինչպէս մխոցի մի բոլորում կատա-
րած շարժումների թիվը շատացնել: Յեթե նրան հաջողվի
գլանը գոլորշիով լցնել և արագ պարպել, խնդիրը լուծ-
ված կլինի: Պապենը մտածում էր, թե անհրաժեշտ չէ ար-
դյոք սնող գոլորշի գոյացնելու համար առանձին կաթսա
սարքավորել, վորից գլանին պատրաստի գոլորշի կմատուց-
վի: Այն ժամանակ հնարավոր կլինի ոգտագործված գոլոր-
շին, խտացնելու փոխարեն, կափուլքի միջոցով ուղղակի
գուրս թողնել:

Այս մասին մտածելով՝ մի անգամ Պապենը գտնում
էր լանդգրաֆի գլխակի պուրակում: Պատահաբար նա կանգ
առավ տարրինակ ցածր բուսնող թփերի առաջ: Պապենը
հետաքրքրվեց նրանցով: Կանաչ թփերը վարդագույն մանր
ծաղիկներով ելին ծածկված: Թփերը գեղեցիկ շարքերով,
խնամքով սնկված ելին դղյակի առաջ գլխավոր մարգա-
թումբի վրա: Ըստ յերեմիայի նրանք պուրակի զարդա-
րանքը պիտի լինեյին:

— Այս ինչ տարրինակ բույս է, — ասաց Պապենը
բարձրաձայն, — առաջին անգամ եմ տեսնում:

Ջարմանալի չե, սիրելի բարեկամ, — լավեց լանդգրա-
ֆի ձայնը: Մի քանի ուր է միայն, վոր ծաղիկը ես: Բայց
ասա ինձ, ինչի՞ մասին ես դու մտածում:

— Ելի նույն բանի մասին, ձերդ պայծառափայլու-
թյուն, թե ինչպես կրակի մեքենայից ոգուտ քաղել ձեր
պետութեան համար: Այդ առթիվ յես վորոշ մտքեր ունեմ:

Պապենն ուզում էր պատմել լանդգրաֆին իր նախա-
գծերի մասին, բայց լանդգրաֆն ընդհատեց նրան:

— Իմ Հեսսենն առայժմս առանց քո մեքենայի յել
կդ իմանա:

Նորերս յես ավելի հետաքրքրական բան եմ տեսել:
Բեռլինի գլխավոր հրապարակում Կուլֆյուրստն իր
պալատի առջև յերեւելի լապտերներ ե դրել: Այդ լապտեր-
ները սյուների վրա յեն և քամուց չեն հանգչում: Այդ
մի զարմանալի տեսարան է:

Հրապարակը լուսավորվել է, ել կարիք չկա, վոր մար-
դիկ լապտեր վերցնեն իրենց հետ, վոր վոտները չկոտրեն:
Այդպիսի լապտերներ Կուլֆյուրստը մտադիր է Բեռլինի
գլխավոր փողոցում շարել: Լավ կլինեք, մենք ել հետ չը-
մնալինք նրանից:

Պապենը քմծիծաղով լսում էր իր տիրոջը:

— Ինչ կա վոր, հրաշալի միտք է դա:

— Ի՞նչ ես կարծում: Ահա այդ գործով զբաղվիր:
Քո կրակի մեքենան կսպասի, իսկ դու փորձի համար դեռ:
այդպիսի մի լապտեր սարքիր:

Պապենը զայրուլթը ծածկելու համար իր գլուխը խոնար-
հեց: Այդ հանձնարարութիւնը խախտում էր իր ծրագրերը:

Վախենալով, թե պրինցը ելի մի բան կգտնի ասելու,
Պապենը շտապեց հրաժեշտ տալ նրան: Բայց Կարլը նո-
րից կանչեց:

— Լապտերը թող, Պապեն, — ասաց նա, — ավելի լավ
է՝ անա թե ինչի մասին մտածես: Ինձ այնպիսի նավ է
հարկավոր, վորը կարողանա ջրի տակ լողալ: Նա պիտի
աննկատելի մոտենա թշնամու նավերին: Այդպիսի աներե-
վույթ նավ ունենալով, մենք կկարողանայինք Ֆրանսիայի
թագավորի ամբողջ նավատորմը վոչնչացնել:

Այս մեկն արդեն ավելի լավ էր: Այդպիսի հարցերով
Պապենը պատրաստ էր գիշեր-ցերեկ զբաղվելու: Մակաչն
ջրի տակ լողալու գաղափարն այնքան նոր էր և համարձակ,
վոր նույնիսկ Պապենին զարմացրեց:

— Դուք ուզում եք, վոր նավը ձկան նման կարողա-
նա ջրի տակ սուզվել:

— Այո, միշտ այդպես ջրի տակ սուզվել կարողանա:
Ջրի տակով թշնամու նավին մոտենալով, պայթուցիկ լիցք
կկարողանա դնել նրա տակ: Այդ մի զարմանալի բան կլի-
նեք: Յես քեզ, ինչքան ասես, դրամ կտալի այդպիսի մի
բան կառուցելու համար:

— Այո, այդ շատ կարևոր խնդիր է,— մտախոհ ասաց
Պապենը: Յես անմիջապես կձեռնարկեմ այդ գործին:

Յեմ իսկապես Պապենը թողեց ամեն ինչ, նույնիսկ
իր սիրած մեքենան և անմիջապես գործի անցավ: Առա-
ջին հալացքից խնդիրը համարյա անլուծելի յեր թվում:

Գործի գիտական կողմը գրավեց Պապենին: Յերբ նա
գործով գրավվում էր, շատ արագ էր լուծումը գտնում:
Ահա այն չեզոքակացությունները, վորոնց Պապենը հասավ:

Յեթե վերցնենք հերմետիկորեն փակ մի արկղ և ջրի
վրա դնենք, արկղը ջրի մակերեսին կլողա: Վորպեսզի
արկղը ջուրն ընկղմվի, անհրաժեշտ է նրա քաշը հավա-
սարեցնել այն ջրի քաշին, վորը դուրս է մղել նրա ծա-
վալը: Ուրեմն, արկղի հատակից բեռ կախելով կարելի յե
արկղը ջրի տակ իջեցնել: Բավական է ցած գցել այդ բեռը
և արկղը կարթախցանիկի նման նորից ջրի մակերեսը
դուրս կգա:

Գործը շատ պարզ էր թվում, բայց այդ դեռ քիչ էր: Ան-
հրաժեշտ էր միջոց գտնել, թե ինչպես, ըստ ցանկության,
արկղը զանազան խորության ընկղմել: Դրա համար հարկա-
վոր էր հնարավորութուն գտնել, վոր լողալու ընթացքում
ավելանա և պակասի բեռի քաշը: Յենթադրենք, թե ջրի տակ
գտնվելով՝ նավի անձնակազմը ազատվեց բեռի մի մասից,
այդ դեպքում նավը կբարձրանա: Ապա յեթե նավակազմին
անհրաժեշտ լինի նորից ընկղմվել, վերստեղից նա բեռ գտնի
նավի կշիռն ավելացնելու համար: Ահա այդ հարցի վրա հար-

կավոր էր գլուխ կտրել: Սակայն այստեղ էլ անկարելի
բան չկար: Բավական է նավի մեջ ջուր ներս թողնել և նա
կփոխարինի վարը գցած բեռան: Անմիջապես հարց ծագեց
իսկ յեթե ջուր հավաքելով նավը չկարողանա ջրի յերեսը
դուրս գալ: Այստեղ պետք յեկան Պապենի առաջիկա՝ զանա-
զան տեսակ պոմպերի վրա կատարած աշխատանքները
Բանից դուրս յեկավ, վոր կենտրոնախույս պոմպը կարող
է ոգնել այդ գործին: Յեթե կարթախցանին ամրացրած
կաշեպարկը ջրի մակերեսը բաց թողնվի, այն ժամանակ
կարելի յեր ջրհանում կատարել. ողը կաշեպարկով կմտնի
և կարելի յե ուզածիդ պես փոփոխել նավի քաշը: Ուրեմն
միանգամայն հնարավոր է կանոնավորել նավի ընկղմվելու
աստիճանը: Նավի տակ կախած բեռն այժմ դառնում էր
իբրև ոժանդակ միջոց այն դեպքի համար, յեթե նա
չկարողանար հանել ներս թողած ջուրը: Այն ժամանակ
բեռից ազատվելով՝ նա ելի դուրս կգա ջրի մակերեսը:

Բայց ջրի տակ ընկղմած արկղն ուղղակի մի անմեղ
խաղալիք կլինի, յեթե նրա անձնակազմը չկարողանա
պայթուցիկ ուժով դնել թշնամու նավի տակ: Սակայն
բավական է խուփը բանալ և ջուրն անմիջապես կլցվի
արկղի մեջ: Պապենը կողքից ամեն տեսակ փողեր և կա-
փուլներ էր սարքում, բայց ջուրը դարձյալ մտնում էր
արկղը: Նա փորձեց բարձր ճնշման տակ ու մղել արկղի
մեջ այն հուսով, վոր ճնշումը չի թողնի ջուրը ներս մտնի
այնտեղ: Բայց հենց վոր խուփը բացվում էր, ողը միջից
դուրս էր գալիս, ջրի մակերեսին թշնամ ելին պղպշակ-
ները և արկղն ընկղմվում էր:

Պապենը պատրաստ էր խոստովանել իր անզորու-
թյունը, յերբ հասարակ մի պատահականութուն ճիշտ
ճանապարհի վրա դուրս բերեց նրան:

Մի անգամ փորձելիս արկղը ջրի մեջ չըջվեց և չամ-
րացրած խուփը դուրս ընկավ: Շատ զարմացավ Պապենը,

յերբ տեսավ, վոր ջուրը ներս չթափվեց: Ողն արգելք հանդիսացավ:

Պապենը զարմացավ. ինչպես նա առաջ գլխի չեր ընկել, վոր յեթե տակից անցը բանա, ջուրն արկղի մեջ չի թափվի: Նա մի քանի անգամ ստուգեց այդ լերեռայթը: Արկղի մեջ շատ քիչ ջուր եր մտնում:

Այժմ անհրաժեշտ եր մտածել, թե ինչպես ե նավը շարժվելու և դեկավարվելու: Բայց Պապենին այս շատ պարզ և հեշտ եր թվում: Ժամանակ չկորցրեց այդ հարցերի վրա և միանգամից սկսեց առաջին ջրասույզ նավի կառուցումը:

Այդ նավի վրա, վորը պիտի արկղի ձև ունենար, Պապենն ուզում եր միայն ստուգել ընկղմվելու և ջրի տակ մնալու հնարավորությունը: Այդ նպատակով նա ուզեց ինքն իր նավի մեջ ընկղմվել:

Աշխատանքը լիակատար ընթացքի մեջ եր: Լանդգրաֆը դրամ չեր խնայում: Միայն աստիճանավորները և գիտնականներից մի քանիսը,—Պապենի հակառակըդնե-րը,—ծիծաղում եին լանդգրաֆի դյուրահավատությունը վրա: Նրանք գտնում եին, վոր ճարպիկ ֆրանսիացին ձեռ ե առնում կարլին:

Շուտով մեծ արկղն արդեն պատրաստ եր: Արկղը գետի ափը փոխադրեցին: Պապենը գերաններից մի ամբարձիչ կռունկ կառուցեց նավը ջրի մեջ իջեցնելու համար: Դենին պիտի մտներ այդ արկղը, իսկ վերեից պտուտակավոր խուփով պիտի ծածկեյին այն:

Անհաջողությունը նրան չեր վախեցնում, և նա յեռանդով պատրաստվում եր փորձարկմանը:

5. ՄՆԱՍ ԲԱՐՈՎ, ԳԵՐՄԱՆԻԱ.

Պարզ, արևոց ուր եր: Շքախմբով և հյուրերով շրջապատված լանդգրաֆը նստած եր հատկապես բարձր տե-

ղում պատրաստած բազկաթռի վրա: Ուղիղ նրա առաջ ծովազ գետի ափին մոտենում եր գերաններից պատրաստած ամբարձող կռունկն իր ճախարակներով: Ճախարակների վրա մի մեծ արկղ եր կախված, վորը կայունություն համար հենված եր ձողերին: Արկղի կողքին Պապենը զբաղված եր վերջին ստուգումներով: Մոտիկ նստած եր Պապենի կինն իր լերեխաներով շրջապատված և հուսահատ լաց եր լինում: Նա համոզված եր, վոր այլևս ել չերեք չի տեսնի՝ իր անհանգիստ Դենիին: Պալատականներն ու պրոֆեսորները, լանդգրաֆի բազկաթռի շուրջը հավաքված, քչիչում եին իրար հետ: Կոմսի պճնված գանձապահի ականջին կռացած՝ արքունիքի աստղագետն ասում եր:

— Այսօրվա փորձի մեջ ամենահետաքրքիրն այն ե, վոր մենք մեր սեփական ձեռքերով կարող ենք փակել խուփը այդ հիմարի գլխին:

— Յես հաճույքով սի զույգ ամուր մեխ ել կխփեյի, վոր ել չերեք չբացվեր այն:

Յերկուսն ել բարձրաձայն հռնացին: Գանձապահի հագին փորը լսկլխկում եր ծիծաղից: Այդ միջոցին ամեն ինչ արդեն պատրաստ եր: Պապենը կարգադրեց նեցուկները հեռացնել և արկղը ճալանների վրա ուղղվեց: Գյուտարարն սկսեց նեղ իջանցքը մտնել: Վարպետներն այս ու այն կողմ հրելով՝ մոտ վազեցին պալատականները, վորոնք անպայման իրենք եին ուզում խուփը փակել: Առաջինը դրանց մեջ՝ հաստ գանձապահն եր: Վարպետները պատկառանքով հետ քաշվեցին ազնվատոհմ իշխանի առաջ:

Գանձապահը վստահ ափից դեպի արկղը տանող տախտակների վրա բարձրացավ: Այն վաղրկյանին, յերբ նա արդեն բռնել եր խուփը, հանկարծ ճաթյուն լավեց: Կռունկը չկարողացավ պահել այդ ծանրությունը և արկղը Պա-

պենի և գանձապահի հետ միասին ջուրն ընկավ: Նրանց հետևից թափվեցին ջարդված կռուների գերանները: Յայտուենները ցրվեցին հեռու և լայն ողակներ փովեցին ջրի յերեսին:

Շուտով ջրի յերեսին յերևաց ձեռքերը հուսահատության թափահարող գանձապահը: Պապենը չկար:

Յեթե անմիջապես իրենց ջուրը նետող վարպետների ոգնականները չլինեյին, այդ փորձը, յերեվի, Պապենի վերջին փորձը կլիներ: Գիտնականն ընկնելիս սաստիկ հարվածից ուշաթափվել էր:

Բարեբախտաբար արկղը ջրին զարկվելով ջարդվեց և գլուտարարին ազատեց: Բանվորները խեղճին ջրից հանեցին: Հազիվ կարողացան ռաշքի բերել:

Այս դեպքից հետո սկսվեցին նոր հարձակումները գլուտարարի դեմ: Պալատականներն ասում էին, վոր Պապենը իբրև ֆրանսիացի, չի համակրում լանդգրաֆի ծրագրերին, իր նավը չի ուզում տալ Լյուդովիկոսի դեմ պատերազմելու համար: Այդ պատճառով ել դիտմամբ խորտակեց նա իր նավը: Ամենից շատ հաստ գանձապահն էր աղմկում, վորը Դենիի գլխի վրա խուփը փակելու ցանկության համար քիչ մնաց իր կյանքը զոհեր:

Այն միջոցին, յերբ Պապենը հիվանդ պառկած էր, պալատականները գրեցին այդ մասին Լալբնիցին, խնդրելով իր հեղինակավոր դատապարտող կարծիքը հայտնել չափ ու սահմանն անցրած ֆրանսիացու գաղափարների մասին:

Սակայն վորքան մեծ լեզավ պալատականների շփոթությունը, յերբ փիլիսոփան միանգամայն անսպասելի պատասխան տվեց: Նա գրում էր.

«Այս դեպքը չի կարող խախտել իմ հավատը դեպի Պապենը: Յես շատ լավ եմ ճանաչում նրա գիտնականությունն ու գլուտարարական ընդունակությունները: Տվյալ դեպքում ամեն ինչ լավ էր մտածված և նա շատ լավ էր

պատկերացնում, թե ինչ է ուզում: Միայն փորձերը կարող եյին ոգնել հաղթահարելու նրա գաղափարները գործնականորեն կիրառելու դժվարությունները:

Ինչ վերաբերում է դրամին, վոր բաց է թողել ձեր լուսավորված թագավորն այդ յերեվելի գործի համար, հավատացեք, չարժե նրա մասին խոսել: Մեր իշխանավորները մի գիշերվա մեջ ավելի շատ են թափում թրդ-թախաղի սեղանի վրա: Միթե չպետք է վողջունել այն, վոր մի անգամ գոնե դրամը հասարակական մեծ նշանակություն ունեցող գործերի վրա յե ծախսվել»:

Պալատականները յենթադրում էյին Լալբնիցի պատասխանով պարծենալ կարլոսի առաջ, վորպեսզի միանգամ ընդմիշտ հաշիվ տեսնեն այդ աներես ֆրանսիացու հետ: Սակայն պարտված լինելով, նրանք չեյին ել համարձակվում ցույց տալ փիլիսոփայի նամակը պրինցին: Իսկ կարլոսն ինքն ամենևին չեր բարկանում գլուտարարի վրա: Յերբ Պապենը առողջացավ և ստորջրյա նավի նոր նախագծով լեկավ նրա մոտ, կարլոսն ասաց.

— Թող այդ բոլորը, պարզվում է, վոր այդպիսի նավ ինձ ամենևին ել հարկավոր չե: Չե՞ վոր մենք չենք կարողանա այն մոտեցնել ֆրանսիական նավատորմին: Գերմանիայի զորապետներն այդ նպատակին ծառայող առաջատանավեր չունեն: Յես այդ բանի մասին չմտածեցի:

Սրանով ել կվերջանար գործը, բայց դժբախտաբար կարլոսը պատերազմի դաշտ մեկնեց:

Պապենը մնաց անպաշտպան՝ աստիճանավորների և պալատականների իշխանության տակ: Նրանք ի հարկե ոգտվեցին լանդգրաֆի բացակայությունից: Պապենի վրա հանձնարարություններ թափվեցին, վորոնք իբր թե լանդգրաֆն էր թողել: Աստիճանավորները վոչ մի դեպքում չեյին ուզում թույլ տալ, վոր Պապենն իր նախագծերով զբաղվի:

Պապեն ըհնազանդորեն կատարում եր բոլոր հանձնարարությունները, վորոնք նրանց անիրագործելի ելին թվում: Շատ գյուտեր պիտի աներ հանքային գործի, աղագործության, ոգեգործության և սննդի կոնսերվացման գործը լավացնելու համար: Աստիճանավորներն իրենք ել չհասկանալով նպաստում եյին իրենց փոքրիկ պետութւան տնտեսական զարգացմանը: Իհարկե այդ նրանց ձեռնտու յեր: Պապենի նոր գյուտերի շնորհիւ նրանք բարելավում ելին խոշոր ու աղղեցիկ ազնվատոհմ իշխանների տնտեսութւոնները: Այդ բանի համար հարուստները վարձատրում եյին աստիճանավորներին, չհետաքրքրվելով, թե վորտեղից են գալիս այդ բարելավումները:

Այդ շնորհներից Պապենին բաժին չեր ընկնում: Ընդհակառակը, Կարլոսի բացակայութւոնից ոգտվելով, աստիճանավորները պահում եյին նրա ոռճիկը և ամեն տեսակ մանր բաներով ճնշում եյին նրան: Ամեն անգամ տնտեսական նոր գյուտեր ելին պահանջում նրանից:

Պապենը հուսահատութւան եր հասել: Լայքնիցին ուղղած նամակների մեջ գանգատվում եր, վոր նրա գլուխը տրաքում ե նոր գաղափարներից, իսկ նրանց վրա աշխատելու համար վոչ ազատ ժամ ունի, վոչ ել մի տալեր դրամ: Այսպիսի դրութւոնը չեր կարող շարունակվել: Պապենը տեսնում եր, վոր իր բոլոր մտքերն ու նախագծերը կործանման են մատնված, լեթե անմիջապես թափ չտա իրենից բոլոր թշնամիներին:

Հենց վոր Կարլոսը պատերազմի դաշտից վերադարձավ, Պապենը խնդիր ներկայացրեց նրան, վոր թուլ տա իրեն գնալու Անգլիա՝ դիտական աշխատանքը շարունակելու համար: Կարլոսն արդեն ձանձրացել եր անխոնջ ծերուկի շուրջը ստեղծված բամբասանքներից: Նրա դեմ ուղղած գանգատներով զբաղվելու ժամանակ չուներ: Այս անգամ Պապենի հրաժարականն ընդունվեց: Կարլոսը դրա-

մով սարգևատրեց նրան և թուլ տվեց, վոր գնա:

Այդ պարգևն անսպասելի յեր Պապենի համար: Դրամն ուրախացրեց նրան և նա վորոշեց դիտութւան ոգտին գործադրել այն: Կարլոսի տված դրամով վորոշեց մինչև այժմ չտեսնված ձևով ճանապարհորդութւոն կատարել դեպի Լոնդոն: Այդ ճանապարհորդութւան համար նա մի նավ կկառուցի, վորը շոգեշարժիչի ուժով ե ընթանալու: Այս անգամ մեքենան առանց ընդհատումների լե աշխատելու, վորովհետև նրա համար անհրաժեշտ գույրչին առանձին կաթսայի մեջ ե գոյանալու:

6. ԱՐՏԱՍՈՎՈՐ ՆԱՎԸ

Արդեն ավարտվում եյին նավի կառուցման աշխատանքները, յերբ պարզվեց, վոր Պապենի նավը Փուլդայի գետաբերանից Վեգեր մտնելու իրավունք չունի: Հաննովերի Կուրֆյուրստի կողմից Վեգերի նավատերերին տրված արտոնութւոնով վոչ մի նավ չեր կարող Փուլդայից նավահանգստային քաղաք՝ Բրեմենին հասնել: Բոլոր բեռները պիտի Մյունդենում վեգերցիներին պատկանող նավերի վրա փոխադրվեյին: Պապենը գրավոր խնդրով դիմեց Մյունդենի նավատերերին, վոր թուլ տան իր նավին դեպի ծովն անցնել: Նավատերերը մերժեցին: Այն ժամանակ նա մի նամակ ուղարկեց Լայքնիցին, վորի մեջ խնդրում եր նրան՝ անձամբ դիմել Կուրֆյուրստին այդ խնդրով: Սակայն փիլիսոփայի դիմումն ել չողնեց: Կուրֆյուրստը չուզեց խախտել նավատերերի շահերը:

Այնուամենայնիւ Պապենը վորոշեց իր արտասովոր նավով ճանապարհվել:

1707 թվի սեպտեմբերի 24-ի վաղ առավոտյան Հեսսենի մայրաքաղաք Կասսելի բնակիչները տարորինակ յերկուլթ տեսան: Նավամատուցի մոտ արտասովոր մի նավ եր ձոճվում: Այդ նավը վոչ առաջաստներ ուներ, վոչ ել

Թիակներ: Տախտակամածի վրա բարձր խողովակ ունեցող մի տարրորինակ սարքավորում էր բարձրանում:

Նավի վրա Դենի Պապենն էր աշխատում: Նրա գլխի սպիտակ կոշտ մազերը շողշողում էին առավոտյան արևի ճառագայթներից: Պարիկն ընկած էր մի կողմ. ծերունին իր հին՝ մրի ու յուղի մեջ թաթախված, բաճկոնի թևերը հետ ծալած՝ մեքենայի վրա յեր աշխատում:

Քրտինքը հոսում էր նրա բարձր ճակատից. նիհար ու ջլուտ ձեռքերը դողում էին, բայց նրա կնճռոտ ղեմքը, մեծ քթով ու չոր լեռանդոտ բերնով, յերջանկությունից փայլում էր: Ծերունուն ոգնում էր իր տաանհինգ տարեկան վորդի—Ֆրանսուան: Տղան հպարտանում էր իրեն հանձնած աշխատանքով—այն ե՛ր փայտ ավելացնել վառարանին և կրակահանով աշխատել: Նա լրջախոհ դիտում էր կաթսան ու նրա ջերմությունը վորոշում:

Հանդիսականների ծաղրական դիտողությունների տակ ափին մոտեցավ Պապենի կինը: Յերեխաների ոգնությունն էլ բավական էր նրան ծեր ակադեմիկոսի աղքատիկ ունեցվածքը նավը փոխադրելու համար:

Ճանապարհ գնողներից վոչ մեկը բարի ճանապարհ չմաղթեց Պապենին: Այստեղ կային հակառակորդ գիտնականներ, վորոնք բազմիցս նախանձել էին Դենիին, աստիճանավորներ, վորոնց նա այնքան գլխացավանք էր պատճառել, իր փորձերի համար անընդհատ դրամ պահանջելով և վաճառականներ, վորոնք շատ քիչ ոգուտ ունեղին այդ աղքատ ընտանիքից: Վոմանք ուրախ էին Պապենի մեկնելուն, մյուսներն անտարբեր. վոչ վոք չէր տխրում:

Այն միջոցին, յերբ Պապենն արդեն պատրաստ էր արձակելու նավի պարանը, ամբոխի միջից աջ ու ձախ հրբերով, կեղտոտած հագուստով, կաշվե այրված գոգնոց կապած, մի ծեր մարդ գուրս լեկավ: Վարպետ Վոլֆգանգ Լանդենն էր այդ: Նա ոգնել էր Պապենին մեքենաներն ու

ապարատները պատրաստելիս: Միմիայն նա էր հասկանում, թե ով էր հեռանում իր հայրենի կասսելից: Կամբըջակին մոտենալով Լանդենը պատկառանքով գլխարկը հանեց ու ծալած մի թուղթ համեստ կերպով մեկնեց Պապենին:

— Լսեցի նավը բաց թողնելու դժվարությունների մասին: Յեթե վորևե անհաջողության հանդիպեք, հանձնեք այս նամակը Մյունդենի մոտ Լոխում ապրող նավավարապետ Թեոդոր Դայմլերին: Նա միշտ կոգնի ձեզ իր խորհուրդներով: Աստված պահի ձեզ, պարոն:

Ծուխը հորդում էր խողովակից: Յեռացող ջրից կաթսան դողում էր: Պապենը ձեռքը մեկնեց կռանին: Հավասարակշռության ձողը ճոճվեց, բայց հանկարծ փոքրիկ հնոցապանն ինչ-վոր մի բան հիշեց և վազեց հոր մոտ:

— Մոռացել ենք մեզ հետ վերցնել մեր շանը:

Յեվ իսկապես, ափին մի մեծ բրդոտ շուն էր վազվրդում: Հանդիսատեսներն աքացիներով հետ էին մղում նրան: Պապենն անհոգ ձեռքը թափ տվեց, բայց տղան ստիպեց մեքենան կանգնեցնել և շանը սախտակամածի վրա բարձրացնել: Հավասարակշռության ձողը նորից ճոճվեց, անիվները թիակներով ջրին զարկվեցին և տարորինակ նավը հեռացավ նավակայանից:

Մարդկության պատմության մեջ առաջին անգամն էր լողում մի նավ, վորը գոլորշու ուժով էր շարժվում: Բայց ափին կանգնածներից վոչ մեկը չհասկացավ, վոր կարող է պարծենալ թեկուզ միայն նրանով, վոր տեսնում է այդ: Հանդիսատեսները ծիծաղում էին չտեսնված նավի վրա: Միայն Վոլֆգանգ Լանդենը՝ կաշվե գոգնոց կապած վարպետը՝ յերկար ժամանակ ափով վազում էր նրա հետևից ու գլխարկը ճոճում:

Մեքենան ադմկում էր ու թխկթխկում: Նրա բոլոր շարժումներն ուղեկցվում էին գոլորշու փնչոցով, վորը

քուլա-քուլա ժալթքում եր միացման բոլոր ճեղքերից: Վատ սարքված մասերը ճոռում եյին: Սակայն Պապենը գոհ եր: Նա մտածում եր մեքենան բարելավելու մասին Լոնդոն հասնելուց հետո:

Նավը հաջող եր լողում, թեպետ շարժիչը մեծ ընդհատումներով եր աշխատում: Մեկ շրթան եր հավասարակշռության ձողից ցած ընկնում, մեկ գլանի խուփն եր բացվում, մեկ անփութ Ֆրանսուան մոռանում եր կռանը բանալ, վոր դուրընի կաթսայից գլանն անցնի: Պապենը հաճախ ինքն եր ստիպված լինում կանգնեցնել մեքենան, վորպեսզի նրա խարխուլ հիմքը կարողանա նավի հենքին ամրացնել:

Յերբ նավը կանգ եր առնում, Պապենի կինը թեթևացած շունչ եր քաշում: Նա այնպես եր հաշվել, վոր նավի նորոգումը կտեվի մինչև Մյունդեն: Նավը սահում, լողում եր Ֆուլդա գետի հոսանքով: Յերբխաներն անհող խաղում ելին նավի տախտակամածի վրա, միայն փոքրիկ հնուցապանը ճարպկորեն մուրճը ձեռքին ոգնում եր հորը:

Ի գոնություն տիկին Պապենի, մեքենայի փաստածության պատճառով նավը ճանապարհի մեծ մասը հոսանքի ուղղությամբ եր լողում: Առանց մեծ փորձանքների անցան ամբողջ Ֆուլդան: Յերեկոյան կապույտ մթնշաղի միջից Վեգերի մեջ թափվող Ֆուլդայի լայնարձակ գետաբերանը յերևաց:

Կանգ առած մեքենայով նախ անձայն իջնում եր իրիկնադեմի մթնշաղի մեջ խաղաղված գետով: Լոխա գյուղին չհասած Պապենը մի լքած տախտակյա նավամատուց տեսավ: Նա վորոշեց կանգ առնել այստեղ, վոր ժամանակից շուտ բնակչության ուշադրությունը չգրավի: Դողդողացող ձեռքով նավապարանը մեկնեց տախտակամածի վրա թռած իր վորդուն: Պապենն այնպես եր հուզված, վոր ստիպված եր մի րոպե նստել: Կինը խղճահարու-

թյամբ նայեց Պապենին: Նա շատ լավ հասկանում եր, թե ինչ եր ապրում այդ մարդը, վորը գուցե մոտեցել եր իր կյանքի ամենավճռական ուրին:

Պապենը գնաց Լոխա Թեոդոր Դայմլերին վորոնելու: Նա իր հետ վերցրեց վորդուն, վոր նա ճանապարհի մասին հարց ու փորձ անի, առանց ուշադրություն դրավել իր ֆրանսիական արտասանության վրա: Կասեղում ծնված աղան խոսում եր ինչպես իսկական հեսսենցի: Շուտով արդեն գտան նավավարպետի տունը և գուռը բաղխեցին:

Թեոդոր Դայմլերը շատ ել սիրալիք չընդունեց գիշերվա հյուրերին, բայց յերբ կարգաց վարպետ Լանդենի նամակը, միանգամից փոխեց իր վերաբերմունքը:

— Եհ, պարոն,—ասաց նա, լավ չե՞ ձեր գործը: Դուք լավ գիտեք, թե ինչքան գծում մարդիկ են այդ վաճառականները: Մեզ նման արհեստավոր մարդն ելի կարող ե հասկանալ ձեր դրությունը: Յեթե այդ գործը մեր համբարությունից կախում ունենար, մենք վաղն ևեթ բաց կըթողնեյինք ձեզ: Բայց գիլդիան հենց նրա համար ել գիլդիա չե, վոր ատամներով պաշտպանի իր արտոնությունները: Ստիպված կլինեք թափ տալ ձեր քսակը, վորպեսզի կարողանաք թուլտվություն ստանալ:

— Յես ուրախությամբ կտամ բոլորը, ինչ ունեմ, բայց քսակիս մեջ չեղածը հաղիվ թե բավականացնի թուլտվության թուղթ ստանալուն, տխուր ասաց Պապենը:

Դայմլերը յերկար ժամանակ լուռ քայլում եր սենյակում:

— Ահա թե ինչ, պարոն,—ասաց նա վերջապես:—Վաղը առավոտից յես կգնամ իմ նավատիրոջ մոտ և կախատեմ համոզել նրան: Իսկ դուք գնացեք շրջանի նախագահի մոտ և հաջողեցրեք իրավունք ստանալ աստիճանավորներից: Յեթե յես վորևե բան տեղեկանամ, կգամ կպատմեմ ձեզ:

Յերբ Դայմլերն իմացավ, վոր Պապենն իր ընտանիքով գետափին ե գիշերելու, սարսափեց:

— Մարթա, Մարթա,—գոռաց նա,—դու լսում ես, պարոն Պապենը բաց յերկնքի տակ ե գիշերում: Այսպես ել բան կլինի, Մարթա: Մտադիր չե՞ս գնալ և հրավիրել նրանց, վոր մեր տունը գան գիշերելու:

7. ՄԻ ԶԱՐՀՈՒՐԵԼԻ ԳՈՐԾ

Հետևյալ ինչպես և նախորդ յերեկոյան Պապենն իր վորդու հետ նավի վրա տեղավորվեց գիշերելու, իսկ նրա կինը նորից Դայմլերների մոտ գնաց:

Պապենի քունը չեր տանում: Վերարկուի մեջ փաթաթված՝ նա պառկած եր իր վորդու կողքին: Ֆրանսուան կուչ լեկած կպել եր հորը: Զով գիշեր եր: Քամին կարճ ու կտրուկ հորձանքներով եր հարձակվում: Ալիքները ծփալով կաշում ելին նավի կողերին:

Տղան դողալով ցնցվում եր: Պապենը վերարկուն ցած գցեց իրենից և խնամքով ծածկեց տղային, ինքը նստեց նավի տախտակամածի վրա ու իր մարմինը դեմ տվեց թափանցող քամուն: Նա ցուրտը չեր զգում, նրա մտքերը շատ հեռու ելին սլանում: Պապենը նայում եր յերկնքին: այնտեղ մի անհայտ ուժով հալածված ամպերն ելին վազում ու մերթ պարուրում ելին լուսնի գունատ դեմքը, մերթ նորից բացում աչք: Անընդհատ աճում ու շատանում ելին ամպերը, սլացիկ թափով վազում ու հետզհետե պատում յերկինքը, համարյա վոչ մի աստղ չթողնելով նրա վրա: Պապենը հիշեց անցյալում այդպիսի մի գիշեր, յերբ հարազատ պապենյանների լուսամուտից դիտում եր այդպիսի մի յերկինք, վորտեղ նույնպես սլանում ելին ամպերը: Այն ժամանակ Պապենը յերիտասարդ եր և վստահ եր թե՛ իր անձի և թե՛ կյանքի ու գիտության վրա: Այժմ

նա ծեր ե և կորցրել ե վստահութունը թե՛ դեպի ինքը և թե՛ դեպի կյանքը: Ծիշտ ե, գիտությանը նա դեռ վստահում ե...

Պապենը հանկարծ ցնցվեց: Տղայի կողքին քնած շունը վեր թռավ և հաջելով դեպի նավամատույցը վազեց: Մթության միջից յերեկաց արագ քայլելուց հեկացող Դայմլերը՝ Պապենն ուրախացած վազեց նավավարպետի հանդեպ՝ տեսնելով նրա ձեռքին բռնած թղթի կտորը: Պապենը բռնեց նրան ու սկսեց շտապ լույս հանել կաթաբարից, վոր կարդա թուղթը:

— Անցագիրն ե, անցագիրն ե այդ,—փնթփնթում եր ծերունին:

— Վոչ, վոչ, յես միայն գիլդիի պաշտոնական վորոշումն եմ ձեզ համար արտագրել,—շփոթված պատասխանեց վարպետը:

— Ո՛ր, վորքան դուք բարի յեք, պարոն Դայմլեր,—չգիտեմ ինչպես հայտնեմ ձեզ իմ շնորհակալութունս:

Լապտերի դողացող լույսի տակ Պապենն սկսեց ջուկել Դայմլերի խզզազները:

«... Յեթե պատահի, վոր տեղական իշխանութունը նավատերերի գիլդիի արտոնութուններին հակառակ, հրաման տա նավը բաց թողնելու մասին, այդպիսի նավը պիտի ափ հանվի»:

Պապենն ուժասպառ ձեռքերը ցած գցեց: Ի՞նչ անել: Ձեռք քաշել բոլորից, անձնատուր լինել և նախ այստեղ հանձնել:

Դայմլերը չեր կարողանում վոչ մի պատասխան տալ: Վոչնչով չեր կարողանում հանգստացնել ծերուկին: Դայմլերը գնաց: Պապենն աչքը չփակեց: Նրա դրության մեջ ո՞վ կարող եր քնել:

Իր անելիքը վորոշելով նա արթնացրեց վորդուն:

— Վաղիր իսկույն Դայմլերի մոտ և բեր այստեղ մորդ՝ յերեխաների հետ միասին:

— Ի՞նչ եք ուզում անել, հայրիկ, — հարցրեց տղան վախեցած:

— Վորոշել եմ շարժվել այստեղից: Մենք կաշխատենք աննկատելի անցնել մաքսատան մոտով:

— Բայց չե՞ վոր լուսինը պայծառ փայլում է:

— Յեթե աստված ուզի, լուսինն ել կդադարի փայլելուց, — համառ պատասխանեց ծերուկը: — Գնա, գնա, ժամանակ մի կորցնի:

Ֆրանսուան գնաց: Պապենն սկսեց կաթսան վառել: Բայց դեռ կես ժամ ել չեր անցել, վոր տղան հետ վազեց: Նրա ասելով՝ գետի ափով բաղմուժյուն եր շարժվում, վորը դեպի նալն եր գալիս: Ֆրանսուան լսել եր, ինչպես մարդիկ ասում ելին, թե չպետք է ժամանակ կորցնել, հարկավոր է միանգամից մեր իմացած ձևով վերջ տալ այդ նավին:

Պապենը չեր տատանվում: Նա վորոշեց ափից հեռանալ և հոսանքով մի փոքր ցած իջնել: Այնտեղ ափին խիտ բուսած ուռենիներ նկատեց: Գուցե հաջողվի նրանց մեջ թագնվել:

Նավը լուռ սահեց մթուժյան մեջ: Ափին մարդիկ չերեկացին: Նրանք այլևս չելին թագնվում և ջահերը վառեցին: Պապենը լսեց նրանց հայոյանքը: Նրանք տեսան, վոր նավն անհայտացել է: Մարդիկ ջահերը ձեռքին ափով այս ու այն կողմ ցրվեցին: Սակայն նավն այնքան լավ եր ծածկված թփուտով, վոր նրանք չերկու անգամ անցան նավի մոտով և վոչինչ չնկատեցին: Այն ժամանակ Պապենը վորոշեց մի անգամ ել Դայմլերի մոտ ուղարկել վորդուն, վոր մորը բերի:

Ֆրանսուան նորից վազեց:

Ջդային դողոցը զսպած, ծերուկը հետևում եր իրեն վորոնողներին: Նա շունչն իրեն եր քաշել, վախենալով ինքն իրեն մատնելուց: Վորոնողներից մեկն ուղղակի

թփուտին մոտեցավ, փորձեց թփուտների մեջ մտնել, բայց խճճվեց և հայհոյելով սկսեց հեռանալ: Վերջին վտանգն անցել եր: Ծերուկնին ուզեց իր գոհությունը հայտնել աստուծուն իրեն փրկելու համար, բայց հենց այդ վայրկյանին հանգիստ պառկած շունը հանկարծ տեղից պոկ լեկավ և կատաղի հաջոցով ափը նետվեց:

Մարդիկ հավաքվեցին:

Արդեն լուսանում եր, չերբ տիկին Պապենը և Դայմլերը վազելով հասան ափը:

Մի քանի ուժեղ աքացի ստանալուց ուժասպառ յեղած Պապենը նստած եր գետնին: Նավաստիները սկզբում ուզեցին նավը միայն ափ հանել, բայց Պապենի դիմադրությունն այնպես բարկացրեց նրանց, վոր վորոշեցին ափելի հեռու գնալ: Նրանք հենց տեղնուտեղը խորհրդակցեցին և ծերունուն հայտնեցին վորոշումը:

— Դու փորձում ելիր դեպի Վեգեր անցնել առանց գիլդիի թույլատվության, դա որենքին դեմ է: Այդ պատճառով նավը բռնազրավվում է և գիլդիի սեփականությունն է հայտարարվում:

Նավը հրապարակական աճուրդով մաս-մաս կծախվի: Մի հաստ ու կարճ մարդ առաջ նետվեց:

— Յես խոզովակն ու անիմներն եմ գնում, — գոռաց նա, — դու, Հանս, կաթսան վերցրու: Դու, Ուտտո, նավի իրանը գնիր: Այլևս չարժե խոսել, աճուրդն արդեն կայացավ:

Ամբոխը հենց զրան եր սպասում: Կացիններով գինված նավաստիները նավի վրա թափվեցին: Պապենը չեր կարողանում նայել, թե ինչ է կատարվում, ու հառաչանքով դեմքը ձեռքերով ծածկեց:

Շուտով նալն ափերված մի կույտ եր ներկայացնում: Նույնիսկ նա, վոր իրանն եր գնել, չուզեց ոգտվել դրանից և ամբողջը մանր տաշեղներ դարձրեց:

Վաճառականները կատաղությամբ եյին գործում։ Բանն իհարկե մի քանի գուլգենի մեջ չեր, վոր գիւղին չեր ստացել այդ չտեսնված նավի անմաքս անցումից։ Նավատերերը պայքարում եյին առաջին շոգենավի դեմ, վորը կարող եր փոխարինել իրենց առագաստավոր տապաններին։ Այդպիսի գյուտ իրենց ձեռնտու չեր։

Զարհուրելի գործը կատարված եր։ Առաջին շոգենավն այլևս գոյութիւն չուներ։

Պապենը միայն Դայմլերի տանն սթափվեց։ Նա դեռ չեր կարողանում հալատալ այն բոլորին, ինչ վոր կատարվել եր։ Նույն ուրը նա մեկնեց Բրեմեն, վոր նաւ նստի և ուղեւորվի Անգլիա։ Ուժասպառ ծերունին թախիծով եր թողնում իր յերրորդ հայրենիքը, վորը նույնչափ անսիրալիբ եր, վորչափ և յերկու նախորդ հայրենիքները։

8. ՎԵՐՋԻՆ ՄԵՐԺՈՒՄԸ

Պապենը դժվարությամբ կարողացավ կարգաւ վերջին տողերը։

«Նորին մեծութեան թագուհու գանձարանից Դենի Պապենի ֆանտաստիկական նախագծերին միջոց հատկացնելու մասին հարուցված միջնորդութիւնը մերժեւ։ Նախագծերը համաձայնեցրած չեն աստծու կամքի հետ և հակառակ են մարդկային բանականութեանը և բնութեանը»։

Պապենը մի կողմ դրեց թուղթը, հետո վերցրեց և նորից կարդաց։ Շոգենավային կառուցման համար փող բաց թողնելու մասին արած նրա դիմումի հինգերորդ մերժումն եր այդ։ Այս անգամ ծովային վարչութիւնն եր մերժում նրան։ Իսկ մինչև ծովային վարչութիւնը չորս ուրիշ հիմնարկներ մերժեցին։ Վոչ վոք չեր ուզում գործ ունենալ նրա հետ։ Վոչ վոք այլևս չեր հալատում նրա խելքի ույթին։ Անգլիան չեր ցանկանում ճանաչել նրա գյուտարարական տաղանդը և գիտնականութիւնը։

Ավելի քան չորս տարի Պապենն ամեն տեսակ գրասենյակների շեմքերը արորեց միջոցներ վորոնելու համար։ Բայց վոչ մի տեղից վոչինչ չստացավ, ամեն տեղից միմիայն մերժում եր լսում։

Չորս տարուց ավելի յեր անցել այն ուրից, յերբ Պապենը կորցրեց իր նավը և վերադարձավ Լոնդոն։

Անգլիայի մայրաքաղաքը սիրալիբ չհանդիպեց նրան։ Բոյն այլևս չկար։ Ընկերութեան մյուս անդամները չեյին ուզում Պապենին ներել նրա փախուստը։ Նրանք ընդմիշտ հանեցին Պապենին ընկերութեան կազմից։ Վոչ վոք նրան չեր ուզում ճանաչել։ Սկսվեցին նոր գրկանքներ, ավելի դաժան, քան աջն, վոր արդեն կրել եր դժբախտ ընտանիքը նույն քաղաքում։

Ծեր Պապենն իր գաղափարով տարված՝ վոչ մի ծառայութեան մասին լսել չեր ուզում։ Նա մի միտք ուներ միայն՝ մեքենան, մեքենան և մեքենան։ Ընտանիքը միայն մի աշխատող ուներ, Պապենի վորդի-Ֆրանսուան։ Նա միայն կոպեկներ եր աշխատում, և ընտանիքը սոված եր մնում։ Դենիի կինը չկարողացավ տանել այդ կյանքը և մեռավ։ Շատ չանցավ նրան հետեցին Ֆրանսուայի յեղբայրն ու քույրը։ Դենին մնաց մենակ իր փոքրիկ ոգնականի հետ։ Հարազատների մահը սաստիկ ազդեց նրա վրա։ Պապենը վերջնականապես դադարեց իր մասին հոգալուց և, յեթե Ֆրանսուան չլիներ, յերեվի ուտել-խմելն ել կմոռանար։

Գիտնականի բարձրահասակ ու նիհար կերպարանքը, պատառոտած հագուստով, մերթ մի հիմնարկութեան, մերթ մյուսի մեջ եր յերևում, և աստիճանավորները ծաղրում ելին նրան։ Ամեն տեղ նա խնդիր եր տալիս, հույս ունենալով, վոր կարող ե գոնե մի բան ստանալ մեքենայի կառուցման համար։ Յեւ անհա նրա առաջ դրված ե մերժումով վերադարձված ելի մի խնդրագիր։ Հինգերորդ մերժումը մի տարվա ընթացքում։

Պապենն զգում էր իր ծերութիւնը: Գիտեր, վոր շատ քիչ ժամանակ է մնացել իր յերազանքներն իրագործելու համար: Ել ժամանակ չուներ խնդրագրեր գրելու և մերժումներ ստանալու համար: Այս մերժումը վերջինը կլինի:

Պապենը գլուխն իջեցրեց ձեռքերին: Ալեվոր մազափնջերը սեղանին ելին հասնում: Լաջն բացած աչքերը մի կետի վրա ելին հառած: Կապտութիւնը շեշտակի բծերով պատել էր նրա աչքերի ու բերանի շուրջը: Գիթը սրվել էր ու ավելի մեծացել:

Պապենը չէր կարողանում վերջին մերժման պատճառը հասկանալ: Չէ՞ վոր նա ծովային վարչութիւն պարզ գրել էր, վոր իր շոգեմեքենայով ոժտված նավը կարող է շարժվել հոսանքների դեմ, թե՛ հանդարտ յեղանակին և թե՛ փոթորկի ժամանակ: Միթե անգլիական նավատորմն ալգալիսի նավի կարիք չունի: Ապա ինչո՞ւմն է բանը:

Գուցէ ծովային վարչութիւն լորդերը հավատ չեն ընծայում Պապենի մեքենային:

Ծերունին մի կապոց զծագրեր հանեց սեղանի արկղից: Պապենը լավ գիտեր նրանց միջի ամեն մի նրբագիծը: Ամեն ինչ մտածված էր: Վորքան շատ էր խորհում շարժիչի մանրամասնութիւններէ մասին, այնքան ավելի յեր հավատում նրան: Այդպիսի մեքենան պետք է աշխատի, նա չի կարող չաշխատել:

Ամբողջ ուր լուռ նստած Պապենը նայում էր իր գծվածքներին, և պատրաստ էր ամբողջ գիշերն ել նայել, բայց լույս չուներ: Ծերունին վաղուց արդեն մոռացել էր, թե ինչ բան է մոմը:

Այդպես ել նա քնեց, ել չսպասեց Ֆրանսուայի վերադարձին:

Նեղ նստարանը Դենիին իբրև անկողին էր ծառայում, այն միակ փայտե իրը, բացի սեղանից, վոր չէր վառել վերջին ձմեռվա ընթացքում:

Պապենը յերկար ժամանակ պառկած էր բաց աչքերով, մինչև վոր վերջապես թուլութիւնը հաղթեց նրան:

9. «ԿԱՆԵՓԻ ՀՅՈՒՐԱՆՈՅԸ»

Ամառը սկսելուց հետո Ֆրանսուան հաճախ նավաշինարանումն էր մնում գիշերելու: Ոստ-Ինդլան ընկերութիւնն նավաշինարանը գտնվում էր Տոուերից այն կողմը Շան կղզու վրա: Այնտեղ Ֆրանսուան աշխատում էր կողմնացուցի վարպետի ոգնականի պաշտոնով: Այնտեղից հոր մոտ՝ Չելսի գնալը շատ դժվար էր: Բանվորական որը արշալույսից մինչև վերջալույսն էր տևում: Յերեկոյան հոգնածութիւնից վտանները դողում են, մեջքը շղաճգութիւնից կուչ է դալիս: Այնքան գալթակղիչ է լինում անմիջապես քնել և ել այնքան հեռու տուն չգնալ: Նավակայանի մոտ ճոպանի կանեփի և նավերը խծակալելու համար խծուծի սարեր ելին բարձրանում: Այդ կուլտերի վրա հրաշալի անկողին կարելի չէր պատրաստել: Ռուսական կանեփը վուշի նման նուրբ է ու փափուկ:

Նավաշինարանի բանվորներն այդ կուլտերը «կանեփի հյուրանոց» ելին անվանում: Շատ կենվորներ կային այդտեղ, վորոնք ուրիշ ապաստարան չունեցին: Ստիպան այդ բաց յերկնքի տակ գիշերելն ել ձրի չէր ձեռք բերվում: Նավակայանի պահապանները «հյուրանոցի» յուրաքանչյուր կենվորից մի պեննի¹⁾ ելին վերցնում:

Ֆրանսուա Պապենն անշարժ պառկած էր իր հակի վրա և ուժասպառ մեկնել էր իր հոգնած անդամները: Նրա փոքրիկ ու թուլակազմ մարմինն ավելի շուտ յերեխայի քան տասնյոթ տարեկան պատանու մարմնի յեր նման:

«Կանեփի հյուրանոցն» արդեն խաղաղվել էր, բայց Ֆրանսուան չէր կարողանում քնել: Նա իր հոր մասին էր մտածում: Շատ էր խղճում ծերունուն: Այն որվանից, յերբ նավը Վեգերի վրա կործանվեց, հայրն ել հանգիստ չի գտնում: Նույնիսկ դատողութիւնը կարծես խանգարվել է:

¹⁾ Պեննի—անգլիական մանր դրամ:

Պապենն զգում եր իր ծերութիւնը: Գիտեր, վոր շատ քիչ ժամանակ ե մնացել իր յերազանքներն իրագործելու համար: Ել ժամանակ չուներ խնդրագրերը գրելու և մերժումներ ստանալու համար: Այս մերժումը վերջինը կլինի:

Պապենը գլուխն իջեցրեց ձեռքերին: Ալեվոր մազափնջերը սեղանին եյին հասնում: Լաջն բացած աչքերը մի կետի վրա եյին հառած: Կապտութիւնը շեշտակի բծերով պատել եր նրա աչքերի ու բերանի շուրջը: Գիթը սրվել եր ու ավելի մեծացել:

Պապենը չեր կարողանում վերջին մերժման պատճառը հասկանալ: Չէ՞ վոր նա ծովային վարչութիւն պարզ գրել եր, վոր իր շոգեմեքենայով ոժտված նավը կարող ե շարժվել հոսանքների դեմ, թե՛ հանդարտ յեղանակին և թե՛ փոթորկի ժամանակ: Միթե անգլիական նավատորմն այդպիսի նավի կարիք չունի: Ապա ինչո՞ւն ե բանը:

Գուցե ծովային վարչութիւն լորդերը հավատ չեն ընծայում Պապենի մեքենային:

Ծերունին մի կապոց գծագրեր հանեց սեղանի արկղից: Պապենը լավ գիտեր նրանց միջի ամեն մի նրբագիծը: Ամեն ինչ մտածված եր: Վորքան շատ եր խորհում շարժիչի մանրամասնութիւնների մասին, այնքան ավելի եր հավատում նրան: Այդպիսի մեքենան պետք ե աշխատի, նա չի կարող չաշխատել:

Ամբողջ ուրը լուռ նստած Պապենը նայում եր իր գծվածքներին, և պատրաստ եր ամբողջ գիշերն ել նայել, բայց լույս չուներ: Ծերունին վաղուց արդեն մոռացել եր, թե ինչ բան ե մոմը:

Այդպես ել նա քնեց, ել չսպասեց Ֆրանսուայի վերադարձին:

Նեղ նստարանը Դենիին իբրեւ անկողին եր ծառայում, աչն միակ փայտե իրը, բացի սեղանից, վոր չեր վառել վերջին ձմեռվա ընթացքում:

Պապենը յերկար ժամանակ պառկած եր բաց աչքերով, մինչև վոր վերջապես թուլութիւնը հաղթեց նրան:

9. «ԿԱՆԵՓԻ ՀՅՈՒՐԱՆՈՅԸ»

Ամառը սկսելուց հետո Ֆրանսուան հաճախ նավաշինարանումն եր մնում գիշերելու: Ոստ-Խնդյան ընկերութիւն նավաշինարանը գտնվում եր Տուներից աչն կողմը Շան կղզու վրա: Այնտեղ Ֆրանսուան աշխատում եր կողմնացուցի վարպետի ոգնականի պաշտոնով: Այնտեղից հոր մոտ՝ Չելսի գնալը շատ դժվար եր: Բանվորական որը արշալույսից մինչև վերջալույսն եր տեւում: Յերեկոյան հոգնածութիւնից վոտները դողում են, մեջքը ջղաճգութիւնից կուչ ե գալիս: Այնքան գալթակղիչ ե լինում անմիջապես քնել և ել աչնքան հեռու տուն չգնալ: Նավակայանի մոտ ճոպանի կանեփի և նավերը խծծակալելու համար խծուծի սարեր եյին բարձրանում: Այդ կույտերի վրա հրաշալի անկողին կարելի լեր պատրաստել: Ռուսական կանեփը վուշի նման նուրբ ե ու փափուկ:

Նավաշինարանի բանվորներն այդ կույտերը «կանեփի հյուրանոց» եյին անվանում: Շատ կենվորներ կային այդտեղ, վորոնք ուրիշ ապաստարան չունեցին: Ստիպան այդ բաց յերկնքի տակ գիշերելն ել ձրի չեր ձեռք բերվում: Նավակայանի պահապանները «հյուրանոցի» յուրաքանչյուր կենվորից մի պեննի¹⁾ եյին վերցնում:

Ֆրանսուա Պապենն անշարժ պառկած եր իր հակի վրա և ուժասպառ մեկնել եր իր հոգնած անդամները: Նրա փոքրիկ ու թուլակազմ մարմինն ավելի շուտ յերեխայի քան տասնյոթ տարեկան պատանու մարմնի յեր նման:

«Կանեփի հյուրանոցն» արդեն խաղաղվել եր, բայց Ֆրանսուան չեր կարողանում քնել: Նա իր հոր մասին եր մտածում: Շատ եր խղճում ծերունուն: Այն որվանից, լերը նավը Վեգերի վրա կործանվեց, հաչրն ել հանդիստ չի գտնում: Նույնիսկ դատողութիւնը կարծես խանգարվել ե:

¹⁾ Պեննի—անգլիական մանր դրամ:

Պատանին ուզում էր վորեւէ բանով ոգնել հորը: Բայց ինչ կարող էր անել: Վարդիկից կարող էր դրամ ձարել մեքենայի կառուցման համար: Իսկ ծերուկը միայն այդ էր յերազում:

Ահա վոտքի ձախ լսվեց: Յերկու մարդ քայլում էին նավակայանով: Լուսնի խավար լույսի տակ պատանին սկզբում պահապանների տեղ ընդունեց նրանց, բայց շուտով տեսավ, վոր սխալվել է: Այդ յերկու մարդիկ նստեցին նավը կապելու հաստ սյուների վրա: Մթուժյան մեջ դժվար էր դեմքերը ջոկել, բայց նրանց խոսակցությունը հասնում էր Ֆրանսուայի ականջին: Խոսակիցներից մեկին նա ձայնից ճանաչեց՝ կապիտան Զոն Վիլլոուբին կրթուսերն էր: Յերկրորդ խոսակիցն անծանոթ էր Ֆրանսուային: Հենց այդ յերկրորդն ասում էր.

— ... Վնչ, սեր, այդ շատ ավելի պարզ է, քան դուք պատկերացնում եք: Բավական է նավախմբի մեջ բաց տախտակամածով մի նավ ունենալ: Այդպիսի տախտակամածի վրա գտնվող ողային նավակը միշտ կարող է թռչել վերև, թշնամու նավի վերև և այնտեղից պարտության մատնել նրան: Ձեր պանծալի նավորդներին կմնա միայն նավաճանկել արդեն հաղթված թշնամուն:

— Դու հիմար բան ես ասում,— մրթմրթաց Վիլլոուբին:

— Ամեն ինչ ճիշտ է այնպես, ինչպես այն, վոր մենք այժմ Թեմզայի վրա յենք գտնվում, միլորդ:

— Արդյոք այնտեղից չար վոգու հետ զաղտնի համաձայնություն հոտ չի փչում, մեղա քեզ, աստված:

— Հիսուս քրիստոս, ում տեղ եք ինձ ընդունում: Փառք ասածու, մի պատահական մարդ չի կանգնած ձեր առաջ: Ավելին կասեմ, յեթե դուք մի այնպիսի վատահելի մեքենա տրամադրեյիք ինձ, վորը կարողանար մի տասնյակ թիավարների փոխարինել, իմ ողային նախ իսկական ումբակոծություն կկատարեր:

— Այո, բավականին զրավիչ է,— ասաց Վիլլոուբին, — սակայն հավատալի չի թվում ասածդ, թեպետ դու ասածու անունով ես յերգվում... Իսկ վորքան ժամանակ է հարկավոր այդպիսի մի նավ կառուցելու համար:

— Մինչև ձեր հետևյալ արշավանքն ամեն ինչ պատրաստ կլինի, սեր:

— Ապա ինչ կասեն լորդ-դիրեկտորները: Ձե վոր այդ դեպքում իմ «Առյուծը» նրանց բոլոր հենանավերին կհաղթի ու մրցանակը կտանի: Յես ծովի տերը կդառնամ:

— Այս մեր յերկուսիս գաղտնիքը կլինի, սեր:

Վիլլոուբին մի վորոշ ժամանակ նստած էր մտածմունքի մեջ, հետո ասաց.

— Կմտածեմ: Վաղը նորից այստեղ արի:

Խոսակիցները բաժանվեցին: Ֆրանսուան դողում էր անհամբերությունից: Նա դժվարություններ ստիպեց իրեն սպասել, մինչև կլուեր Վիլլոուբի քայլերի ձայնը: Այն ժամանակ միայն տղան վազեց հեռացող անծանոթի հետևից:

— Պարոն, այ պարոն:

Անծանոթը վախեցած հետ նայեց: Յերիտասարդին նա կողոպտիչի տեղ ընդունեց ու փախավ նրանից, վորքան ուժ ուներ: Ֆրանսուան հազիվ հասավ նրան:

— Սպասեցեք, յես ձեզ մի կարևոր բան եմ ուզում ասել ձեր ողային նավակի մասին:

Անծանոթը շնչասպառ կանգ առավ, մեջքը գերանների կույտին դեմ տվեց ու ատրճանակը հանեց:

— Չմոտենանա:

— Յես լսեցի ձեր խոսակցությունը նավապետ Վիլլոուբի հետ:

— Դու հետախույզ ես: Ահա, վերցրու լուելուդ համար:

— Դուք սխալվեցիք: Յես ձեր ողային նավի համար անհրաժեշտ մեքենայի մասին եմ ասում: Խոսքս մի գիտ-

նականի նախագծի մասին ե, վորն արդեն կառուցել ե իսկական շարժիչներ: Այդ Պապեն, Դենի Պապեն՝ ակադեմիկոսն ե,—հպարտ պատասխանեց յերիտասարդը:

— Հերիք ե խաբես ինձ: Այդպիսի գիտնականի մասին յես յերբեք չեմ լսել: Թեպետ, սպասիր, այն խենթը չե՞, արդյոք, վորը մի ժամանակ փորձում եր Թեմզալի ջուրը դուրս քաշել: Ինչպէս չե, մտաբերում եմ: Իսկ քո ինչն ե այդ, ամոթ չլինի ասել, ակադեմիկոսը:

— Իմ հայրս ե, մեծ գիտնական ե,— վերավորվեց Յրանսուան:

— Մեծ գիտնականների զավակները ցնցոտիների մեջ նավաշինարանի վրա չեն թափառում:

— Այդ ձեզ չի վերաբերում, — վրա տվեց Յրանսուան: Յեթե դուք ուզում եք ողային նավի համար մեքենա ունենալ, դուք վոչ վոքից չեք կարող ստանալ այն, բացի իմ հորից:

— Ասա, ինչո՞ւն ե բանը:

— Յես կուղեկցեմ ձեզ հայրիկիս մոտ, նա ձեզ կը պատմի ամենը:

10. ՀՈՒԿԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Պապենը հուզված քայլում եր բախում: Նա չեր կարող հյուրին իր խցիկի մեջ ընդունել: Այնտեղ շատ նեղվածք եր ու կեղտոտ և տեղ չկար այցելուին նստեցնելու: Իսկ ախտեղ, բախում, հյուրին մի մեծ հարթ քար առաջարկեց, վորը շատ լավ կարող եր աթուղին փոխարինել: Յրանսուայի գլխերվա խոսակիցը լուրջ տեսք ընդունած լսում եր ծերուկին:

Փոքրիկ խորամանկ աչքերով նա հետևում եր գիտնականի ամեն մի շարժումին:

Պապենը շատ շուտ հասկացավ ողային նավի գաղափարը: Նա առողջ բանականության և գիտության հիմունք-

ներին հակասող վոչինչ չգտավ դրանում: Առաջին հայացքից առաջարկը թվում եր միանգամայն ճիշտ և իրագործելի: Պապենը դատում եր:

— Ուրեմն, միտեր Հուկ, դուք ասում եք, վոր նավի տախտակամածի յերկու կողքերից բարձրանում են վորոշ քանակությամբ հորիզոնական դրությամբ դասավորված հողմահարներ: Նրանք շարժման մեջ են դրվում կենտրոնական գլանի միջոցով, վորը պտտեցնում են տասերկութիավարներ, և նավը ողի մեջ ե պահպանվում:— Պապենը մտածվունքի մեջ կանգ առավ ու ճակատը տրորեց:— Յես վոչ մի առարկություն չունեմ: Դա համապատասխան ե ֆիզիկայի որենքներին: Յես պատրաստ եմ շնորհավորելու ձեզ: Կարող ե պատահել, վոր դուք մոտ եք մի նոր տարերքի՝ ողին հաղթելուն: Միայն հիմարները կարող են կարծել, վոր ինքն աստված ե պաշտպանել տարերքը մեր բանականության վտանձգություններից:

— Յեվ դուք գտնում եք,— անվստահաբար հարցրեց Հուկը,— վոր ձեր մեքենան տասերկու ուժեղ թիավարներին կփոխարինի:

— Տասնութ, պարոն, և վոչ թե տասներկու,— համոզված պատասխանեց Պապենը:— Իմ հաշվումները մաթեմատիկայի և փորձերի վրա չեն հիմնված: Յես յերաշխավոր եմ նրանց համար:

— Յեվ նա կարող ե անդադար աշխատել, այնքան յերկար, վորքան և ամենադիմացկուն նավորդը:

— Վոչ մի արգելք չկա, վոր այդ մեքենան վորքան կամենանք՝ աշխատի, միայն թե վառելանյութ լինի ջուրը տաքացնելու համար:

— Վոչինչ, համաձայն եմ փորձել ձեր մեքենան, թեպետ, ճիշտն ասած, այնքան ել չեմ հավատում բոլոր այդ հաշվումներին:

— Ո՛ր, պարոն, բացականչեց Պապենը ջերմովին, — մեքենան հարյուրապատիկ կվերադարձնի ձեզ այն բոլորի փոխարեն, ինչ կծախսեք նրա կառուցման վրա:

Հուկը ծիծաղեց:

— Դուք սխալվում եք: Մենք և վոչ մի ֆարախեք չենք դնի այդպիսի անհույս գործի մեջ: Այն ել բավական է, վոր համաձայնում ենք ձեր մեքենան դնել մեր նավակի վրա: Չե՞ վոր մենք մի ուսկ ենք անում, վորից նույնիսկ ծովային վարչութիւնը խուսափեց:

Պապենն ապշած կանգ առավ բակի մեջտեղում:

— Դուք ինձ միջոց չե՞ք տա կառուցելու համար: Հապա վորն է ձեր ոգնութիւնը:

— Մենք կվճարենք ձեզ կանխիկ առաջին մեքենայի համար, յետե նա լավ կլինի:

— Բայց չե՞ վոր առաջին որինակն ել հարկավոր է կառուցել: Յես այդ բանի համար միջոց չունեմ:

— Վորքան է հարկավոր դրա համար:

Պապենն մտածեց:

— Մի հիսուն գինեյ¹⁾:

Պապենն այնպես անփույթ ասաց այդ, վոր Հուկը քրքջաց և արհամարհական հայացք ձգեց գիտնականի վրա: Պապենը շփոթված պնդացրեց իր պատառոտած հագուստը, վորի տակ սպիտակեղեն չուներ:

— Դուք ինքներդ կարող եք գտնել այդ դրամը, — ասաց Հուկը:

— Ամբողջ կյանքիս ընթացքում յես կարծել եմ, թե զրպանիս մեջ յեղածը գիտեմ համարել:

— Յեվ ահա ծեր հասակում սխալվեցիք:

— Ապա ուրեմն շուտ արեք, բացեք իմ սխալը, սեր:

— Հիսուն գինեյ, ասացիք դուք, բարձր գին է, բայց անհեթեթ չե՞ լավ զորակոչիկի համար: Յես պատրաստ եմ բանակցելու թագավորական նավատորմի զինվորագրողի հետ: Դուցե նա վճարի այդ գումարը ձեր Ֆրան-

¹⁾ Գինեյ — անգլիական վոսկե դրամ, վորը մոտավորապես այժմյան ֆունտ ստերլինգին է հավասար:

սուայի համար: Խելացի տղա չե, լավ գիտե կողմնացուց-
ցային գործը:

Պապենը պատին հենվեց, վոր վայր չընկնի: Նրա դեմքը մոխրագույն դարձավ: Ուժերը հավաքելով նա հյու-
րին դուռը ցուլց տվեց:

11. ՀԱՅՐ ՈՒ ՎՈՐԴԻ ԴՐԱՄ ԵՆ ՀԱՅԹ՝ ՀԱՅԹՈՒՄ

Ֆրանսուան նիհարել ու վտիտ եր դարձել: Շուտով մի ամիս կլինի, վոր նա համաբյա ամենեկին չի քնում: Նավաշինարանում տասնչորս ժամյա բանվորական որն ավարտելուց հետո նա փակվում է արհեստանոցում և չորս նոր կողմնացույցներ պատրաստելու վրա յե տքնում: Վարպետը խոստացավ առասպելական վարձատրութիւն տալ նրանց համար՝ քսան գինեյ: Աշխատանքն անհրաժեշտ է ժամանակին ավարտել, վորովհետև այժմ դրամն անհրաժեշտ է ավելի քան յերբեկից: Տանը հատակի տակ պահված խնայողության հետ միասին ուղիղ հիսուն գինեյ կանի: Ծերուկը զառանցում է այդ գումարի համար: Վորքան կարելի յե՝ շուտ պետք է տալ նրան:

Դա կլինի Ֆրանսուայի առաջին, գուցե և վերջին նվերն իր հորը:

Շուտով կլուսանա: Կաթնանման մառախուղն իջել է յերկրի վրա: Այդ պղտոր՝ մառախուղի միջից վոչ գետն է յերևում, վոչ ել նրա վրա կանգնած նավերը: Նրանցից ամենամոտիկ կանգնածի մասին կարելի յե իմանալ նավաղորդին խփվող ջրի ծփուլներից: Վոչ նավակայաններն են յերևում, վոչ ել մերձակա շենքերը:

Աշտարակից ժամացույցի զարկերն են լսվում: Ֆրանսուան ուղղում է մեջքը և հիանում հենց նոր պատրաստած քարտաշըջանով:¹⁾ Սակայն աչքերն այնքան են հոգ-

¹⁾ Քարտաշըջան — գծերով բաժանված թեթև շրջանակ (կողմնացույցի մասը):

ներ, վոր շրջանակի բաժանումները զարդարող փորագրման նուրբ վորդապետները չի տեսնում: Փրանսուան խնամքով վայր ե գնում գործը: Ելի մի քանի դիշեր, և նա լիքը քսակը զնգզնգացնելով կվազի դեպի Չելսի:

Յերիտասարդը քաղցր ճմլոտվեց, բաճկոնը հատակին փռեց ու պառկեց: Խորը քուն պատեց նրան միանգամից: Յերկու ժամից հետո աշխատանքն սկսվելու յե նավաշինա-րանում:

Ամբողջ այդ ամիսը, յերբ Փրանսուան ջանասեր աշխատում էր, ամեն որ բաղխվում էր այն տան դարպասը, վորտեղ Պապենն էր ապրում:

Սե, մոռալ Վերպարանքը կամաց անցնում էր բակով: Այդ Հուլին էր դալիս պատասխան ստանալու համար: Բա-կի մեջ տեղը կանգնած, նա ճռճուսն ձայնով իր սովորա-կան հարցն էր տալիս: Վոչ մի պատասխան չէր ստանում և միայն տանիքի տակ գտնվող փոքրիկ լուսամուտի պղղ-տոր ապակու հետևին թափնվող շվաքից իմանում էր, վոր Պապենը տանն է և լսում է իրեն: Հուլը խորամանկ ժպտում էր ու ասում:

— Խորհուրդ եմ տալիս մտածել, սեր:

Նա հետ էր դառնում ու նույն՝ չափված քալերով հե-ռանում: Այսպես կրկնվում էր ամեն որ, մինչև վոր, վեր-ջապես, Պապենը հազիվ լսելի ձայնով պատասխանեց.

— Մտեք:

Խոսակցությունը յերկար չտևեց: Խոսում էր միայն Հուլը:

— Ձեզ հարկավոր է միայն ստանալ ձեր վորդու ըս-տորագրությունը այս թերթի վրա: Մնացածը յես ինքս կանեմ: Վոչ մի սարսափելի բան չի սպասում նրան: Ըն-դամենը տասը տարի ծառայություն նորին մեծության առաջատանավերի վրա:

— Վաղը կպատասխանեմ,— շնչաց Պապենը:

— Այսօր կամ յերբեք: Ահա թերթը:

Պապենը դողդողացող ձեռքերով վերցրեց թերթը: Ձինվորագրման թերթն էր այն:

— Վաղը ձեզ մոտ կլինեմ: Դուք դրամը կստանաք այն ժամանակ, յերբ ձեռք կբերեք սպորագրու-թյունը:

— Վոչ, վոչ, ի՞նչ եք ասում, այդ անկարելի յե,— վա-խեցած շնչաց Պապենը, սակայն Հուլն արդեն չկար:

Մինչև յերեկո Պապենը չէր համարձակվում թղթին նայել: Միայն արևի վերջին ճառագայթներից ոգտվելով՝ նա նայեց թերթին: Այո, դա մի պայմանագիր էր տաս տարի նավատորմում ծառայելու մասին: Ուրեմն մարդկու-թյանը շոգեմեքենա տալու հնարավորության համար նա իր վորդու կյանքով պիտի վճարի: Միթե այդ տուսը տար-վա ծովային ծառայությունը հավասար չէ մահվան:

— Վոչ մի դեպքում,— գոռաց Պապենը և զզվանքով թերթը դեն գցեց:

Սակայն մութն ընկնելուն պես ծերունին ինքն ել չգիտեր, թե ինչպես փողոց դուրս յեկավ: Նավաշինարա-նի ուղղությամբ էր քայլում ու հաճախ գրպանը շոշա-փում. այնտեղ յեղած թերթն այրում էր նրան:

Արդեն դիշեր էր, յերբ Պապենը կողմնացույցերի ար-հեստանոցը հասավ: Փրանսուան խորատուգված էր աշխա-տանքի մեջ. նա վերջին կողմնացույցն էր ավարտում: Յերբ հորը տեսավ, ուղեց պատմել ծերուկին իր մտադը-րություն մասին: Բայց զսպեց իրեն: Թող դա հոր համար մի սյուրպրիզ լինի, ավելի շատ կուրախանա: Պապենի հարցին, թե ինչ է անում, Փրանսուան կեղծ անհոգու-թյամբ պատասխանեց:

— Հենց այնպես, դատարկ բան, մի շտապ պատվեր է:

— Դու քեզ նման չես,— տխուր ասաց ծերուկը:

— Աշխատանքս շատ է:

— Գիշեր-ցերեկ աշխատանքի մեջ ես: Դու կքայքայես առողջութիւնդ:

Պապենը քնքշությամբ յերկու ձեռներն մեջ առավ վորդու գլուխը ու յերկար նայում եր նրա դեմքին:

— Յես կազատեմ քեզ այս տաժանակիր աշխատանքից,—ասաց նա՝ հազիվ զսպելով իր լացը:

Փրանսուան հոր հուզմունքը տեսնելով, աշխուժով պատասխանեց.

— Վոչինչ, շուտով կվերջանա, և այն ժամանակ մի կուշտ կքնեմ:

Ծերուկը նստած եր մտածմունքի մեջ, հետո դողդողացող ձայնով ասաց.

— Չե՞ վոր յես գործով եմ յեկել:

Պապենը բացատրեց, վոր իրեն հարկավոր է վորդու ստորագրութիւնը յերաշխաւորության տակ: Ասաց, վոր գտնվել են բարի մարդիկ, վորոնք համաձայնել են մի քիչ դրամ փոխ տալ մեքենան կառուցելու համար:

— Վորքան,—խորամանկությամբ հարցրեց պատանին:

— Հիսուն գինեյ:

Փրանսուան մի բոպե մտածմունքի մեջ ընկավ. չափով արդյոք: Վոչ: Ինչպիսի՞ ուրախութիւն կլինի ծերուկի համար, յերբ Փրանսուան կբերի և կտա նրան իր աշխատած դրամը, ու առանց թղթին նայելու հանգիստ սրտով ստորագրեց. չե՞ վոր այս պարտավորութիւնը մի քանի որով է միայն: Շուտով պարտքը վճարված կլինի:

Հետեւյալ որը Փրանսուան չորս նոր կողմնացույցեր հանձնեց վարպետին: Վարպետն ուշադրությամբ դիտեց դրանք և գոհ մնաց աշխատանքի ճշտութիւնից և կերտվածքի նրբագեղութիւնից:

— Յեկ դրամը ստացիր,—ասաց նա:

Մթության մեջ աղբակույտերի վրա ընկնելով՝ Հուկը ձոձուացող սանդուխքներով բարձրացավ և առանց բաղ-խելու հրեց չարդախի դուռը: Պապենը քնած եր նստա-րանի վրա: Սեղանին թափված ելին գծագրեր, իսկ նրանց վրա ճմրտված ընկած եր զինվորագրության թերթը: Հու-կը տատանման մեջ՝ կանգ առավ, հետո մոտեցավ քնա-ծին: Ծերունու շնչառութիւնը հազիվ եր լսվում:

— Պարոն, պարոն,—ցածր ձայնով կանչեց Հուկը:

Պապենը չշարժվեց: Մի փոքր մտածելուց հետո Հուկը հիսուն վոսկի համարեց: Դրամը խուլ հնչյունով թափվում եր սեղանի տախտակի վրա: Այնուհետև Հուկն արագ հա-վաքեց սեղանի վրա թափթփված գծագրերը: Զինվորագրողի թերթը Փրանսուայի ստորագրությամբ խնամքով ծալեց ու գրպանը դրեց: Մի քանի քայլ եր արել դեպի դուռը, յերբ նորից վերադարձավ, մոտեցավ սեղանին, հավաքեց թափված դրամն ու իր քսակի մեջ լցրեց: Պապենը դար-ձյալ չշարժվեց:

Ծերուկն ամբողջ որը մնաց անշարժ պառկած: Յեր-բեմն միայն թուլլ հառաչանք եր դուրս թռչում նրա շըր-թունքներից, կարծես մղձավանջն եր տանջում նրան: Ար-դեն գիշեր եր, յերբ նա հանկարծ վեր թռավ: Ամբողջ մարմինը սառը քրտինքով եր ծածկված: Հենց հիմա, հի-մա նա տեսավ, ինչպես իր վորդի Փրանսուային կալանա-վորած, շղթայած տանում էին: Տղան աշխատում եր ա-զատվել, նա չեր ուզում ընդունել թագուհուն տասը տա-րի ծառայելու հավատարմագրի վրայի իր ստորագրու-թիւնը:

Այդ սարսափելի յերազը իրենից դեն քշելով՝ Պա-պենը ձեռքը յերեսին քսեց: Ծրթունքները դողուս էին: Նա շշնջում եր:

— Այն, այն, զավակս, այդ ստորագրութիւնը վոչ
վոք չի տեսնի, վոչ վոք և յերբեք:

Դողացող ձեռքերով նա կրակ վառեց: Սեղանին
մի հալացք գցելը բավական էր, վոր հասկանար յեղելու-
թիւնը: Գծագրերն անհայտացել էյին, նրանց հետ մի-
ասին անհայտացել էր նաև զինվորագրողի թերթը: Սար-
սափը պատեց Պապենին: Նա չէր կարողանում իր մրտ-
քերը հավաքել: Միայն մի բան պարզ հասկանում էր: Հու-
կըն է գողացել: Ֆրանսուային ճորտութիւնն է սպասում:
Նա պիտի ազատի իր վորդուն:

Կաշկանդված գրութիւնից նրան հանեց չարդախի
փոքրիկ լուսամուտից ներս ընկած արևի առաջին ճառա-
գայթը: Պապենը ցնցվեց ու վախեցած իր շուրջը նայեց:
Կարծես առաջին անգամն էր տեսնում իր խցիկը: Մտա-
հոգված՝ շտապ քրքրեց սեղանի տակ թափված հնոտիքը:
Հանեց ափսոսելից իր հին լմկված պարիկը, վորը հագիւմ էր
նստում նրա գլխի գզգզված մազերի վրա: Պարիկի փոշոտ
գանգուրները ծերուկի ալեվոր մազափնջերի հետ խառ-
նվելով, խալտաբղետ մի բաշ գոյացրին:

Պապենը վերարկուն իր վրա գցեց ու դուրս յեկաւ
փողոց: Նա քայլում էր հաստատուն և համարձակ, ինչպես
վաղուց նա չէր քայլել: Կուրծքն ուղղեց և գլուխը հպարտ
բարձրացրեց:

Չելսիի նեղ փողոցները համարյա բոլորովին դատարկ
էյին: Տների վերի հարկերը կախված էյին յելուստներով
և յերկինքը հազիւ էր յերևում տների նեղ արանքից:
Հազվադեպ անցորդները, տարօրինակ ծերուկին տեսնելով,
զարմացած հետ էյին նայում:

Մեծ փողոցները սկսում էյին աշխուժանալ: Մարդիկ
վոչ միայն բերանբաց հետ էյին նայում Պապենին, այլև
հետեւում էյին նրան: Ծիծաղելով քննադատում էյին նրա

խղճուկ հագուստն ու արտաքինը: Մի ինչ-վոր աժդահա
փորձեց նույնիսկ ծերունու պարիկից քաշել:

Պապենը շարունակում էր գնալ, կարծես, մենակ լի-
ներ փողոցում: Նա գնում էր ուղիղ Բուկենհեյմի պալա-
տի ճանապարհով: Վերջապես փողոցների խճճվածքից նա
դուրս յեկաւ պալատի հրապարակը: Մարդիկ ապշած կանգ
առան ու սպասում էյին, թե ինչ է լինելու:

Ծերունին ափսոսաբար քայլում, կարծես պա-
լատի բարձր դարպասը պիտի բացվեր նրա առաջ: Բայց
հանկարծ նրա կրծքին զնգոցով խաչաձև վեցին գվարդիա-
կանների գեղարգները:

— Հեռացրեք զենքը, լես թագուհու մոտ եմ գնում,
նա ինձ պիտի վերադարձնի գծագրերս, առանց այդ լես
չեմ կարող կառուցել իմ վորդի Ֆրանսուային:

Մոտ վազող բացբերանների մեջ ծիծաղ բարձրացաւ
ու կատակներ հնչեցին:

— Ծեր խեղկատակը զոռով բանտն է ուղում ընկնել:
Բնակարան չունի: Վզակոթին տվեք և ամեն ինչ կվերջանա:

Պապենին շրջապատող վոստիկանները տեսան, վոր
խեղազարի հետ գործ ունեն, կռնատակերից բռնեցին նը-
րան ու քաշ տալով հեռացրին պալատից: Ամբոխը բարձր
հռուում էր: Մեկը բարձրացրել էր ծերուկի գլխից ընկած
պարիկը և փայտի վրա ցցած ճոճում էր: Ամբոխի միջից
կամավորներն ոգնում էյին վոստիկաններին, հետևից աքա-
ցիներ տալով Պապենին:

Վոստիկանները հանկարծ կանգ առան: Պապենն էլ
չէր զիմադրում ու կախ էր ընկել նրանց թևերից: Նրանք
գետնի վրա դրին Պապենին: Գլուխը հետ ընկաւ, աչքերն
անշարժ էյին ու լայն բացված:

— Սառկեց, ինչ է,— հարցրեց սերժանտը: Այժմ նա
իրեն համար տղա կպատրաստի այն գծագրերով, վոր կըս-
տանա տեր-աստծուց:

Ամբոխը հռնաց:

Վոստիկանները քաշ տվին դիակը:

Վոստիկանական մասում հերթապահ կոնստեբլը¹⁾ խուզարկեց բերված դիակի գրպանները ու մի մեծ, մաշված թղթապանակ հանեց:

Թվերով ու ֆորմուլաներով գրոտած թղթերի մեջ տրորված նամակներ գտան անհայտ մարդկանց անուններով ստորագրված՝ Հյուլզենս, Լայբնից, Բոյլ: Նամակների մեծ մասը վոստիկաններին անհայտ լեզուներով էյին գրված: Կոնստեբլը գրագրին կանչեց և սկսեց թելադրել:

— Ապա գրիր. «Մալխի տասին, հազար յոթհարյուր տասնչորս թվին, Լոնդոն քաղաքի Վեստմինստեր մասում նորին մեծության ամենավոդորմած թագուհի Աննայի վոստիկանական աստիճանավորների կողմից բերվեց մի անհայտ թափառականի դիակ, վորը խուզարկելիս հայտնաբերված է»...

Կոնստեբլին խանգարեցին: Վոստիկանական մասի դռան մոտ աղմուկ ու իրարանցում եր: Յերկու հսկա նավաստիներ միանամուռ աքացիներ ու ծնկների հարվածներ տալով մի մարդ էյին քաշ տալիս: Ավագ նավաստին ներս վազեց պահակատնակը:

— Ե՛յ, կոնստեբլ, մի վոտնակոճդ²⁾ տուր: Այս խընդուտ լակոտը ժանտաքիսի նման կծոտում է: Ծախվել է թագուհուն, իսկ այժմ հրաժարվում է:

Ներս հրեցին Փրանսուային: Բաճկոնի մնացորդներով հագիվ ծածկված նրա փոքրիկ մարմինն ուժասպառ ընկավ հատակի վրա: Նեղ կուրծքը թափով բարձրանում եր: Կարծես զառանցանքի մեջ պատանին բարձրացավ ու սողալով մոտեցավ կոնստեբլին:

— Այդ սխալ է: Ազատեցեք ինձ: Թող տանեն ինձ հայրեկիս մոտ: Դուք կտեսնեք, վոր չես իսկապես հուշա-

¹⁾ Անգլիական վոստիկան:

²⁾ Կալանավորների վոտներին, ինչպես և վզերին եյին հազցընում:

կավոր գիտնականի վորդին եմ:

Կոնստեբլը ծիծաղելով հեռ հրեց պատանուն:

— Այ, հիմա թագավորական ոճիքը կփորձես, կդադարես հիմարություններ դուրս տալուց:

Վոստիկանի հարվածն այնքան ուժեղ եր, վոր Փրանսուան ընկավ: Գլուխը քարե հատակին կպավ: Արյունը հոսեց կեղտոտ սալաքարերի վրա:

— Ահա մեկն էր,— զայրացած ասաց կոնստեբլը:— Ստուգիր նրան, Զիմ:

Փոքրիկ վոստիկան Զիմը կիսաթուրը հանեց ու Փրանսուայի կողքը խեթեց: Պատանին ցնցվեց: Կոնստեբլը հռհռաց:

— Նայիր, գործում է: Ապա մի անգամ ել խուտուտ արա: Զիմը հաճույական քրքշոցով սկսեց ծակծկել նրա կոնատակը, մինչև վոր պատանին աչքերը բացեց:

— Վեր կաց, լակոտ,— ասաց ավագ նավաստին: Քեզ հետ այստեղ գիշերելու չենք հո:

Ուղեկցորդներն աքացիներով ոգնեցին Փրանսուային բարձրանալու: Յերը նրա արյունոտ գլխին կաղապար հագցրին, նա բուժ հառաչանք արձակեց ու հագիվ լսելի շըշընջաց:

Տարեք ինձ հորս մոտ:

Վոստիկանները նորից հռհռացին: Կոնստեբլը մութ անկյունը հրեց պատանուն, վորտեղ դիակն էր դրված և ընկերներին աչքով նշան անելով ասաց.

— Ահա քեզ ամենահարմար հայրիկ:

Փրանսուայի առաջ պառկած եր հայրը: Ապակյա հագին աչքերն անմիտ սարսափով հառած էյին պատանու դեմքին: Քարացած շրթունքները բացվել՝ մերկացրել էյին ատամները:

Ֆրանսուան ծունկ չոքեց: Մանր կաղապարը դեմ եր
ընկնում դիակի կրծքին և խանգարում եր տղային, վոր
իջ դեմքը մոտեցնի հոր դեմքին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆ I

1. Վորտեղ և ինչ եր սովորում հերոսը	9
2. Հերոսի առաջին քայլերը գոլորշու ույժն ուսումնասի- րելու բնագավառում	18
3. Հերոսը մեկնում է Փարիզ	27
4. Գեներալի հետ ծանոթութունն ոգուտ է բերում	33
5. Թե ինչպես բժիշկը դառնում է ֆիզիկոս և առաջա- դիմում է նոր ասպարեզում	41
6. Անսպասելի հիասթափություն և նոր գաղափարներ	47
7. Թե ինչ հետևանք ունեցավ հերոսի կարճատև բա- ցակալությունը	58
8. Կարդինալի խրատական զրույցները կրոնի և գիտու- թյան մասին	67
9. Հերոսը կուսակրոնների լարած թակարդն է ընկնում	74
10. Յեզվիտական համբերության բաժակի վերջին կաթիլը	80
11. Թե ինչպես խնդիր ներկայացվեց թագավորին և ինչ հետևանք ունեցավ այդ	86

ՄԱՍՆ II

1. Նոր հայրենիքում	89
2. Յերրորդ հայրենիքն առաջին յերկուսից լավ չեք	94
3. Դարձյալ նոր հայրենիք	100
4. Նախագծերը հաջորդում են իրար	108
5. Մնաս բարև, Գերմանիա	114
6. Արտասովոր նավը	119
7. Մի զարհո ընկի գործ	124
8. Վերջին մերժումը	128
9. «Կանեփի հյուրանոցը»	131
10. Հուկի առաջարկը	134
11. Հայր ու վորդի դրամ են հայթհայթում	137
12. Հերոսի վախճանը	141



Պատ. Խմբագիր՝ Դր. Կուլոդյան
Լեզվական խմբագիր՝ Նիկ. Տեք-Մանվելյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրել՝ Ա. Արզաբանյան
Կոնտրոլ սրբագրել՝ Յե. Տ.-Մինասյան

Գլավիտի լիազոր՝ Վ. 2046 Հրատ. № 4497

Պատվեր 158. Տիրաժ 4000.

Թուղթ 62×94. Տպագր. 9¹/₂ մամ.

Մեկ մամ. 24,280 նշան.

Հանձնված է արտագրության 10 փետրվարի 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 7 հունվարի

1939 թ.

Պետհրատի I տպարան, Յերեվան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0147687

ԳԻՆԸ 2 Ռ.
ԿԱԶՄԸ 50 Կ.

16632

Н. ШПАНОВ
История одного великого
неудачника
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.